


ՀԱՅԿ ՏԵՐ-ԱԽՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ
755
ՀԵՄԵԹՈՅ

ՅԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱՏՎԵՐԱԶԱՐԴ

ՄԱԿԱՐԻ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ժողովրդի ընթերցանութեալ և դպրոցների համար

9147-925
S-37

ԳՐԱԴԱՐԱՆ
Տպոգրաֆիա - ПРОГРЕСС -
Եվալյոնունք 7.



ՀԱՅԿ ՏԵՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

05 OCT 2011
947.325

16088

S-37

ՀԱՄԱՓՈՏ

ԱՅՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ձ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

1006
29387

ՍԿՐԻՑ ՄԻՆՉԵԿ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Բարնփոխած և ընդարձակած)

Ժողովրդի ընթերցանութեան եւ դպրոցների համար



Թ. Բ. Ժ. Խ. Ա.

Տպարան «ՊՐՕԳՐԵՍ» | Типография «ПРОГРЕССЪ»
Вельяминовская 7.

1909

14 SEP 2013

ՏԵՐԵՎԱՐ

ՄԱՅԻՍԻ ՑՈՅԸ

ԳՐԱՄ ՊՐԵՄԻ

ՀԱՅՈ ՊԵՐ ԱՇԽԱԴ ՏԵՐԵՎԱՐ

ՏԱՐԱՆԱՑՑ

(Տախանքարմ և Տախաթեղահանու)

ՀԱՅՈ ԱՅԱԽԱՋՅՈՒ Յ ԽԱՅԻԽԱԽՈՎՈՅ Յ ԽԱՅՈ ԱՅԱԽԱՋՅՈՒ

Ա Բ 1 3 4 5 6

ՀԱՅՈ ԱՅԱԽԱՋՅՈՒ Յ ԽԱՅԻԽԱԽՈՎՈՅ Յ ԽԱՅՈ ԱՅԱԽԱՋՅՈՒ

2001

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՐՉԱՆՆԵՐԸ

Նախապատմական կեանք, Հայերի ծագումը
եւ Նախական Հայաստան:

Ա. ՀԱՅԿԱԶՈՒԻՆԻՔ.

1. Տանուտէրական նահապետութիւն՝ Հայկ-
Արամ:
2. Զինուորական նահապետութիւն՝ Արամ—
Պարոյր:
3. Թագաւորութիւն՝ Պարոյր—Վահէ:
4. Անիշխանութիւն:
Բ. ԱՐՇԱԿՈՒԻՆԻՔ.

1. Ազատ թագաւորութիւն՝ Վաղարշակ—Ար-
գար:
2. Հարկատու թագաւորութիւն՝ Արգար-Ար-
տաշէս Գ.:

Գ. ՄԱՐԶՊԱՆՆԵՐ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ:

Դ. ԲԱԴՐԱՏՈՒԻՆԻՔ՝ կիսանկախ:

Ե. ՌՈՒԲԻՆԵԱՆՔ ԵՒ ԼՈՒՍԻՆԵԱՆՔ.

1. Իշխանութիւն՝ Ռուբէն—Լոռն Բ.
2. Թագաւորութիւն՝ Լոռն—Կոստանդին Գ.
3. Լատինահայ թագաւորներ:

Զ. ԱՆԻՇԽԱԿՈՒԹԻՒՆ:

ՅԱՇԽԱԶԴԻՑ ՎԱՐԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐ

1. Հայկազունիք.—Եօթը գլխանի վիշապ:
2. Արշակունիք. } Մի գլխանի արծիւ թևատա-
3. Բագրատունիք. } բած (կտուցում օձ բռնած):
4. Տրդատ.— Գառն խաչանիշ դրօշակով:
5. Ռուգինեանք. } Խաչով բաժանուած երկու ա-
6. Լուսինեանք. } ոփւծ, վրան թագ:
7. Հայկական } 1833 թ. 27-ին փետրուարի
նահանգը 1828 թ. } հաստատուեց Ռուս կառա-
վարութիւնից:

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՍՆՔ
ՊԱՏՄՈՒ

Մարզու միշտ այսպէս չի ապրել, ինչ-
թիւն պէս որ այսօր, այլ հազարաւոր տարի-
ներ առաջ բոլորովին այլ կեանք է վա-
րել և գեռ այսօր էլ կան ազգեր, ո-
րոնք իրենց նիստ ու կացով շատ են նմանւում
նախնի մարդուն:
Մենք հին մարդ-
կանց յաջորդներս
սկսում ենք ու-
սումնասիրել, թէ
ինչպէս է ապրել
մարդը սկզբնե-
քում երբ նա ե-
րևան է եկել եր-
կրագնդի վրայ և
տեսնում ենք, որ
նա սկզբում եղել
է վայրենի, ան-
գարգացած և ժա-
մանակի ընթաց-
քում նա կարողա-
ցել է կամաց-կա-
մաց յառաջադի-
մել, գիւտեր է ա-
րել, շատ բանին
իսքն է յարմարուել, շատ բան իրեն է յարմա-



ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐԴԾ
(ըստ Փրանսիացի նկարչի).

բեցրել և այդպիսով առաջ է եկել ներկայ յառաջադիմած ու զարգացած կեանքը, որ դեռ էլ առելի առաջ կերթայ և կդայ մի օր, երբ մեզ կդասեն կիսազարգացածների շարքը:

Մարդու կեանքի, յառաջադիմութեան ու կուլտուրական զարգացման պատմութիւնը կոչւմ է մարդկութեան պատմութիւն և բաժանուած




(Նկար № 1.)

է երկու շրջանի. ա). Նախապատմական, ոչ բի մասին գրաւոր պատմութիւն չկայ, բայց գիտնականները տեսնելով այդ շրջանի գէնքերը, գործիքները, ամանները, որոնք գտնուած են պեղումների ժամանակ, կարողացել են նկարագրել նրանց կեանքը. վերջապէս գտել են հին գերեզմաններ, անձաւններ մարդկային կմախքներով. բ). պատմական, երբ մարդիկ գիր են գտնուած, գրի առնուած տեսածն ու լսածը, պատահածն ու

եղածը. այդ գրքերը մնալով հասել են մեզ և ուսում առած մարդիկ նրանցից կազմել են պատմութիւն և կամ թէ հին մարդիկ քարերի, աղիւսների, պատերի, ժայռերի վրայ գրել ու նկարել են իրենց ժամանակի անցքերը, թագաւորն իր յաղթութիւններն է նկարագրել և կամ թէ արձաններ կանգնել, որոնք որպէս կենդանի վրականներ, դեռ այսօր էլ կանգուն են:

Այն երկրագունդը, որի վրայ մենք ենք բնակւում, միշտ այսպէս չի եղել: Այստեղ, որտեղ այսօր ծովեր ու գետեր կան, գիտերկիր նականների կարծիքով մի ժամանակ ցամաք երկիրներ կարող էին լինել, կամ թէ ներկայ ցամաքային երկիրներից մի քանիսը ծովով կալող էին ծածկուած լինել և այդ կարծիքը ճշտուած է, միայն երկիրը կամ մաս-մաս փոփոխուել է շնորհիւ երկրաշարժի կամ ջրհեղեղի, գուցէ և հրաբխային գործողութիւնից և այդ յեղաշրջման ժամանակ ազգեր ու երկիրներ են ոչնչացել, ծածկւել հողի տակ, որովհետեւ շատ տեղերում մարդկանց, կենդանիների, ձկների կմախքներ են գտնուած, մինչև անդամ գործիքներ: Գիտնականների ամելով, մարդկութիւնը ներկայումս բնակւում է մի մեծ յեղաշրջումից և փոփոխութիւնից յետոյ առաջացած մակերեսոյթի վրայ: Շատ հին ժամանակ երկրագնդի վրայ ապրել են հակայ կենդանիներ՝ մամոնտ, հսկայ փիղ, հսկայ եղջերու, հսկայ որնգեղջիւր և այլն, որոնք այլևս չկան և որիէ պա-

տահարից ոչնչանալով վերջացել են, իսկ յետոյ առաջացողները ներկայումս գոյութիւն ունեցող տեսակներն են:



(նկար № 2)

Սկզբում մարդս ոչինչ չունէր, նա արևակա-
զատ թափառում էր որտեղ և կամե-
րԱՆ նար և որտեղ որ մութը վրայ էր հաս-
նում, այնտեղ էլ գիշերում էր, միայն
թշնամուց՝ զաղանից պաշտպանուելու համար նա
գիշերում էր քարանձաւում, ծառի վրայ, փոսի
մէջ և յաճախ փաթաթում էր չոր տերեների
մէջ։ Մարդուս ամենահին բնակարանը քարան-
ձաւն է (նկար № 2):

Մինչև այսօր բազմաթիւ քարանձաւներ են
գտնուած մարդկանց ու կենդանիների կմախքով. քարանձաւներից շատերը լցուած են զանազան
մասցրդներով՝ եղջիւրներով, սմբակներով և կամ
թէ այս ու այնտեղ ոսկորներ են ածած, իսկ
մուտքերի մօտ էլ վառարանների հետքեր կան։ Քարանձաւներն ուշ ժամանակներում գերեզմա-

նատեղեր են եղել (նկար № 2)։ Քարանձաւում
ապրող մարդիկ կոչւում են «Քարանձաւի մար-
դիկ»։ Մարդս աւելի հմտացել է կեանքին և ժա-



(նկար № 3)

մանակի ընթացքում միջոցներ է վնասուել իրեն
ամեն տեսակ թշնամիներից ապահովելու. աւելի
ուշ ժամանակներում մարդս մտածում է ջրի
վրայ իրեն համար բնակարաններ շինել, որպէս-
զի կարողանայ պաշտպանուել զաղաններից և ծան-
ծաղուտ տեղերում նա ցցերի վրայ բնակարան-
ներ է շինում։

1854 թ. Զուիցերիայի Յիւրիխ քաղաքի մօտ
եղած լճի ծանծաղուտ տեղերից մէկը պիտի ցա-
մաքացնէին և այդպիսով երևան կդար մի ար-
գաւանդ տեղ, որ երկրագործութեան համար շատ
մեծ բարիք է մանաւանդ այնպիսի երկուում, ուր
ազգաբնակութիւնը խիտ է բնակեցրած և հողի

պակասութիւն է զգացւում։ Յամաքացնելիս մարդիկ նկատեցին տղմի մէջ ինչ որ ցցեր, որոնք բաւական խոր ու լաւ ամրացրած էին, բայց մասսամբ կատրառուել էին, մասամբ էլ փտել։ Բանւորները մեծ հետաքրքրութեամբ դիտում էին այնակաղ գտած զանազան իրեղէնները և չգիտէին, թէ ինչպէս և ինչ տեղից պէտք է այնտեղ ընկած լինէին այն բոլորը, ինչպէս օրինակ՝ բրդի պարաները, հին ձեկի թելերի կծիկները, բազմատեսակ գործիքներն ու գէնքերը, ամանեղէնը և մինչեւ անգամ խնճորի ու տանձի կտորները, որոնք մասամբ քարացած էին, մասամբ էլ ածիացած։

Տեղական ուսուցիչներից մէկը լսելով այդ, վերցրեց բանւորների գտած իրերից մի քանիսը և ուղարկեց Յիւրիխի գիտնական ընկերութիւններից մէկը, որտեղից մի գիտնական գնաց տեղն ու տեղը գիտելու ցամաքացրած վայրը և բանից գուրս եկաւ, որ այդտեղ մի ժամանակ եղել են բնակարաններ, ատլրել են մարդիկ և նըրանց բնակարանները շինած են եղել ջրում գտնուած ցցերի վրայ։ Այդ բնակարանները յաձախ կրակի զոհ են դարձել և գուցէ այլպիսի մի պատահարից յետոյ այլևս մարդիկ ջրի վրայ բնակարաններ չեն շինել։ Զվիցերացիք վերականգնեցին ցցէ բնակարանները (նկար № 3)։


Երբ մարդիկ աւելի յառաջադիմեցին և բնակարանի կարիքն աւելի մեծացաւ, սկսեցին արհեստական քարանձաններ փորել, որովհետեւ ե-

ղածները բաւական չէին. յետոյ գերաններից էին աներ շինում, ծածկում էին ծառերի ճիւղերով, տերմեներով, խոտով, ներսից սոււաղում էին, ծըխնելոյզներ էին բաց անում, իսկ շատ ուշ սկսեցին սիւներով ու քարերով տներ շինել, մինչեւ որ բարելացիք սկսեցին աղիւս պատրաստել և աղիւսէ տներ շինել, ինչպէս այդ անում են այժմ բոլոր երկրներում։

Դժուար է ասել թէ մարդս ինչ բանով կերպուիր էր կերպակրում հին ժամանակ, միայն ի հարկէ, նա ուտում էր այն, ինչոր դուրեկան էր և երբէք չէր զգուում, որովհետեւ միշտ կարիքի մէջ էր։ Ամենազլիսաւոր կերպակրուներն էին բոյսեր՝ պատոզները, տերեները, արմտիքը, հատիկները, դոցա հետ միասին ուտում էր նա և ձեռնեղէն, որդեք, զանազան կենդանիների ու գաղանների միսը։

Բայց այս բոյսը նա պատրաստի չէր զըսնում, այլ շարունակ որոնում էր։ Վերջապէս նա նկատեց, որ տարուայ որոշ ժամանակներին այս կամ այնակաղ մի որևէ բոյս է հասնում և սկսեց պարբերաբար չուել այն կողմերը։ Այս տեղափոխութեամբ նա սկսեց դիտել այն պատճառները, որով մի որևէ բոյս, հէնց օրինակ ցորենը, միայն որոշուած վայրում էր բննում և նկատեց, որ հատիկն ընկած տեղը նորն է բննում։ Այսպիսով ինքն էլ գլխի ընկաւ և սկսեց ցանել, որով և սկիզբ առաւ երկարործութիւնը։ Այսքանով էլ չը բաւականացաւ մարդը և նկատելով որ մի քանի բոյ-

սեր առաստ բերք են տալիս, նրանց մշակութեամբ էլ զբաղուեց: Յանուող բոյսերից ամենաառաջինն են՝ բրինձ, կրուել, սիմինդը, մախ, զարի եւ ցորեն:




(Նկար № 4)

Նոյնպէս վարուեց նա և մսեղէնի հետ. ըսկեց կենդանիներ որսալ և մսով կերակրուել, բայց որովհետեւ միսը շատ անդամ աւելանում էր ու փչանում, ուստի դրա առաջն առնելու համար արեի տակ ապօվաստ էր դարձնում և պահում:

Թէ երկրագործութեան և թէ որսորդարէ դար գութեան համար մարդուն գործիքներ ու զէնքեր էին հարկաւոր, մինչդեռ նա միայն փայտից էր օգտում, նրա-

նով էր փորում հողը, որպէսզի արմտիք հաւաքէ և կամ որևէ գաղանից ու կենդանուց պաշտպանուի, միևնոյն ժամանակ երբ կարծը կեղեռնեցող պտուղ էր ուզում ուտել, ատամներն անզօր էին և ստիպուած էր քարի օգնութեանը



(Նկար № 5)

(Նկար № 6)

գիմել զնում էր մի քար, վրան զնում ընկառզը կամ կաղինը և միւս քարով կոտրում և այստեղից նա գտաւ, որ քարը իրեն մեծ ծառայութիւն կարող է մատուցանել և կայծաքարից դանակներ սլատրաստեց (Նկար № 4): Նա այդքանով չբաւականացաւ և շուտով գլխի ընկաւ, որ հասիկները կարելի է աղալ. վերցրեց մի հարթ քար, վրան հատիկներ ածեց ու սկսեց շփել մի ուրիշ քարով և այդպիսով գտաւ երկանաքարեր:



(նկար № 7)


Փոքը առ փոքը
նա պկսեց կատա-
րելաքը ել իր
գործիքները և
շուտով քարէ կա-
ցիններ պատրաս-
տեց (նկար № 5
և 6): Քարի հետ
միասին նա սկը-
սեց օգտուել նաև
ձկների և կենդա-
նիների ոսկընե-
րից: Ահա այստեղ
(նկար № 7) դըր-
ուած են քարէ
դարի նախնական
ժամանակների

գործիքները. վերեկի մասում եղած երկու կողմի
երեք սրածայր նկարները քարէ դանակի, սի-
զակի ծայրերի ու դանակների տեսակներն են
շինուած կայծաքարից, փոքրիկ սրածայրը ոս-
կըէ առեղ է, երկու կանթանմանները ոսկըէ կան-
թեր են ձուկ որսալու համար, մնացեալ երկու-
սից մէկը արջի ատամից է շինուած, միւսը ձիու
ականջի ոսկըից՝ մանեալ շարելու համար:

Քարէ դարը բաւական երկար տևեց, մարդիկ
բաւական ժամանակ միայն քարով կառավարուե-
ցան: Եղել է հին քարային շրջան, երբ գործիքները
կարծր էին, բայց կոպիտ կերպով տաշած, մինչ-

դեռ երբ քարէ դարը անց էր կենում, որովհե-
տեւ մարդիկ հանք էին գտել, կային լաւ հար-
թած ու տաշած գործիքներ, թէպէտ աւելի
փափուկ քարից էին շինուած, այս շրջանն էլ
կոչւում է նոր քարային շրջան:

Մարդը մերկ էր և ճարկաւոր էր
չսգոկից պաշտպանուել, որովհետեւ միշտ տաք
երկրում ապրել չէր կարող և հանգա-
մանքները ստիպում էին նրան անցնել
ցուրտ երկիքները: Նրանք հետզհետէ բազմա-
ցան, հողի կարիքը, հացի խնդիրը նրանց առաջ
էր մղում: Հաւանական է, որ նրանք սկզբում բուշ-
սեղնով էին պահուր վարուած առաջանակ առաջանակ
աըսպարուում, բայց
երբ մարդն սկսեց
որսորդութեամբ ըզ-
բաղուել, սպանած
կենդանու և գագանի
մազեղէնի ու մոր-
թու մէջ էր փա-
թաթւում, որով շատ
անգամ որսի ժա-
մանակ կարողանում
էր խաբել որսի կեն-
դանիներին ու գագաններին ու ողջ-ողջ բոնել:



(նկար № 8)

Սիսուհետեւ մարդս սկսեց բուսեղէնից թաղիքներ
պատրաստել, որի մէջ և փաթաթւում էր, մին-
չե որ գործուածքներ կամ կերպասներ սկսեցին
պատրաստել, որով տուաջացաւ ոստայնանկութեան


արհեստը։ Առաջ ամփեւ շատիկներ էին կարում ու հագնում, յետոյ սկսեցին թեւերով երկար շապիկներ պատրաստել, որից և ներկայումս եղած հագուստն է հնարուել։

Կրակը մարդուս ընկերն է (նկար № 8)։ Յայտնի չէ թէ ինչպէս մարդս գտաւ կրակը, բայց զիտնականները կարծում են, որ կալծակ խիելուց կարող էր հրդեհ ծագել և մարդս օգտուելով այդ հանգամանքից որևէ է միջոցով մշտապէս կըպահէր կըրակը, որպէս զի հարկաւոր դէպքում օգտուէր։ Վերջապէս կայծաքարը տաշելիս կայծեր են առաջանում, որից մօտիկ գտնուող չոր խոտը կարող էր բռնկուել։ Կարելի է նաև աբեթի միջուցով կրակ առաջացնել, ինչպէս որ այդ անում են հայ զիւղացիները գեռ մինչև այսօր։ Սակայն կրակ առաջացնելու ամենասովորական ու հինձեր փայտի շփումն է, որի արագութիւնից կըրակ է գոյանում։ Մարդս երկար ժամանակ այդ միջոցին է զիմել։

Կրակը մարդուն պաշտպանում էր ցրտից և նրան տաք կերակուր էր մատակարարում։ Սկզբում միսը գցում էին կրակի մէջ ու խորովում, յետոյ միխրի մէջ էին թաղում։ ապա կրակի մէջ տափակ քարեր էին դնում ու տաքացնելով՝ միսը դնում վրան որ խորովի, բայց վերջը սկսեցին ամաններով եփել։

Ամեն մի բնակարան ունէր հնոց—վառարան, որտեղ միշտ կրակ կար, իսկ պէտք չեղած ժա-

մանակ կրակը թաղուած էր մոխրի մէջ։ Երբ արդէն հաստրակութիւններ էին կազմուել ու մարդոց մէջ մտել էր հաւատի զաղափարը, կըրակը պահուում էր քրմերի հսկողութեամբ կըռատըներում։




1006
29387

(նկար № 9)

Կրակի զիւտը կատարելագործեց մարդու ձեռարուեստը։

Մարդը ամաններ չունէր և հեղուկնեամսներ ըի համար, օրինակ ջրի համար, գործ էր ածում վրասացած քարեր, խեցիներ, գանգեր, գորշմնիր և խոշոր պատուղների կծեաներ։ Բայց զբանցով անկարելի էր կիրակուր եփել։ Վաղուց արդէն նու կողմներ ու զամբիւղներ էր

հիւառում պտուղներ հաւաքելու համար և նկատելով, որ նրան հեղուկների համար մեծ ամաններ են հարկաւոր, մանաւանդ որ շատ անգամ ջուրը բնակութիւնից հեռու էր լինում, կողովները ներսից կաւով սուաղեց և նրա մէջ հեղուկներ էր պահում: Մարդս փորձեց սուաղած կողովով կերակուր եփել և դրեց կրակի վրայ. կողովն այրուեց և մնաց կաւէ ամանը, որ թըրծուելով՝ ամրացաւ: Այսպիսով մարդս նկատեց,



(Նկար № 10)

որ կրակով կարելի է ամուր ամաններ պատրաստել և այնուհետեւ նա այդ ձեռվ էր ամաններ պատրաստում (Նկար № 9): Հին կաւէ ամաններ են գտնուած, որոնց վրայ պարզ կերպով երևում են կողովների ճիւղերի հետքերը: Երբ արդէն ամանները պատրաստում էին առանց կողովների, այն ժամանակ ամանները դրսից զարդարում էին նկարներով, որ մինչև այսօր գոյութիւն ունենալու մէջ կայ Այստեղ էլլեր առաջ կաւէ կատարելագործած ամանների մի

ժողովածու, որոնք գտնուած են Զվիցերիոյ ցցէ տների գիւղերի տեղերում եղած տղմի մէջ:


Քարից յետոյ գործածութեան մէջ էր ԲՐՈՆԶԵ բրոնզ կոչուած մետաղը, որ ստացեն երկն-ւում է պղնձի ու անաղի խառնուրթի ԴԱՐԵՐ դից: Զվիցերիոյ ցցէ բնակարանների

տղմում գտնուած են ոսկէ, արծաթէ եւ բրոնզէ առարկաններ: Ոսկին ու արծաթը հէնց սկզբից միայն զարդերի համար էին և մարդիկ այդ երկու հանքերը «ազնիւ ու թանկագին» էին համարում: Բրոնզը փոխարինել է քարին, որովհետեւ պղնձն առանձին վերցած շատ փափուկ մետաղ է և նրանից աւելի շուտ ամաններ կարելի է պատրաստել, քան գործիքներ ու զէնքեր, մինչդեռ բրոնզը ամուր է՝ կարծր, գործածութեան համար էլ մասամբ նպատակայարմար և երկար ժամանակ նա ծառայութիւններ մատոյց մարդուն՝ նրանից էին պատրաստում ամաններն ու զէնքերը (Նկար № 11):

Բրոնզից յետոյ մարդիկ գտան երկաթը, որով վերջացաւ բրոնզի գործածութիւնը և կարելի է ասել որ երկաթէ դարը գեռ այսօր էլ շարունակում է, թէպէտ ներկայումս կան աւելի կարծր հանքեր: Երկաթի գիւտից սկսուեց մարդկութեան խկական յառաջադիմութիւնը:

Մարդու գոյութեան առաջին օրից գուշանի յութիւն է ունեցել և շունը, որ մարդենդանի դու հետ շրջում էր ու կերակրում ներ նրա մնացորդներով, բաւականանում

Էր մարդու շպրտած ոսկորով։ Յետոյ մարդը խողին ընտելացրեց, որովհետև նա էլ կերակրելու համար մեծ հոգս չէր պատճառում։ Երբ մարդը բնակարան շինեց իր համար, բնակարանում երեաց մուկը, որին հետեւեց նրա թշնամի կատուն և աս էլ ընտելացաւ։ Որորդութիւնը նրան մի շարք օգնականներ տուեց. մարդը ընկնում էր կենդանիների ու գազանների ետևից և յաճախ նրանց հետևելով գտնում էր նաև նրանց որջերը, հաւաքում էր փոքրերին՝ ձագերին ու բերում իր բնակարանում—պահում—



(Նկար № 11)

մեծացնում ու ընտելացնում։ Այսպիսով նա շուտով այծերի ու ոչխարների հօտեր կաղմեց և շուտով ընտանի կենդանիների շարքն անցան կովը, ծին, ուղտը, եղջերուն և այլն, իսկ գաղանները չընտելացան, որովհետև մսակեր էին, իսկ մարդս ինքը յաճախ ամիսներով մսի երես չէր տեսնում և վերջապէս կենդանիները ոչ այնքան ուտեստի համար էին, որքան որպէս

անտեսութեան օգնականներ։ Կենդանիներին հարկաւոր էր խնամել և մարդիկ ստիպուած էին ձմեռուայ պաշարը հոգալ, բայց որովհետև հօտերի բազմութիւնը նրանց համար դժուարացնում էր պաշարի հաւաքումը, ուստի և մարդս ստիպուած էր տարուայ որոշ եղանակներին խոտաւէտ տեղում ապրել։ Այսպիսով նա խաշնարած էր եւ թափառական կեանք էր վարում։

Մարդիկ սկզբից հետէ ջրերի մօտ ծՈՎԱԴՆԱ- էին բնակւում որպէս զի ջրի պակա- ՑՈՒԹԻՒՆ սութիւն չզգան։ Վաղուց նկատել էին, որ կան առարկաններ, որոնք մնում են ջրի երեսին, բայց և կան առարկա- ներ, որոնք սուզւում են։ Երբ մարդը լողալիս յենում էր լողացող գերանին, նկատում էր որ գերանը չի սուզվում և ահա նա մտածում է օգտառել այդ բանից։ Եթէ նա մի գերան վերցնէր և նրա օգնութեամբ լող տալ սկսէր, դժուար էր, հարկաւոր էր հաւասարակշռութիւն, ուստի նա վերցնում էր մի քանի հատ գերան, կապում էր այնպէս, որ վրան կարող էր նստել ինքը և բաւական ծանր առարկաններ կարող էր տեղաւորել։ Դա կոչւում էր յաստ։ Նա սկզբում պատշաստում էր նաև յենաթի, որով կարողանում էր առաջ մղել, իսկ յետոյ յենաթին ղեկի փոխուեց, որով կարելի էր յաստին ուզած ուղղութիւն տալ։

Լաստը լողում էր, իսկ մարդս նկատում էր, որ քամին խփելով նրան քշում է այն կողմը,

ինչ ուղղութիւն որ բռնել է քամին: Բնական է որ այս բանը մարդու ու շագրութիւնից չէր վրիպիլ և հէնց այդ երեսյթը դրդեց մարդուն առաջաստներ պատրաստել, որով շատ հեշտացաւ ծովագնացութիւնը: Այնուհետև մարդը փորձեց նաւ պատրաստել: Նա վերցնում էր հաստ գերանը և փորելով միջուկը՝ նաւակ էր պատրաստում: Բայց միջուկ փորելը հեշտ բան չէր, ուստի նա կը ակի օգնութեամբ այրում էր միջուկը, յետոյ տաշում էր, որպէս զի հաւասարակշուութիւնը պահպանուի և նրանով էր լողում: Մարդը շուտով զլխի ընկաւ և թի պատրաստեց:

Առագաստները սկզբում ծառերի կեղեներից էին պատրաստում, յետոյ արդէն թաղիքներից ու գործուած կերպաններից:

Զուրն արդէն որպէս բնութեան պահմիջք-ջներից մէկը սկզբից ի վեր կործ էր Ներ ածում, բայց միւնոյն ժամանակ շատ էին ժամանակներում արդէն մարդիկ գործ էին ածում կաթը: Սկզբում կենդանիներին չէին կթում, այլ ուղղակի ծծում էին: Երբ մարդիկ արդէն խաշնաբածութիւն սկսեցին, նրա հետ էլ սկսեցին կթել կենդանիներին:

Կային նաև արհեստական հեղուկներ՝ խըմիջքներ, որոնք մարդկանց արբեցնում էին, բայց նախնի մարդը, չէր կարողանում հասկանալ նրանց հասցրած վասը, որովհետև երբ նայութնած ու թմբած խմում էր, մի տեսակ առոյդ էր դառնում, ոյժեւ վերականգնում էին և

դրան հետեւում էր քունը, որով մարդս կարողանում էր հանգստանալ: Զամազան ժողովուրդներ դեռ ուշ ժամանակներում բազմատեսակ խմիջքներ ունեին, որ պատրաստում էին բոյսերից, բայց որոշ կերպով չի կարելի ասել թէ որ խմիջքն է եղել ախրապետող նախապատմական դարի ընթացքում, միայն յայտնի է, որ մեղրը անյիշտակ ժամանակներից արդէն շատ տարածուած է եղել ամեն տեղ և մարդիկ նըրանից կերպակուներ էին պատրաստում: Բայց մեղրը դիւրամարս չէ և մարդու ստամոքսը վասում է, և մարդիկ ջրի մէջ լուծելով՝ մի տեսակ քաղցր խմիջք էին պատրաստում, որ ժամանակի ընթացքում եփ էր գալիս և ստացւում էր էր մի տեսակ արբեցուցիչ խմիջք: Այդ խմիջքը շատ տարածուած էր նաև ողատմական դարերում:

Միւնոյն եղանակով մարդիկ սովորեցին և զարեցուր պատրաստել, որառաջանում էր ալիւրը ջրի մէջ լուծելուց: Գարեջուրը շատ էր ժողովրդականացած նաև չայտաւանում Քրիստոսից 6—7 դար առաջ և յօյն պատմիչների տեսելով չայտաւանի հարևան աղքերը մեծ քանակութեամբ արտահանում էին իրանց երկիրները:

Երրորդ խմիջքն է գինին, որ ստացւում է խաղողից և զարձեալ սովորական եղանակով, խաղողը քամելով քաղցր խմիջք է ստացւում, որ մի քանի օրուայ ընթացքում նոյնպէս եփ է գալիս և ստացւում է գինի: Ըստին ի հարկէ ա-

ւելի է ներգործում, քան գարեջուրը և հնում
մարդիկ սովորաբար գինին ջրով էին գողծածում:
Բացի այս եղել են և այլ տեսակ խմիչքներ, ու-
շոնց ինչ լինելու մինչև մեզ չի հասել:

Այս բոլորը կատարւում էր միայն նրա
համար, որպէս զի մարդու կարողանալու իր գո-
յութիւնը պահպանել, բայց երբ արդէն նա գո-
տաւ ուտեստ, բնակարան, հագուստ ու կարեսը
գործիքներ, սկսեց կազմակերպուել՝ սկիզբ ա-
ռաւ նրա բուն կուլտուրական հասարակական
կեանքը:

ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Մարդու մեսակ ապրելով չէր կարող իր ա-
գերդաս- որեայ պէտքերը հոգաւ, որովհետեւ ամեն
ՏԱՆ եի գէպքում նրան օգնող ընկեր էր հարկաւոր.
ԸՆՏԱՆԻՔ երկրագործը երկրագործի ընկեր էր դառ-
նում, խաշնարածը խաշնարածի, ձկնորսը
ձկնորսի, որսորդը որսորդի և բերքն ու ձեռք բերածն
էլ բաժանում էին հաւասար չափով: Այստեղից առա-
ջացաւ խմբական կեանքը՝ մարդիկ ապրում էին խըմ-
բուած ու յաճախ ազգակցական կապերով կապուելով
գերդաստաններ էին կազմում:

Նախնի ընտանիքը այն չէր, ինչոր այժմս է, մի-
այն երբ արդէն գերդաստաններն առանձնացան, այդ
մէկ տեսակ խմբակցութիւնը շարունակուեց մինչև այ-
սօր և դեռ այսօր էլ ինչպէս բոլոր արեելեան ազգերի,
այնպէս էլ մեր մէջ կան նախնական ձևով բնակուող
գերդաստաններ:

Սկզբում ամուսնութիւն գոյութիւն չունէր, այլ
մարդիկ բազմակին էին, իսկ կանայք էլ պատկանում
էին ամեն մի մարդու և այդ իսկ պատճառով էլ չկար
եսկական ազգակցութիւն և ընտանիք, մինչև անգամ
քոյր ու եղբօր միջև ամուսնութիւն գոյութիւն ունէր,
որովհետեւ նրանց քոյր եղբայր լինելն էլ որոշ չէր:

Կամաց-կամաց մարդկութիւնն այն համոզման ե-
կաւ, որ ազգակցական ամուսնութիւնը ֆասակար է և
արգելեցին, որից իմացան թէ ոչ ազգակցական ա-
մուսնութիւնից ծնուածներն ուժեղ են և առողջ: Այս
օրէնքը պահպանելու համար սերունդների հաշիւ կար
և այդ հաշիւը մասամբ մնացել է և մեր մէջ, բաւական
է եթէ յիշենք ժողովրդի ասած «օխտ պրաը», որ նը-
շանակում է եօթի սերունդ: Մերունը սկզբում հաշ-
ւում էին մի մօրից առաջացածների հաշուով՝ որդիքը,
թոռները, ծորները, այդ գէպքում մայրը մինչև անգամ
մի տեսակ իրաւունքների տէր էր և ցեղն անգամ
հնագանդում էր նրան: Այս բանը դեռ այսօր էլ գո-
յութիւն ունի շատ ժողովրդների մէջ: Այս գէպքում
կինը աչքի էր ընկնում որպէս ընկեր-աշխատաւոր և
դաշտերն էր մշակում, բայց երբ արդէն տղամարդը
ստիպուած էր որպէս խաշնարած չուել մէկ տեղից
միւսը՝ բնական է որ կինն էլ ստիպուած էր թողնել
դաշտը և չուել մարդու հետ և այդ գէպքում արդէն
տղամարդու իրաւունքները գերազանցութիւն ստացան
և ամուսնանալով մի այլ ցեղից վերցրած կնոջ հետ
կազմում էին առանձին ընտանիք: Նրանց որդիքն ու
թոռները բոլորն էլ հապատակում էին մէկին՝ ընտա-
ների հօրը, որ կոչւում էր նահապետ, իսկ ցեղն էլ
կոչւում էր նահապետական: Ցեղը շուտով բազմանում
էր, ճիշտ է, նրանք ունէին ընդհանուր դաշտեր, ան-
տառներ, ջրամբարներ, բայց գժուար էր մեծ հօտերի
համար արօտատեղիներ գտնել, ուստի և ստիպուած
էին բաժանուել, որովհետեւ անվերջ կոիւներ էին տե-

զի ունենում: Առասարակ բաժանում էին եղբայրները և կազմում առանձին նահապետութիւններ: Եթէ դեռ չքաժանուած ընտանիքի հայր-նահապետը մեռնում էր, ցեղը հպատակում էր անդրանիկ որդուն, որ հօր մահից յետոյ ընդունուում էր որպէս նահապետ:

Վերջին ու ամենաընդունուած ամուսնութիւնը զոյգից կազմուած ընտանիքն էր:


Մարդկութիւնը բազմանալով ամենից շուտ ՍՏՐԿՈՒ- չարագործութիւն սովորեց, որովհետեւ դա թիին և հեշտ էր և ձեռնուու: Նահապետութիւն- ները բազմանում էին, անցնում էր ժամա- նակ և նոր սերունդը մոռանում էր նախնիքների ազ- գակցութիւնը ու աշխատում էին միմեանց գերազան- ցել քաջութեամբ: Նրանք ապրում էին անհաշտ՝ մի ցեղ աշխատում էր ճնշել միւսին և մինչեւ անգամ յազ- թողները յաղթուածի միան էին ուտում. երբ արդէն կեսնքը փոքր ինչ հեշտացաւ, մարդակերութիւնը վեր- ջացաւ: Այժմ նրանք ողջ ողջ բռնում էին յաղթուած- ներին և բերելով իրենց բնակավայրը, ծառայեցնում էին. այդպիսիները կոչում էին ստրուկ:

Մարդկանց խմբական բնակչութիւնը երկու- գիիշ եի սի էր բաժանուում, մի մասը ապրում էր ՔԱՂԱՔ միշտ միւսոյն տեղը, որովհետեւ կապուած էր հողի հետ, ինչպէս օրինակ երկրագործ- ները և կոչուում էր նաստակեաց, իսկ միւս մասը ստի- պուած էր մի տեղից միւսը գնալու, ինչպէս օրինակ խաշնարածները և կոչուում էին թափառաշրջիկ: Մենք նստակեաց ժողովրդին ենք պարտական, որ այսօր այսքան յառաջատիմել ենք: Նրանք ապրելով միշտ միւսոյն տեղը, իրենց համար բնակարաններ էին կա- ռուցանում և այդպիսով հիմնուեցան զիւղեր, որի բնակչութիւնը աշխատում էր իրեն բարեկեցութեան համար միջոցներ որոնել և նրանց մէջ երկում էին

երկրագործներ, երկաթագործներ, կօշկակարներ, սափ- րիչներ և այլն:

Գիւղը հետզհետէ մեծանում էր և փոխում՝ քա- ղաքի, որտեղ արհեստներն աւելի էին զարգանում ու յառաջադիմում: Այսպիսով արդէն կար երկու դասա- կարգ՝ զիւղացի և քաղաքացի, որոնք շարունակ գործ ունէին իրար հետ:

Գիւղում սեփականութիւնը համայնական ՍԵՓԱԿԱՆ էր աշխատում էին նասարակութեան հա- նուիթիին մար, մէկը ցորեն էր մատակարարում, եկ ԱՌԵԽ միւսը հագուստ, երբորդը զէնք ու գործիք ՏՈՒԻ որ և փոփոխում էին, որով սկիզբ առաւ փոխանակութեան առեւտուրը: Փոխա-




(նկար № 12)

նակութեան առևտուրը մկսուեց այն ժամանակ, երբ արդէն մարդիկ մի տեսակ մասնաւոր սեփականատէ- րներ էին գարձել և այլ ևս չէին հպատակում համայ- նական սեփականութեան օրէնքներին:

Առևտուրը կատարուում էր զին ունեցող առար- կս մերով, կըսում էին կամ չափում. այստեղից էլ ու- րոշ մէծութեամբ և կըսով մնապի կտորներ առաջ-

եկան, որով հնարուեց լրամբը: Թրամի ամենահին մետաղներն են, բրոնզ, երկաթ, արծաթ և ոսկի:

Առևտուրը կատարնում էր երկու կերպ: Քաղաքներում կային շուկաներ, գիւղացիք իրենց սերքերից աւելորդ մասը բերում էին քաղաք վաճառելու և քաղաքը լցւում էր. այստեղ առևտուր էին անում համացեղ մարդիկ. այսպիսի առևտուր կոչւում է Ներքին: Շուտով առաջացաւ մի նոր դասակարգ, որոնք վաճառական էին կոչւում. դրանք միջնորդի դեր էին կատարում տանում էին տեղական ապրանքը և փոխանակում այլ երկրի ապրանքի հետ ու բերում իրենց երկիրը: Այսպիսի առևտուրը կոչւում է արտաքին:



(Նկար № 13)

ԺԱՌԱՆ-
ԳԱԿԱՆՈՒ-
ԹԻՒՆ մարդկութեան գաղափա-
րը մարդկութեան վրայ վատ ազգեցու-
թին գործեց. օրինակ՝ երբ մի մարդ
մեռնում էր յաճախ նրա հետ թաղում
էին նաև կնոջը, ստրուկներին ու սե-
փականութիւնը և կամ այրում: Ներկայումս գտնուած
են մի շարք գերեզմաններ (Նկար №№ 12 և 13), որոնք
առանձին բնակարանների են նմանում և այստեղ ոչ

միայն մարդկանց կմախքներն են թաղուած, այլև տանու իրերը՝ ջրամանը, կաթսան և այլն. Ժամանակի ընթացքում, մարդիկ զգացին, որ մարդու հետ թաղելով նրա սեփականութիւնը, զրկում են նրա արենակից յաջորդներին՝ որոշը և որոշեցին ունեցածը թողնել ժառանգներին: Այստեղից առաջացաւ ժառնկականութիւն:

Կեանքի պայմանները փոխեցին մարդկանց. ՊԵՏՈՒ-
ՈՒ ուժեղները ճնշում էին թոյլերին և ցեղերը,
ԹԻՒՆ մանաւանդ նրանք, որոնք աւելի ևս նեղու-
ուած էին շրջապատկներից սկսեցին միա-
նալ, որպէսզի հնարաւորութիւն ունենան դիմադրել
թշնամուն: Յեղերի այս տեսակ միաւորումից առաջա-
ցան ազգեր և կազմեցան պետութիւններ, Այս անգամ
երկիրը դարձաւ բազմացեղ ժողովրդի սեփականու-
թիւն, որոշում էին սահմանները և կառավարում որոշ
օրէնքներով: Նրանց միջև թէպէտ անվերջ պատերազմ-
ներ տեղի ունեին, բայց առևտրական յարաբերու-
թիւնները շարունակում էին և եթէ մի մարդ մի պե-
տութիւնից մտնում էր օտար պետութեան սահման-
ները, նրան ընդունում էին, և պահանջում հպատա-
կուել երկրի օրէնքներին:

Ինչպէս որ ցեղի գլխաւորը իշխանաւոր էր, այն-
պէս էլ պետութեան մէջ կար իշխանաւոր, որ կամ
ժառանգաբար էր ստանում այդ կոչումը և կամ նրան
ժողովուրդն էր ընտրում: Հին մարդիկ առ հասարակ
նայում էին ժառանգի արժանաւորութեան վրայ և
կոյութիւն ունէր ժողովրդական ներկայացուցչութիւն,
որ կոչւում էր Համայնքի Խորհուրդ, իսկ աւելի ուշ
ծերակոյտ, որի անդամները ընտրում էին պատկա-
ռելի ծերերից: Աւշ ժամանակներում իշխող լինելու
ցանկութիւնը ստեղծեց ժողովուրդ կառավարողներ և
նա էր հասնում այդ կոչմանը, ով իր ուժով կարողա-
նում էր կուլ տալ ուրիշի իրաւունքները:

Բայց թէ ի՞նչպէս էր խօսում մարդը, գրան
լեզուի շատ գժուարութեամբ կարելի է պատաս-
խանել, միայն ներկայումս եղած վայրենի-
երի մէջ գեռ ևս կան լեզու չունեցողներ, և խօսում
ն զանազան նշաններով. նոյն էին անում և նախնի
արգիկ: Նրանք սկզբում խօսում էին նշաններով և
առկացնում էին միմեանց: Այդ նշաններից բառեր
ուղացան և բառերից էլ լինուներ:

Քարէ գարեշը ջանում մարդիկ աշխատում էին
Նկարել և գրաւոր լեզուն այնտեղից էլ սկսուեց: Ամե-
նահին զիբը կոչում է զարդարագիր, այսինքն նը-
րանք գիր չունէին, այլ ուզած առարկան նկարում
էին: Բայց այսպիսով չէին կարող ցանկացած միտքն
աբտայայտել, ուստի և պայմանական նշաններ հնա-
րեցին, որով առարկայի գործողութիւնն էին ցոյց տա-
լիս: Մրանից յետոյ վանկագիր հնարեցին, այնպէս
էին գրում, ինչպէս այժմեան բերումները՝ առարկան
կամ բառի որևէ վանկը նկարում էին, մնացածն էլ
վանկի հնչիւնի նշաններով էին ներկայացնում: Վան-
կի հնչիւնային նշանները շատացան և այդ նշաններից
էլ կազմուեց այլրենը: Դրելու համար գործ էին ա-
ծում քարը, մետաղը, կաւէ աղիւնները և այլն:

Վաղ ժամանակներից մարդս շրջապատի
ԿՐՈՆ ստեղծագործութիւնը վերաբրում էր հոգի-
ներին և ամեն մի տեսանելի ու անտեսա-
նելի առարկան աստուածացնում. երկրագործը վախե-
նում էր թէ իրեն բարերարողներից և թէ վասաղնե-
րից և պաշտում էր նրանց, ինչչէս են՝ հող, երկինք,
արև, կայծակ, որոտն և այլն և ի հարկէ մարդս այդ-
պիսով երկու գաղափար էր ճանաչում՝ չար եւ բարի
ու նրանց հաւասարապէս պաշտում:

Նախնի մարդիկ գաղափարական աստուածութիւն չէին ճանաչում, այլ նա առարկայական էր և նրանց ձուլում էին, շինում, նկարում ու վերջը պաշտում,

իսկ հարկաւոր դէպքում շնորհակալութիւն էին յայտնում: Շնորհակալութեան ծէսը կատարում էին որոշ խումբ մարդիկ, նահապեաների օրով նոյն իսկ իրենք նահապեաները, իսկ յետոյ կազմուեց կախարդ մարդ՝ կանց մի գասակարգ, որոնք ըուլրմ էին կոչւում: Ժողովուրդը շնորհակալութիւն մատուցանելիս աստուածութիւններին պատղից, բերքից, կենդանիներից նուէրներ էր բերում, որ քրմերի սեփականութիւն էր գտնում: Ոչ միայն հնում, այլ և նորումս կային և կան ժողովրդներ, որոնք մարդիկ էին զոհաբերում, բայց տիրապետող քաղաքակիրթ ազգերն արգելեցին այդ սովորութիւնը:

ուրաւ միշտ սահմանադրության հառաքեք կուսավաճ քան
չափ այլ հեղափառաք զաջ մասն ուրաքանչյուն համա-
ցածոյ ըստ միու խոց հպատականու վերջուն պատ-
րիսն քայլութ ընտերաք չունե քաջ ցուցանվածաւ

Ո Ւ Ր Ա Ր Տ Ո Ւ

անոյ պայմանաք մե զայք
անուն այս անունուն մասնականադրություն զբանայուք
ու այս բժիշկանութ ու եկա ըստրաք մասնաւունուն
ու այս ու մասնաւունուն պայման ու անուն ու դա
մաք և այլու ու այլուն ու այլու զայքայութ
ըստ անունուն ու այլու ու այլու զայքայութ
ըստ անունուն ու այլու ու այլու զայքայութ

Ա Ղ Բ Ի Խ Ն Ե Ր Հայոց աղգի պատմութիւնը սովո-
րելու համար երկու տեսակ աղբիւր-
ներ կան. ա) հայ մատենագիրներ,
որոնք մինչև հինգերորդ դարը օտար լեզուով
գրի են առել ստոյգ ու անստոյգ պատմութիւնը,
առասպելներն ու աւանդութիւնները և այդ բո-
լորը իրար են խառնել: Ուշ ժամանակներում
հայ պատմիչները աւելի հաւատալի պատմու-
թիւն են տալիս. բ) օտար պատմիչներ ու
բենագիր արձանագրութիւններ, որոնք
աւելի ճշմարտապատռմ են և այս աղբիւրների
հիման վրայ գիտնականները կարողացել են կազ-
մել խսկական պատմութիւն, որ և հաւատալի է
և ճշմարտախօս: Այդ պատմութիւնը հետեւեան է:

Մ Ա Ր Դ Կ Ա Յ Ց Ի Ն Երկրագնդի վրայ ապրող մարդիկ
ՑԵՂԵՐ իրենց բնաւորութեամբ և մանա-
ւանդ արտաքին տեսքով երեք մեծ
խմբի են բաժանւում սպիտակա-
մորթ, դեղնամորթ եւ սեւամորթ: Սկամորթնե-
րին պատկանում են Աֆրիկայի և Աւստրալիայի

բնիկները, դեղնամորթներին՝ Ամերիկայի բնիկ-
ները, Ասիայի արեելեան, հիւսիս-արեելեան և
հարաւ-արեելեան երկիրների բնակչութեան մեծ
մասը: Սպիտակամորթները, որ երբեմն կոչում
են նաև միջերկրային, ապրում են ամեն տեղ,
բայց աւելի եւրոպայում և Ասիայի արևմտեան
ու հարաւ-արևմտեան երկիրներում: Այս ցեղը
աւելի ընդունակ գտնուեց կուլտուրական յառա-
ջաղիմութեան համար, նա էր որ երկիրը լցրեց
ստեղծագործութիւններով և պատմութիւնն էլ
աւելի նրանցով է զբաղւում, քան այլ ցեղերով:
Սպիտակամորթները բաժանւում են երեք գրւ-
խաւոր ճիւղերի՝ ա) արիական կամ հնդելուպա-
կան (յաճախ և հնդգերմանական), որին պատ-
կանում են յոյներ, իտալական ցեղեր, ալբանա-
ցիք, կէլտեր, գերմանացիք, սլաւոններ, ինդուս-
ներ, իրանցիք, ֆափւգիացիք և հայեր. բ) Սիմա-
կան՝ երբայեցիք կամ հրէաներ, ասսուրացիք,
բաբելոնցիք և փիւնիկեցիք, գ) Քամական՝ եգիպ-
տացիք:

Հ Ա Յ Ե Ր Ը պատկանում են հնդե-
Հ Ա Յ Ե Ր Ը պատկան ճիւղին և արդէն պար-
Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի Ք Ը ըովական ճիւղին և արդէն պար-
գուած է, որ նրանք, ինչպէս և բո-
լոր հնդերոպատացիներ, կեանք են
ստացել հնդերոպատացոց որրանում և այդեղից են
եկել այն երկիրը, որ Ուրարտու էր կոչում,
ստեղծել են հայութեան համար սեփական հայ-
րենիք, որ յետոյ Հայաստան կոչուեց:
Հնդերոպատացոց որրանը կամ սկզբնական հայ-

ըենիքը, որտեղ նրանք առաջացան և որտեղից գաղթեցին զանազան երկիրներ, գտնւում էր վօլգա և Դնէպր գետերի հովիտներում և Սև ծովի ափերից սկսած մինչև Կարպատեան լեռները։ Այստեղից ինդուսներն ու իրանցիները կովկասի վրայով Ասիա անցան, մտան Իրան ու Թուրքեատան, իսկ փոխեգիտացիք գաղթեցին Եգիշեան ծովի և կամ Բոսֆորի միջով։ Հայերը որպէս առանձին հսդերոպացի մի ճիւղ՝ գնացին այն ճանապարհով, որ ընտրել էին փոխեգիտացիք, բայց առանձնացած էլ մնացին ու չըխառնուեցան նրանց հետ։

Գիտնականների կարծիքով հայերը չԱՅԵՐԻ հսդերոպացոց հայրենիքից դուրս են ե-ԳԱՂԹԸ կել մօտաւորապէս Քրիստոսից 2500 տարի առաջ, բայց նրանք սկզբում բը-նակութիւն հաստատեցին Թեսալիայում, որտեղ Բէրէյեան լճի ափին հսում եղել է Արմէն ա-նունով քաղաք, որ գտնւում էր Լարիսսա Ձերա քաղաքների միջև, բայց այդ քաղաքի հայերի հիմնած լինելը դեռ ևս հաստատուն հմք չունի, միայն այնքան ճիշտ է, որ հայերը Քրիստոսից մօտ 600 տ. առաջ մեզնից անյայտ պատճառ-ներով թողել են Թեսալիան և անցել Փոքր Ասիա։ Ուրեմն հայերը մօտ 1500 տարի թափառել են զանազան երկիրներում, բայց գլխաւորապէս Բալ-կանեան թերակղզու վրայ։

Փոքր Ասիայից հայերը շարունակեցին իրենց ճանապարհը գէպի արևելք, մինչև որ մօտ 200

տարի գանդադառաջ գնալով Քրիստոսից 670— 660 տարի առաջ հասան Հայաստան, որ այդ ժա-մանակ Ուրարտու էր կոչւում։

Հայոց պատմութեան ամենագլխաւոր ՀԱՅ եի պատմիչ Մովսէս Խորենացին, որ հինգ-ՀԱՅԱՍՏԱՆ երրդ գարում և կամ աւելի ուշ ժամա-նակներում գրի է առել Հայոց պատմու-թիւնը, հայերին հայ կոչուելը վերագրում է Հայկ նա-հապետին, որ եղել է հայոց ազգի նախահայր, բայց գիտնականները հստատում են, որ հայ անունը հնդկ-րոպական ծագումն ունի։ Երբ Քրիստոսից չորս դար ա-ռաջ պարսիկները նուաճեցին Հայոց աշխարհը, այդ օրուանից արդէն երկիրը կոչուեց Հայաստան, (ստան-=երկիր, աշխարհ, կողմի) այսինքն Հայոց երկիր։

Հայաստանը լինացին երկիր է, բայց կլիման ամեն տեղ միատեսակ չէ, որովհետև լինաներն իրենց գրու-թեամբ շատ տեղեր արգելք են հանդիսանում հարա-ւային ու արևելեան ջերմութեան, մինչեւ հիւմիսային ցուրան ազատ մուտք ունի։ Ներքին Հայաստանը կամ աւելի լաւ ասած երկրի միջնավայրը, բուսականու-թեամբ շատ աղքատ է, ահազին տարածութիւններ կան առանց ծառերի, ուր մնաց թէ անտառները, որոնք շատ քիչ են։ Երկրի մէջ աւելի մշակւում են ցորեն, բամբակ, բրինձ, գարի, վուշ, բանջարեղէն և այլն։ Բայց կան վայրեր, որտեղ հսարաւորութիւն չկայ եր-կրագործութեամբ պարապելու, որովհետև լեռների վը-րայ հալւող ձիւնից առաջացած հեղեղներից երկիրը ծածկում է ջրերով, գետերը գուրս են գալիս իրենց ափերից և ողողում ընդարձակ տարածութիւններ։

Դեռ այժմ բուն Հայաստանը այդ գրութեան մէջ է, որովհետև նրա մէջ յառաջադիմութեան ամեն տե-սակ փորձերը խեղդուել են իրենց բնում, իսկ թէ ի՞նչ է եղել նա մեզնից տասնեակ գարեր առաջ անյայտ է

մառմ և շատ քիչ բան գիտենք, մինչև որ գիտնական աշխարհը նորանոր աղբիւրներ գտնելով կպարզէ այդ բոլորը:

Ամենահին Հայաստանը, որ մեզ յայտնի է, դա Եփրատ գետի ափերից սկսած մինչև Կուրի ափերը տարածուող Երկիրն է, մասամբ և Տիգրիսի վերին հիւսիսային ափերը, բայց միայն Արաքսի աւազանը ամբողջովին Հայաստանին է պատկանում: Եղել են ժամանակներ Երր եղել է նաև Փոքր Հայք, որը սահմանակից է Պոնտոսին և Կապատովկիային, իսկ հայկան Կիլիկիան հայերի ձեռքն անցաւ միջին դարերում:

Մօտաւոր սահման գծելու համար կարելի է ասել, որ Հայաստանը գտնուում էր Ալիս գետից մինչև Կուր, Եփրատ, Տիգրիս և մասամբ էլ Ճորոխ գետերի միջև, իսկ Միջագետքում մենք շատ քիչ գործ ենք ունեցել, այս էլ միայն հիւսիսային մասերում:

Շատ ժողովուրդներ ու ցեղեր ՄՈՒՏՔ ձուլուելով հայերին, հայերը բազ- ՈՒՐԱՐՑՈՒ մացան և այդ կատարուել է այն ժամանակ, Երր հայերի առաջնա- դաց խումբը հասաւ նախնի հայրենիքը՝ Ալիս գետից արևելեան կողմը գտնուած Երկիրը, և հէնց այդ Երկիրն է Հայոց պատմութեան մէջ յայտնի Փոքր Հայքը: Հայերն այդ ժամանակ խաշնարած ազգ էին: Այդ Երկրում նրանք են- թարկուեցան Հաթթ կոչուած ժողովրդի ազդեցութեան, որ մի ժամանակ մասամբ կուլտու- րացած մի ժողովուրդ էր և այդ Երկիրների տէր ու տիրական:


Այստեղից հայերը առաջ գնացին և մտան

Ուրարտու կոչուած Երկիրը, որտեղ բազմատե- սակ ցեղեր էին ապրում, բայց գլխաւորապէս Խալլի կոչուած ազգը կամ իւալդիացիք, ու- րոնք խաշնարած էին, ամառն անց էին կացնում լեռների վրայ կամ հովիտներում, իսկ ձմեռը՝ հողի մէջ փորուած խրճիթներում: Արդիւնաբե- րութիւնը շատ ստոր աստիճանի վրայ էր կանգ- նած, բայց Երկրագործութիւնը մեծ աշխայժով յառաջադիմում էր: Նրանց քաղաքները մեծ գիւ- ղերի տպաւորութիւն էին թողնում: Խալդէացիք իրենց անուանում էին Խալդիի ծառանել՝ Խալ- դիի անունից, որ արևի աստուած էր: Ներկայումս կարծում են, որ Խալդէացիք միենոյն Խաղողիք են, իսկ Խաղդիքը Երկիր է և գտնում է Հայ- աստանի հիւսիսային կողմը՝ Սև ծովի ափին:

Յայտնի չէ թէ Հայաստանը ՈՒՐԱՐՑՈՒԻ նախ քան Ուրարտուի թագա- ԱՇԽԱՐՀԱԳԻՐ. որութիւնը ինչ էր ներկայա- ցնում և կամ ինչպէս էր կա- պավարւում, միայն այսքանը յայտնի է, որ մօտ 1270 թ. Ք. առաջ Ասորեստանի Սալմանասար Ա. թագաւորը նուածեց այդ Երկիրը և իրեն հիւսիսային կողմից ապահովեցնելու համար աս- սուրական գաղութներ հիմնեց: Ուրեմն դրանք ասսուրների (ասորեստանցոց) ցեղակիցներ էին, բայց թէ ինչ անուններ էին կրում իրեւ անհա- տական ցեղեր առ այժմ մեզ յայտնի չէ և գուցէ դրանից մէկն են և Խալդէացիք:

Մարդկութեան պատմութիւնն ունի Երկու

շրջան՝ նախապատմական ծև պատմական։ Պատմական շրջանը շատ հին է, առայժմ մենք գիտենք որ դեռ Քրիստոսից 6000 տարի առաջ եղել են երկիրներ, իսկ մօտ 4000 տ. առաջ Հա-



բաւային Միջազգեառում երկու երկիր կար, Շումիր և Ակկադ, գոյութիւն ունէր Բաբելոն քաղաքը, որ Տինտիր-քի էր կոչւում և 2300 թ.

թ. ա. Բաբելոնում եղած թագաւորի անունն անգամ մեղ յայտնի է: Բացի այս մենք գիտենք նաև Փիւնիկէի պատմութիւնը դեռ 2750 թ. Ք. ա., իսկ Ասորեստանի պատմութիւնը 1750 թուից Քր. ա.: Այս բանի հիման վրայ մենք իրաւունք ունենք ասելու, որ Ուրարտուն լինելով հարեան վերև յիշած երկիրներին, բնականապէս պէտք է ունենայ և հին պատմութիւն, սակայն դեռ ևս այդ չի պարզուած և միայն այնքանը գիտենք որ մօտ 1200 թ. Քր. ա. Ուրարտուն արդէն քաղաքակիրթ երկիր էր ճանաչւում։

Ուրարտու անուան տեղ հարեան ազգերը գործ էին ածում նաև Ուշտու, Ուրաշտու և Ուրտու անունները, որ միենոյն Արարատն է և նշանակում է բարձր երկիր (ըստ ասորեստանցոց): Ուրարտուն գտնւում էր Վանայ լճից սկսած մինչև Սևանայ լիճը, Վանայ լճի ամբողջ հիւսիսային աւազանը Ուրարտուի մէջ էր գտնւում, իսկ Ուրարտուի հարաւային մասը մի ժամանակ կոչւում էր նաև Նախիրի և ուշ Ժամանակներում Ուրարտուն առանձին երկիր դարձաւ, իսկ Նախիրին էլ կառավարուեց սեփական թագաւորներով։ Ուրարտուի հարաւ արևմտեան կողմը գտնւում էր Մուսասիր, որ այժմեան Մշոյ նահանգն է։ Ուրարտուին հարեան էին հետևեալ երկիրները. Բիանայ Վանայ ծովից արևմտեան կողմը գտընուող նահանգը Տուապա կամ Տուրուշպա մայրաքաղաքով (Վան, Տոսպ), Մանա կամ Մինի՝ Բիանայի և Ուրմիա լճի միջև գտնուած երկիրը,

Նաիրի, որ ընդարձակ երկիրն էր՝ տարածուած եփրատ և Տիգրիս գետերի վրայ Միջագետքից հիւսիս. Նաիրին սահմանակից էին Կիրսի, Կոտու Խովուշքեա ասսուրական նահանգները. Նաիրից արևմուտք գտնւում էր Միլիդ երկիրը (Մելիտինէ, որ Հայոց նահանգն է) իսկ այժմեան Բարձր Հայքի՝ էրզէրումի նահանգը կոչւում էր Մելիդիս:

Գիտնական աշխարհը նախնական Հայաստան ասելիս ընդունում է հետևեալ երկիրներ՝ Ուրարտու, Մուսափր, Նաիրի, Բիանա, Մանա, Միլիդ և Մելիդիս:

ԱՌԱՋԻՆ ԱՐՃԱԽԱՆՔՆԵՐ	<p>Հարաւային կողմից Ուրարտական նահանգներին սահմանակից էին գլխաւորապէս Ասորեստանցիք, որոնք Քրիստոսից Ժ-ղար առաջ զօրացան և սկսեցին աշխարհակալութեամբ զբաղուել. Առաջին անգամ Հայաստանը յարաբերութիւն է ունեցել Բարձրնի զօրեղ պետութեան հետ, բայց ուշ ժամանակներում, երբ այդ երկիրն արդէն յայտնի էր Ուրարտու անուամբ, գործ ունէր միայն Ասորեստանի հետ. Քրիստոսից երկու հազար տարի առաջ, ասում են գիտնականները, Ուրարտուն աւելի կուլտուրացած երկիր էր, քան այն ժամանակ, երբ հայերը նուաճեցին և հետևապէս յետոյ եղած յառաջադիմութիւնն արդէն հայերի ձեռքովն է եղած:</p>
-----------------------	---

1400 թուականին մօտ առաջին անգամ

Նաիրին ենթարկուեց Ասորեստանի կամ ասսուր-ների արշաւանքին: Յետոյ արդէն Սալմանասար Ա. նուաճեց Միջագետքն և Նաիրին և իր ապահովութեան համար ասսուրական զաղութներ հիմնեց հարաւային Հայաստանում: Այդ ժամանակ Նաիրին բնակեցրած էր հետտիտներով: Այսուհետև ասորեստանցոց Թիգլատ-Պալասար Ա. (1108—1080 թ.) ամբողջ Նաիրին տիրեց, յաղթեց այդ կողմերի դաշնակից իշխաններին, որոնք գաւառների տէր էին և մի տեսակ գաւառապետներ և հաշլում էին մօտ 60, յաղթեց Նրանց և 1200 եղան տարեկան հարկ գրեց, իսկ իշխանների որդոց պատանդ վերցրեց ու այնպէս հեռացաւ:

Բաւական ժամանակ Նաիրին խաղաղ կերպով հպատակուեց ասորեստանցոց, սակայն միենոյն ժամանակ պատրաստութիւն տեսաւ անկախութիւն ձեռք բերելու, որի համար 879—870 թ. Ասորեստանի Ասսուրնազիրպալ թագաւորը Նաիրի արշաւեց: Այդ արշաւանքները մի քանի անգամ կրկնուեցան, նա անցաւ Տիգրիս գետը, նուաճեց այժմեան Սասունը ու Բիթլիս-սու գետի հովիտը և բնակիչներից բերքով հարկ վերցրեց: Միւս կողմից էլ Արքելաքաղաքից մինչև Ուրմիոյ լիճը հասաւ ու ձանապարհին եղած երկիրները նուաճեց:

Ասսուրնազիրպալի յաջորդ Սալմանասար Բ. (860—825 թ.) շա-
837 թ. Քր. ա. բունակեց իր հօր ծրագրներն ի-

րագործել և Ուրարտու արշաւեց։ Ուրարտուում թագաւորում էր Արամէ, որ միացնելով երկում եղած փոքր իշխանութիւնները՝սպառում էր աւելի զօրանալ։ Սալմանասարը 837 թ. Ուրարտուն աւերի մատնեց, մինչև Վանայ ծովը հասաւ, գրաւեց Արգասկուն և վանայ ծովի մօտ իր արձանը կանգնել տուաւ, իսկ Արամէն ստիպուեցաւ երկրի խորքերը նահանջել։

Արամէից յետոյ Ուրարտեան իշտ ԱԱՐԴՈՒԻՌԻ Ա. խանութեան գլուխն անցաւ ինչ որ մօտ 837-825 թ. Լուտիպրինի որդի Սարդուրի Առաջինը։ 833 թ. Ասորեստանի գօրքը մօտեցաւ Արգանիաս (Արածանի) գետի ափերին, որպէս զի Սարդուրիից ետ խլեն Սուխմէ և Դայաենի երկիրները, որոնք գտնւում էին Արգանիաս գետի աջ ափին և Սարդուրին խլել էր նըրանցից։ Յայտնի չէ թէ պատերազմն ինչպէս գերջացաւ, միայն 829 թ. ասորեստանցիք նորից դէպի Ուրարտու արշաւեցին, մտան Մուսասիր, աւերեցին ու կողոպտեցին երկիրը։ Սարդուրի դիմադրեց և 828 թ. Տուսպա (այժմեան Վան) քաղաքն ամրացնելով իր գանն այնտեղ փոխադրեց, իրեն էլ անուանեց արքայից արքայ, Բիանայի թագաւոր եւ Նախրիի իշխան, երկար ժամանակ պատերազմներ մղեց Սալմանասարի դէմ, և հրամայեց իր գործերը արձանագրել ապառաժների վրայ։

Այդ օրուանից ասորեստանցոց ազգեցութիւնը շատ ընկաւ և Ուրարտուի թագաւորները ոչ միայն իրենց երկրի պաշտպանութեամբ էին զբաղուած,

այլև աշխատում էին Միջագետքն ու Ասորիքը (Սիրիա) խլել նրանցից։

Սարդուրիին յաջորդեց Իսպուխնիս, ԻՍՊՈՒԽՆԻՍ որի օրով Ասորեստանում թագամօտ 825 թ. լորում էր Շամշի Շամման Բ.

(825—812), որ իր Մուտարրիսս Ասուր զօրավարին ուղարկեց Նախրի և Իսպուխնիսը ընդհարուեց նրա հետ, բայց ասսուրացիք յաղթեցին, աւերեցին երկիրը և ձիու հարկ դրին Նախրիի բնակիչների վրայ։ Շամշի Շամմանը քիչ յետոյ նորից Նախրի արշաւեց, ախրեց Մանս երկրին ու անցաւ Պարսուա և Միղիա։ Նրա յաջորդը շարունակեց պատերազմները և երեք անգամ Նախրի արշաւեց, իսկ երկու անգամ էլ Մանա, սակայն Ուրարտուին բնաւ չմօտեցաւ, որով այդ երկիրն աւելի զօրեղացաւ։

Իսպուխնիսը դեռ իր կենդանու ՄԻՆՈՒԱՍ թեան ժամանակ իրեն գահակից մօտ 812-780 թ. նշանակեց իր որդի Մինուասին,

որով այդ ժամանակներում եղած շինութիւնները վերագրում են հօրը և որդուն։ Երբ Իսպուխնիսը մեռաւ, Մինուասին գործակից եղաւ իր մայր Թարի-ըրիաշը, որ երկրի ինսամակալուհի էր և Վանի նշանաւոր ջրմուղները շինուած են նրա հրամանով։ Հայ պատմիչներն և առհասարակ առասպելաբաններն այդ բոլոր շինութիւնները վերագրում են Շամիրամ անունով թագուհուն, որ առասպելական անձնաւորութիւն է։

Մինուասի զլխաւոր զործը Նախրին նուաճեն

էր, որի պատճառով Բամման Նիբարին նորից Նաիրի մտաւ, իսկ յետոյ էլ Սալմանսար Գ. (783—773 թ.) վեց անգամ իրար ետևից Ուրարտու արշաւեց, բայց ոչինչ չկարողացաւ անել Մինուասը խիստ կերպով դիմադրեց, առաջացաւ դէպի հիւսիս-արևելք և արևմուտք ու նոր քաքաղաքներ նուածեց, միևնույն ժամանակ Լուհենինի քաղաքը Մինուահիշինի անուանեց:

ԱՐԴԻՒՏԻՄ Ա. Մինուասին յաջորդեց Արգիսմոտ 780-755 թ. տիս Ա., որ ամենից մեծ ջանք գործ դրեց երկրի ու պետութեան սահմանները ընդարձակելու: Սա ժամանակից էր Սալմանասար Գ-ին և Ասսուրիան Գ-ին (773—755 թ.): Այս անգամ ասսուրացիք ստիպուած էին պաշտպանուելու, որովհետեւ Արգիստիս Ա. յարձակողական դիրք էր քոնել. նա նուածեց Փոքր Ասիայի ու Ասորիքի մէկ մասը, մինչև անգամ Ասորեստան արշաւեց սակայն ստիպուած եղաւ ետ նահանջել: Նա նորոգեց Արմաւիր քաղաքը և Արգիշտիշի կոչեց, իսկ Արագածն էլ իր անունով Արգիստիս կոչեց:

Արգիստիսի յաջորդ Սարգուրի ՍԱՐԴՈՒՐԻ Բ. Բ. իր դէպի Ասորիք կատարած մոտ 755-735 թ. արշաւանքով հոգի տուեց այն բոլոր մանր պետութիւններին, որոնք աշխատում էին անջատուել Ասորեստանից: Սարգուրի Բ. մինչև կապադովկիա հասաւ և այդ յաջողութեամբ ոգկորուած մեծ զօրքով Միջագետք արշաւեց ու կումմուխ երկրում ընդ-

հարուեց Թիգլատ-Պալասար Գ. (745—728 թ.) թագաւորի հետ, որը նրան հալածեց մինչև Եփրատ գետի կամուրջը, որտեղ Ուրարտուն ու Ասորեստանը բաժանվում էին: Այստեղ երկու պետերը հաշտուեցան, բայց Սարգուրին դաշնակցելով Փոքր Ասիայի իշխանների հետ, նորից ասորեստանցոց դէմ արշաւեց, բայց 739 թ. Թիգլատ-Պալասարը յաղթեց նրան, Նաիրիի մէկ մասին տիրեց և մտնելով Բիանա՝ պաշարեց Տուսպաբերդը: Տուսպան այդ ժամանակ երկու մասի էր բաժանվում, մէկ մասը շինուած էր հովտում ու շրջապատուած էր դալարազարդ այգիներով ու ամարանոց-ագարակներով, իսկ միւս մասը շինուած էր բարձունքի վրայ սանդուղաձև (տերրաս) ձանապարհներով: Քաղաքի այս վերջին մասը, որ անառիկ բերդ էր, այնքան լաւ էր ամրացած, որ Թիգլատ-Պալասարը համոզուեց թէ վերցնելս անկարելի է, ուստի պաշարուածների աչքի առաջ իր պատկերով արձան կանգնեց, միացը Ուրարտուի հարաւային մասը Նաիրիի հետ և որպէս զի նորից արշաւանքներ տեղի չունենան, սահմաններն ուժեղացրեց ու վերաբարձաւ Ասորեստան:

722 թ. Ասորեստանում թագաւորուս Ա. բեց Սարգոնը (Սարիուքէն), որ մի կամ ուրսը շարք պատերազմներից յետոյ իր գէնքը: 714 թ. Ուրարտուի դէմ դարձրեց: Ք. ա. Միևնույն ժամանակներում Սարգուրի Բ-ի յաջորդ Բուտաս կամ Ուր-

սա Ա. թագաւորը 23 մանդ իշխանութիւնները նուածելով՝ երկիրն աւելի և ընդարձակել էր արելեան կողմից և մտադրուել էր ազատուել ասորեստանցոց ազգեցութիւնից: Ուրսան միացաւ շրջակայ երկիրների իշխանների հետ, միայն Մանայի իրանզու թագաւորը Սարգոնի դաշնակից լինելով՝ մերժեց Ուրսայի առաջարկը, որի համար Ուրսան ապստամբեցրեց Մանայի բնակիչներին իրանզուի դէմ, իսկ Ուրսայի դաշնակից Զիքառաթուի թագաւորը Մանայի երկու քաղաքները գրաւեց: Սարգոնը դաշնակցին օգնութեան հասաւ, յարձակմամբ ետ խլեց Մանայի Սոււանտաքու և Տուրտուքա քաղաքները և այրեց, իսկ բնակիչներին 719 թ. գերի վարեց Ասորիք: Միենոյն ժամանակ մեծ ապստամբութիւն ծագեց Ասորեստանում և Սարգոնը ստիպուած եղաւ վերապանալ՝ թողնելով Ուրսայի դէմ ծրագրած պատերազմը և 717 թուին միայն նորից եկաւ Ուրսայի դէմ: Մանայի թագաւորը Արանզու մեռած լինելով, նրա յաջորդ Ազա սպանուել էր լեռներում, իսկ նրան յաջորդել էր իր եղբայր Ուլլուսուն, որ ստիպուած եղաւ ոչ միայն հըպատակուել Ուրսային, այլ և 22 ամբութիւններն իրենց պահանորդներով նրան յանձնեց: Սարգոնին այս բանը գուր չեկաւ և յաղթելով նրան յարձակուեց Ուրարտուի վրայ, արքունի տնից 250 հոգու գերեց, 55 պարսպաւոր քաղաքներ վրաւեց և Ասորեստան վերադարձաւ: Այս անգամ էլ Ուրսան օգուտ քաղեց Սարգոնի բացակայութիւ-

նից և Ուլլուսունին ապստամբութեան դրդեց, բայց հէնց որ Սարգոնը նորից արշաւեց, իսկոյն հնազանդեց նրան, միայն քիչ յետոյ Ուրսան Ուլլուսունից հպատակութիւն պահանչեց և նրա որդուն պատանոդ վերցրեց: Այս անգամ Սարգոնը մեծ զօրքով դիմեց Ուրսայի դէմ: Ուրսան փախաւ, իսկ Սարգոնն իր զէնքը Մուսասիրի Ուրզանա թագաւորի դէմ ուղղեց, որովհետև նա չէր ուզում հպատակուել իրեն և Ուրսային էր ապաւինուել, յաղթեց նրան և փախցրեց, առաւ Մուսասիր քաղաքը, բռնեց նրա կընոջը, որդոցն ու դուստրներին, հաւաքեց նրա աննասունները, զանձն ու ստացուածքը և 2100 մարդու գերի վարեց Խալդիա և Պակապարզուաստուածների հետ: Ուրարտուի Ուրսա թագաւորը լսելով այս, մանաւանոդ իր Խալդիա աստուծու գերութիւնը, դաշոյնով ինքնասպան եղաւ և իր իշխանների բազուկների վրայ հոգին աւանդեց:

Սարգոնն իր զէնքը Ուրսայի դաշնակիցների դէմ ուղղեց, կործանեց Միլիտի թագաւորութիւնը, թագաւորին գերեց և մի ասսուրացի կուսակալ նշանակեց 712 թ.:

Ուրսայի յաջորդ Արգիստիս Բ. (714 թ.) նրա եղբայրն էր և նախ Ասորեստանին հպատակութիւն խոստացաւ, իսկ վերջը ապստամբութեան դրօշը պարզեց և Մանային տիրեց: Բայց վերջը նեղուելով Ուրարտուարշաւող Քիմերեաններից Ասորեստանին ապստանուեց:

Արգիստիս Բ-ին յաջորդեց ՈւրբիՄՄԵՐԵԱՆՔ. սա Բ.: Այս ժամանակներից Ուրար-
ՈՒՐՍՍ. Բ.

տուն կամաց - կամաց ընկնում է, կորցնում իր նշանակութիւնը, որովհետև Հայաս-
տան են մտնում Քիմմերեան ցեղերը: Այդ ցե-
ղերն սկզբում ապրում էին Սև ծովի հիւսիսա-
յին ափերում, թափառաշրջիկ կեանք էին վա-
րում և ձիավարժ մարդիկ էին: Սկութացի ցե-
ղերը, որոնք ապրում էին դրանցից արևմուտք և
նոյնպէս ձիավարժ ու թափառաշրջիկ էին, դուրս
վանեցին Քիմմերեաններին իրենց բնակութեան
վայրերից և նրանք ստիպուեցան գաղթել դէպի
հարաւ՝ մտն Փոքր Ասիա: Քիմմերեանք շատ
անգութ գտնուեցան դէպի այն ազգերը, որոնք
ապրում էին նրանց ճանապարհին, աւերեցին եր-
կիրները, աւերի ու կողոպուտի մատնեցին պա-
տահածը: Նրանց մի մասը դէպի Ուրարտու դի-
մեց, իսկ մնացեանները դէպի հարաւ-արևեմուտք
առաջ գնացին: Այդ կատարւում էր Սարգոնի
թագաւորութեան ժամանակներից:

Վերջը դրանք անցան Փոքր Ասիայի խորքերը,
մօտ 650 թ. Սարգէն աւերեցին, պաշարեցին Եփեսոս
քաղաքը և քանդեցին Մագնէսիան, մինչև որ վերջա-
պէս մօտաւորապէս 600 թ. Լիդիացոց Ալիատ Դ. թա-
գաւորը ոչնչացրեց նրանց:

Ուրարտու մտած Քիմմերեաններին *) թէ-
պէտ Ասորեստանցոց թագաւոր Ասուրդանը (684

— 668 թ.) յաղթեց, սակայն նըրանց մի մասն
անցաւ դէպի Միդիա և այսուեղ հաստատուեց:
Ուրարտուի թագաւորն էլ անգօր գտնուեցնը նըրանց
դէմ և երկիրը կրկին աւերուեց: Աւագիւն մասն
Ուրսա Բ-ի յաջորդ Էրմինիայի օրով արդէն
Ուրարտուն սկսեց ողողուել եկ հնդկրոպատշինե-
րով և հայերի առաջինադաց խումբն էլ նըրա օրով
Հայաստան-Ուրարտու մտաւ:

Էրմինիային յաջորդեց Ուրսա Գ.
ՈՒՐՍՍ. Գ. կամ Ռուսա, որ ժամանակակից էր
Ասորեստանի Ասսուրդան և Աս-
սուրբանիպալ (668—626) թագաւորներին: Ուր-
սա Գ, գլխաւորապէս շինարարութեամբ զբաղ-
ուեց, որովհետև Քիմմերեաններն ու հայերը շատ
մեծ վնասներ էին տուել մանաւանդ որ դրանց
վրայ աւելացել էին նաև Սկիւթացիք, որոնց մի
մասը հիւսիսային Հայաստանում մինչև անգամ
դաղութ էր հիմնել:

674 թ. Ուրսան դաշն կապեց Ասուրդանի
հետ և նոքա միասին դիմեցին երկու պետու-
թիւնների սահմաններում գտնուած Խուպրիա
երկրի իշխանի դէմ, որը օգտուելով նորեկ ցե-
ղերից առաջացած խառնակ դրութիւնից, հիւրըն-
կալել էր Ասորեստանի և Ուրարտուի փախստա-
կաններին և աշխատում էր Քիմմերեանների օգ-
նութեամբ հիմնել անկախ սեփական պետութիւն:
Ասսուրդանը գրաւեց այդ գաւառները, իսկ այդ
իշխանը կուտի մէջ սպանուեց: Այս անգամ Ու-
րարտուն և Ասորեստանը միացած էին ընդհա-

*) Կան կարծողներ և մինչև անգամ պնդում են, որ Քիմ-
մերեաններ էին Քամիներ-Կապադովկացիք են, որոնք յայտնի
են նաև հայ պատմագիրներին:

Առուր թշնամու դէմ և Ասսուրդանը բռնելով Ուրարտուի փախստականներին, հրամայեց Ուրասայի մօտ ուղարկել: Միենոյն ժամանակներում Մանա երկրն էլ համարեա հիմնայտակ աւերռեց, որովհետեւ Նրանց Ախսիր թագաւորը ապստամբուել էր: Երկրի աւերը շատ գրգռեց Մանայի ժողովրդին ևնրանք սպանեցին Ախսիրին:

Ուրսային յաջորդեց Սարդու ՍՍՐԴՈՒԻՐԻ Գ. ըի Գ., որ Ուրարտուի վերջին թագաւորն է ճանաչուած: Նա ոչ միայն հաշտ մնաց Ասորեստանցոց հետ, այլ և նրանց գերիշխանութիւնը ընդունելով Ասուրբանիպալին ընծաներ ուղարկեց: Սարդուրին աւելի պալատական կեանքին էր նուիրուած և անհոգ կեանք էր վարում: Այս անդամ Հայերն արդէն սկսում էին կամաց-կամաց երկրին տէր դառնալ, իսկ Միդիա կամ Մարաստանն էլ բաւական զօրեղացել էր: Յայտնի չէ պարզապէս թէ ով կործանեց Ուրարտուի թագաւորութիւնը, միայն այդ պէտք է վերագրել կամ Միդիայոց և կամ Հայերին, որովհետեւ այդ օրից Ուրարտուն հայերի ձեռքին է և նրանք աշխատում էին դուրս վանել խալդիներին: Երկու երեք դար յետոյ արդէն Հայաստանը մաքրուել էր Խալդիներից, որոնք քաշուել էին հիւսիս:

ՀԱՅԿԱԶՈՒԻՆԻՔ

Առաջին անգամ հայոց պատմութիւնը մենք սովորեցինք մեր պատմագիրներից, որոնցից զլխաւորուի

Մովսէս Խորենացին, որ ապրում էր Քրիստոսից հինգ դար յետոյ: Նա գրեց առաջին անգամ հայոց պատմութիւնը և թէպէտ շտատ բան աչքով չէր տեսել, բայց իր գրածների մի մասը լսել է ժողովրդական առասպեկտներից ու աւանդութիւններից, միւս մասը ժողովրդական երգերից, որոնց մէջ հին հայերը անցած ժամանակների քաջերին էին գովարանում, իսկ մնացածը նա քաղել է յունարէն ու ասորերէն հին գրքերից, որոնց մէջ նոյնպէս հայոց քաջերի մասին գրուած է եղել: Խորենացու հայոց պատմութիւնը իր մէջ պարունակում է հայերի աւանդական ծագումից սկսած մինչև Քրիստոսից յետոյ 434 թուականը կատարուած վէպքերի պատմութիւնը:

Մովսէս Խորենացուց առաջ էլ եղել են պատմագիրներ, բայց որովհետեւ դեռևս հայերէն տառեր չեն եղել, նրանք գրել են յունարէն և կամ ասորերէն, դըմացից Ղերութեա Եղենացին գրել է Սրբար թագաւորի պատմութիւնը, Զենոր Գլակն ու Ազաթանգեղուալը կուսաւորչի և Փաւասոս Բիւզանդացին՝ Արշակունի թագաւորների պատմութիւնը:

Մ. Խորենացուց յետոյ մենք շատ պատմագիրներ ենք ունեցել: Նրանք գրել են հայերէն զանազան շրջանների և կամ անձնաւորութիւնների պատմութիւնը. ինչպէս Եղիշէ վարդապետը՝ Վարդանանց պատերազմի պատմութիւնը, Ղազար Փարացին՝ մասամբ Արշակունի թագաւորների և զլխաւորապէս Վահան Մամիկոնեանի քաջագործութիւնների, Կորինը՝ տառերի դիւտի: Այս պատմագիրներից յետոյ հայոց մէջ շատ պատմագիրներ են երեսմ, որոնք զրի են առել տեսածն ու լսածը և նրանց զրուածքներից էլ կազմել են հայոց լիւ պատմութիւնը: Ահա այդ մատենագիրների անունները. Յովհան Մամիկոնեան, Սէրէսոս, Ուբատանէս, Թովմա Արծունի, Ասողիկ, Յովհաննէս Կաթողիկոս, Ղևոնդ, Կիրակոս Գանձակեցի, Մամուէլ Անեցի,

Ատեփանոս Օրբելեան, Վարդան, Մատթէոս Ուռհայեցի,
Արիստակէս Լաստիվերտցի, Գրիգոր Երէց, Սմբատ,
Հեթում, Ներսէս Շնորհալի, Մաղաքիա Արեգայ, Թովմա
Մեծոփեցի, Առաքէլ Դաւրիժեցի, Արրահամ Կաթողի-
կոս, Զաքարիա Մարկաւազ և այլն. Այս բոլոր մատե-
սագիրներից ընդարձակ պատմութիւն գրեց Վենետիկ
Մխիթարեան միաբան Միքայէլ վարդապէտ Զամշեանը,
որից յետոյ արդէն պատմիչների թիւը շատացաւ:
Բացի այս հայոց պատմութեան մասին բազմա-
թիւ գրուածքներ կան օտար լեզուներով:
Հայոց ազգի ծագումը ստուգող
ՀԱՅԿ գիտնականներն ասում են, որ հա-
2300 թ. Ք. ա. յոց ազգը սկզբում զարդացել է
գործել է Վանայ լճի աւազանում.
հայոց աւանդութիւններից հիւսուած պատմու-
թիւնն էլ այդ է ասում: Աւանդութիւնը հետե-
ւեալ կերպով է պատմում հայերի ծագումը: Երբ
նոյ նահապետի սերունդները բազմացան, վախե-
ցան որ նորից ջրհեղեղ կարող է լինել և իրենց
ջնջել, ուստի հաւաքուեցան Բաբելոնի մօտ գլո-
նուած. Անասար դաշտը և սկսեցին մի բարձր
աշտարակ շինել, որի ծայրը մինչև երկինք պի-
տի համեմ, որպէս զի եթէ նորից ջրհեղեղ լի-
նէր, կարող լինէին պատըսպարուել նրա բար-
ձունքին և ազատուել: Աստուած խափանեց մար-
դկանց այդ չարութիւնը և նրանց լեզուները
խառնակեց, որով մէկը միւսին չէր կարողանում
հասկանալ: Այս բանից նրանց մէջ խոռովութիւն
ծագեց և սկսեցին միմեանց հետ կոռւել, ուժեղ
մարդիկ ձնշեցին թոյլերին և բոլորից քաջ գլո-


նուեց Բէլ կամ Ներբովթ անունով մի հսկայ:
նա պահանջեց որ ամենքն իրեն հպատակեն:



ՀԱՅԿ

Հսկաների մէջ նշանաւոր էր նաև Նոյեան
Յարէթի որդու թոռ Հայկը, որ բարձր հասակով,
վեղեցկատեսիլ, ուժեղ բազուկներով ու զէնք
գործածելուն էլ հմուտ մի քաջ մարդ էր: Նա

չուզեց Բէլին հպատակել և իր լեզուով խօսող ու իրեն հպատակող 300 մարդոց իրենց կանանց ու ունեցածով հաւաքեց ուչուեց դէպի հիւսիս՝ այժմեան Վանայ լճի մօտ բնակութիւն հաստատեց։ Այստեղ կային մարդիկ, որոնք ջրհեղեղից յետոյ էին եկել, նրանք էլ Հայկին հպատակուեցան։ Հայկն այստեղ մի գիւղ շինեց Հայկաշէն անունով, իսկ գաւառն էլ Հարք անուանեց, որով ուզում էր յիշեցնել իր ապագայ սերունդներին, թէ ազգի հայրերն այդտեղ են բնակուել։



ՀԱՅԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երբ Բէլը լսեց որ Հայկը հեռացել է, դեսպաններ ուղարկեց նրա մօտ ասելով. «Գնացիր ու ցուրտ երկրում բնակուեցար, թող քո սառը

հպարտութիւնը, եկ հնազանդիր ինձ և բնակուիր իմ երկրում»։ Հայկը խիստ պատասխան տուեց գեսղաններին։ Բարկացաւ Բէլը և վճռեց պատերազմով նուաճել ըմբոստ Հայկին, բազմաթիւ զօրք ժողովեց ու գնաց Հայկի դէմ։ Հայկը վերցրեց իր սակաւաթիւ մարդոց, դուրս եկաւ կոռւելու և իր զինուորներին մի ճառով ոգեռուեց։ Պատերազմի ժամանակ շատ հսկաներ սպանուեցան։ Բէլի մարդիկ չէին կարողանում դիմանալ հայերի կատաղութեանը, իսկ Բէլը վախենալով ուզեց ետ փախչել, որպէս զի իր ետ մնացած զօրքին սպասէ։ Այս տեսնելով Հայկը, յարձակուեց նրա վրայ և իր ահազին նետը խրեց նրա կրծքի մէջ։ Պատերազմից յետոյ Հայկը Բէլի դիակը մի բարձր տեղ թաղել տուեց, որպէս զի իր սերունդը տեսնի նախնիքների քաջութիւնը։

Այս յաղթութիւնից յետոյ Հայկն անդորր կերպով կառավարեց հայերին, պատերազմի տեղը նա Հայր անունով մի քաղաք հիմնեց, գաւառը Հայոց Չոր կոչուեց, իսկ Բէլի ընկած տեղը՝ Գեղեզմանը։ Հայկի անունով մենք Հայ կոչուեցանք, իսկ երկիրը Հայաստան, Հայկն էլ Հայոց ազգի նախահայր,

Հայկի մահից յետոյ նահապետ եղաւ ՀԱՅԿԻ նրա որդի Արմենակը, որ իր Խոռ և ՅԱՅՈՂԻՆԵՐԸ Մանաւազ եղբայրներին թողնելով Հարքում՝ մի խումբ մարդոց հետ հիւսիս-արևելք գնաց ու մի լեռան մօտ գտնուած բաց դաշտում բնակուեց։ Այդ լեռը նրա անունով Արագած կոչուեց, իսկ գաւառը Արագածոտն։ Արմենակի յաջորդ Արամայիս նահապետը

Արմաւիր անունով մի քաղաք շինեց, որ երկար ժամանակ հայ նահապետների կայան եղաւ:

Արամայիսն իր շատակեր ու բազմածին Շարա որդուն մի արգաւանդ երկիր ուղարկեց, որ յետոյ Շիրակ կոչուեց: Շարայի շատակերութիւնն այնքան էր տարածուել, որ ասում էին. «Եթէ որկորդ Շարային է, մեր ամբարները Շիրակին չեն:»

Օրամայիսի Հարք գաւառում՝ բնակուող եղբայրներից առաջացան Մանաւաղեան), Խըլխսունի և Բըշ-նունի նախարարութիւններ:

Արամայիսից յետոյ իշխնել են շատ նահապետներ
և հողի պակասութեան պատճառով ստիպուած են եղել
բնակութեան համար նոր տեղեր որոնել: Նրանք բա-
ժանւում էին մի քանի խմբերի, ունէին առանձին հա-
նապետներ և ապրում էին մէկը միւսից անկախ ու
պարտպում խաշնաբածութեամբ և երկրագործութեամբ:
Խաշնաբած նահապետութիւնները շարունակ տեղափոխ-
ուում էին, իսկ երկրագործ նահապետութիւնները երբ
արգաւանդ ու բարերեր երկիր էին հասնում, կանդ էին
առնում ու բնակութիւն հաստատում: Այսպիսով Հայկի
յաջորդները մինչև Շիրակ հասան: Արամայիսի յաջորդ
Ամասիա որդին մի բարձր լեռան մօտ գանուած դաշ-
տում բնակութիւն հաստատեց, երկու քաղաք հիմնեց
և իր Փառոխ ու Յոլակ որդոց անունով Փառախոտ ու
Յոլտիկիրտ անուանեց, իսկ լեռը նրա անունով Մա-
սիս կոչուեց: Այսպիսով Հայերը գրաւեցին ամբողջ
Այրարատեան գաշտը, իսկ Ամասիայի Գեղամ որդին
Սևանայ ծովի մօտ բնակութիւն հաստատեց, և իր ա-
նունով գաւառը Գեղարքունիք, իսկ ծովը Գեղամայ
ծով անուանեց: Նրա Սիսակ որդին բնակուեց այժմեան
Ղարաբաղում և նրանից առաջացաւ Սիւնեաց նախա-
րարութիւնը: Գեղամը մի քաղաք էլ հիմնեց Գեղամի ա-
նունով, որ յետոյ Գառնի կոչուեց:

Հայկի յաջորդների օրով մինչև Հարմա նա-
հապետի օրերը հայերն և բազմացել էին և հա-
մարեա ամբողջ Հայաստանի տէր էին դարձել,
միայն բաժան-բաժան ապրելով միշտ կարող էին
յաղթուել թշնամիներից, կորցնել դժուարու-
թեամբ ձեռք բերած երկիրները։ Նրանք զգացին
որ իրենց գէնք և միաբանութիւն է հարկաւոր,
որպէսզի կարողանային կռուել իրանց սահման-
ները մտնող թշնամու դէմ, ուստի և սկսեցին



URUU

զինագործութեամբ պարապել և զինուեցան այն զէնքերով, ինչ որ ունէին շրջապատող՝ հարեան աղգերը, այն է՝ պարսպատիք, գիղարդ, նիզակ, աղեղ եւ տէզը, սակը, ծիկ, վաղը և պաշտպանուելու. համար էլ վահան: Միացնելու միտքն էլ իրագործեց Հարմա նահապետի յաջորդ Արամը և

այնուհետև Հայաստանը կառավարուեց զինուուրական նահապետներով:

ԱՐԱՄ Հայաստանը բաղդաւոր էր, որով 1300 թ. Ք. ա. հետև նա որպէս խելացի ու քաջարդ երկրի ապահովութեան համար բոլոր հայ նահապետներին միացրեց, որպէս զի կարողանայ դուրս քշել Հայաստանից թշնամիներին: Թշնամիները շրջակայ ազգերն էին, որոնք տեմնելով որ հայ նահապետները բաժանքաժան են ապրում, ներս էին մտել Հայաստան և նեղում էին հայերին: Արամը միաբանուած նահապետներից 50000-ի չափ զօրք ժողովեց, որոնց կարգաւորեց, գնդերի բաժանեց և սկսեց զենքի վարժել:

Արամից ոկսած հայոց զօրքի մէջ կարգ ու կանոն մտաւ: Սովորաբար նախնի հայոց զօրքը հետևեալ խըմբերի էր բաժանուում: հետևակ, ձիաւոր, աղեղնաւոր, պարսաւոր, սուսերաւոր, որոնք խաղաղ ժամանակ աշատ էին, բացի արքայագնդից, որ նահապետի ու կամ թագաւորի մօտ էր գտնւում, իսկ մատցեալներին կարիք եղած դէպքում հաւաքում էին հայ նախարարները, որոնք իշխում էին գաւառների վրայ և հարկ հաւաքում: Պատերազմի ժամանակ զօրքը երկք մասի էր բաժանուում աջ և անեակ թեւ և միջին գունդ, իսկ ճամապարհ գնալիս կային նաև առաջապահ վերջապահ և կողմնապահ գնդեր. Զինուորները սովորաբար գլխին սաղաւարտ էին ծածկում, հազնում էին լանջապահ, բազգան, զանգապահ, իսկ ձիաւորները գլխից ուրը զրահաւորւում էին:

Զօրքի մէջ կային զանազան անուն կըող վաշտեր

ու զօրագնդեր, որոնցից նշանաւոր էր Ազատազունդ, որ յատկապէս նախարարների որդոցից էր հաւաքում, Այրարատիան գունդ՝ Այրարատեան բնակիչներից, Մատենիլ գունդ՝ անուանի քաջերից և այլ գնդերը, որոնք կամ երկրի անունով էին կոչում և կամ թէ ցեղի, ինչպէս օրինակ Մարզպանութիւն՝ Մարզպետունի ցեղից: Պաշտօնեաներն էլ բուն հայկական անուններով կոչում էին զօրագլուխ կամ միագլխապետ, սպարապետ, հազարապետ, հարիւրապետ, յիսնապետ և տամանապետ, ինչպէս այդ եղել է բոլոր արևելեան պետքի մէջ:

Երբ արդէն Արամը տեսաւ որ իր զօրքը պատրաստ է, նրանց գլուխն անցած դիմեց Մարաց (Մէղացոց) Նիւքար Մաղէս իշխանի դէմ, որ երկու տարի Հայաստանի մէկ մասից հարկ էր վերցնում. յարձակուեց և գերի բոնեց Նիւքարին ու Արմաւրի աշտարակներից մէկի ծայրին ճակատից մեխեց, իսկ պատերազմի ժամանակ տակ տակ տիրած Մարաց երկրի գաւառները Սիւնեաց ցեղին յանձնեց:

Այս յաջողութիւնից յետոյ Արամը յարձակուեց Ասորոց Բարշամ իշխանի վրայ, որովհետև նա Հայաստանի հարաւային մասը ոտի տակ էր տուել: Նրան էլ յաղթեց ու սպանեց:

Այժմ մնում էր արևմտեան թշնամին՝ Պայապիս Քաղեայ իշխանը. Արամը սրան էլ յաղթեց և նա ստիպուած թօղեց իր երկիրը և Միջերկրը լական ծովի կղզիներից մէկը փախաւ: Արամը նուաճեց Պայապիսի երկիրը և Փոքր Հայք անուանեց, և որպէսզի արևմուտքից երեացող թշնա-

միներից ազատ լինի, Մշակ անունով մէկին գործ տուեց ու կուսակալ նշանակեց, բնակիչներին էլ հրամայեց որ հայերէն խօսեն: Մշակը մի քաղաք հիմնեց Մշակ անունով, սակայն տեղայիները չկարողանալով արտասանել՝ Մաժակ էին, ասում (յետոյ կեպարիա):

Մինչ Արամը յաղթութիւններով էր զբա զուած, Ասորեստանի Նինոս թագաւորը զայրացած իր նախահօր Բէլի մահուան համար ուղում էր վրէծը լուծել սակայն վախեցաւ նրա քաջութիւնից, բարեկամացաւ նրա հետ և մարդարտազարդ պասկ ուղարկեց ընծայ:

Արամը 50 տարու չափ իշխեց և երկիրն ազատեց թշնամիներից, այդ պատճառով էլ շատ հոչակուեց: Օտար ազգերը մեղ նրա օրով ճանաչեցին և նրա անունով մեղ Արմեն, իսկ երկիրն էլ Արմենիա կոչեցին:

ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿ Արամին յաջորդեց իր որդի գեղեցկադէմ Արայ, որի մասին եւ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ դած պատմութիւնը առասպելներով լի է: Նրա օրով մեռաւ Նինոս թագաւորը և իշխանութիւնն անցաւ. Շամիրամ անունով կնոջը: Շամիրամը լսելով Արայի գեղեցկութեան մասին, ուզեց ամուսնանալ նրա հետ և առաջարկեց Ասորեստանի թագու, բայց որովհետև Արան ամուսնացած էր Նուարդ անունով հայ իշխանուհու հետ, չուզեց դաւաճանել իր կնոջը և մերժեց Շամիրամի առաջարկը: Շամիրամը մտքումը դրաւ բռնութեամբ ա-

մուսնանալ և մէծ զօրքով Հայաստան արշաւեց: Արան իր պատիւը պաշտպանելու համար դուրս եկաւ պատերազմելու: Թէպէտ Շամիրամը պատուիրել զօրքին չսպանել Արային, բայց հայերը յաղթուեցան և Արան սպանուեց: Թաղուհին ու յաղթուեցան աղջիանային բամբ բռնացան զան և անունը:



ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿ


գեց կենդանացնել Արային ուստի և հրամայեց նու կենդանացնել Արային ուստի և հրամայեց գիւղ մի բարձր տեղ դնել, որպէսզի աստուածակալը մի բարձր տեղ դնել, որպէսզի աստուածակալը լիզեն և կենդանացնեն, սակայն երբ դիակը ները լիզեն և կենդանացնեն,

Նեխել սկսեց, հրամայեց հայերից գաղտնի թաղել։
Արայի անունով Հայաստանի ամենամեծ նա-
հանգը Այրարատ կոչուեց։
Շամիրամը շատ հաւանեց Հայաստանի օդն
ու ջուրը և Բգնունեաց ծովի ափին իրեն հա-
մար ամարանոց շինեց Շամիրամակերտ անունով,
որ յետոյ Վան կոչուեց։ Աւանդութիւնը պատմում
է, որ քաղաքը զարդարուած էր գեղեցիկ շինու-
թիւններով այգիներով ու պարտէզներով։

Փողովուրդը պատմում է, որ մի օր երեխաները
մի ուղունք էին գտել ու հետաքրքրութեամբ զննում
էին. Շամիրամը տեսնելով այդ և վարձատրելով երե-
խաներին՝ վերցնում է նրանց ձեռքից ու սկսում այդ
ուղունքի զօրութեամբ դիւթել և կախարդել, մինչև ան-
գամ շատերին սպանում։ Ամենքն էլ ուզում էին այդ
կախարդութիւնից ազատուել և թագուհու խորհրդա-
տու մի ծերունի Արտամէտ քաղաքում խլում է ու-
ղունքը և փախչում։ Թագուհին ընկնում է նրա հե-
տեից, բայց չի կարողանում հասնել և իր երկար վար-
սից պարաստիք հիւսելով՝ մի ահագին ժայռ դնում է
մէջ և նետում ծերունու ետեից։ Վարսը կարուելով
ժայռի հետ մի փոսի մէջ է ընկնում, իսկ ծերունին
հասնում է Վանայ ծովի ափը և ծովը նետում ուղուն-
քը, որով աշխարհն ազատում է կախարդութիւնից։

Արայի մահը վշտացըրեց հայերին և ասո-
րեստանցոց բոնութիւնից ազատուելու համար
պատերազմի պատրաստուեցան, սակայն խորա-
մանկ թագուհին Արայի կարգոս որդուն Հայաս-
տանի իշխան կարգեց և հայերին էլ խաբեց թէ
աստուածները կենդանացրին Արային ու իր մօտ
է պահում նրան։

Շամիրամն իր որդիներին կոտորել տուեց,
որովհետեւ ապստամբուել էին. կենդանի թողեց
միայն նինուասին, բայց աս էլ ապստամբուեց
և կարգոսը թագուհուն օդնութեան գրնալով կը-
ռուի ժամանակ սպանուեց։



ԿԱՐԴՈՍ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ

Կարգոսի Անուշաւան որդին գերի էր նինուասի
մօտ. Սա փոքր հասակում Արմաւիրի մօտ դանուած

սրբազն անտառին էր նուիրուած և Սօս էլ էր կոչում, հօր մահից յետոյ գերութիւնից ազատուելով իր հօրը յաջորդեց, բայց անորդի մեռաւ. Սովորութեան համաձայն նահապետ եղաւ աւետ Հայկազունին՝ Պարէտը, որից յետոյ մինչև Սկայորդի 27 իշխաններ են եղել, որոնցից նշանաւոր էր Զարմայքը, որ ասորեստանցոց Տևտուամոս թագաւորին օգնութեան գնաց Հէլէնների դէմ ու Տրօյա քաղաքի մօտ քաջութեամբ կոռուելով մեռաւ. Սկայորդի նահապետի օրով Ասորեստանի Աննեքերիմ թագաւորի որդիք Աղբամելիք և Սանասար իրենց հօրը սպանեցին և Հայաստան փախան, Սկայորդին պատուով ընդունեց նորանց և բնակութեան տեղ տուեց: Սրանցից առաջացան Սրծրունի և Գնունի նախարարութիւնները:

ՊԱՐՈՅՐ Սրայի մահից յետոյ Հայաստանն ԹԱԴԱԿԻՐ իր անկախութիւնը կորցնելով Ա-
620 թ. Ք. թ. ա. սորեստանին հպատակուեց: Մա-
րաց կիաքսար Ա. թագաւորը պա-
տերազմ հրատարակելով Ասորեստանի դէմ՝ Հա-
յոց Պարոյր նահապետին օգնութեան կանչեց: Պա-
րոյրը հպատակութեան լուծը թօթափելու հա-
մար Մարաց հետ Ասորեստանի Սարդանապալ
թագաւորի դէմ դիմեց: Ասորեստանցիք յաղ-
թուեցան, մայրաքաղաք Նինուէն կործանեցին
իսկ Սարդանապալը թշնամու ձեռքը ընկնելու
համար իր կանանց հետ այրուեց: Կիաքսարն
այս յաջողութեան համար Պարոյրին թագով պը-
սակեց 620 թուին և նա առաջին հայ թագաւոր
եղաւ:

Պարոյրի յաջորդորդի Հրաչեան բարելա-
ցոց թագաւորի հետ Երուսաղէմն առաւ և Շամ-

բաթ կամ Սմբաթ անունով հրէա իշխանին գե-
րի բերեց Հայաստան, Սրանից առաջացան Բա-
գրատունիք:



ՊԱՐՈՅՐ

Հրաչեայի յաջորդների մասին մինչև Տիգ-
րան ոչինչ չգիտենք, իսկ Տիգրանի հայրը Ե-
րուսանդ թագաւորը քիչ ժամանակ թագաւորե-
լու համար Սակաւակեաց է կոչում: Վեպու միան-

միայն սիրառել ա Հայաստանը Տիգրանով է փառ
Տիգրան Ա. քի հասել և հայոց պատմիչների
520թ. Ք. Ա. ասելով Տիգրան Ա. շատ քաջ ու
խելացի թագաւոր է եղել նա ոչ



Տիգրան Ա.

միայն երկիրը բարեկարգեց, այլ և սահմաններն
դնդարձակեց ու մինչև անդամ Փոքր Ասխայի մի
մասին տիրեց:

Յան Նրա գլխաւոր ճողկը երկրի ամստեսականի
բարելաւումն էր, որի համար ջառ քիչ էին մը
տածել մինչ այդ եղած նահապետներն ու թա-
գաւորները: Տիգրանը հրամայեց ազատ գաղթերը
մշակել, որպէս զի երկրում անմշակ տեղ չմնայ:
Երկրագործութիւնն ու արհեստները յառաջադրի
մեցին, գետերի մէջ նաւագնացութիւն ուսուեց:
Հայերը սկսեցին փոխանակութեան առևտուր
շրջակայ ազգերի հետ և մինչև անդամ Քանա-
նացոց երկիր էլ անցան, որտեղից որդան կար-
միր ու գունաւոր մորթ-կաշի էին բերում, իսկ
Հայաստանից էլ երկաթ, պողպատ և նժոյներ
էին արտահանում: Փոքր ժամանակներում առե-
տուրն այն աստիճան յառաջադիմեց, որ մինչև
անդամ Հայաստան էին գալիս Փիւմիկեցի վա-
ճառականների կարաւանները:

Գլխաւորը նաւային առեաւուրն էր, որ կատար-
ւում էր գետերի վրայ լաստերով: Լաստերը շինում
էին փքած տկերով, որոնց վրայ դրւում էր ուսենու
ճիւղերից գործած յատակը շրջապատուած ճիւղերով և
մորթիներով, այնպէս որ սենեակներին էր նմանւում,
որտեղ և ապրանք էին դարսում և մի քանի էշեր
վերցնելով իրանց հետ ու ջրի հոսանքով գնալով, ապ-
քանքը փոխանակում էին վաճառաշահ քաղաքներում
ու տեղական ապրանքը, տկերն ու մորթիները բարձե-
լով էշերին ջրի ափերով հայրենիք էին վերադառնում:

Տիգրանի օրով զարգացան նաև ոստայնանկու-
թիւնը, զարբնութիւնը և զինագործութիւնը: Հայոց եր-
գիչները իրենց երգերում շարունակ գովում էին ժո-
ղովրդի այդ բարերարին:


Տիգրանը բարեկամացաւ պարսից Կիւրոս

Թագաւորի հետ և զբանով անհանգստութեան մէջ զցեց Մարաց Աժդահակ կամ Աստիքագ թագաւորին, որի համար և Աժդահակը մտածում էր մի կերպ սպանել Տիգրանին: Այս կամկածների ժամանակ Աժդահակը երազ տեսաւ և պատմեց իր խորհրդականներին. «զնացել էի մի անծանօթ երկիր, որ Հայաստան պիտի լինի. այստեղ մի լեռան վրայ մի կին երեք մարդ ծնաւ, որոնցից մէկը առիւծի վրայ արեմուտք արշաւեց, միւսը ձիու վրայ հիւսիս, երրորդն ահազին վիշապի վրայ մեր տէրութեան վրայ յարձակուեց: Այդ ժամանակ ես կուռքերին զոհ էի մատուցանում, իսկ նա ուզեց կուռքերս կործանել և ետ սկսեցի կռտել, բայց սպանուեցի. կարծում եմ որ Տիգրանը պիտի յարձակուի մեզ վրայ»:

Խորհրդականները մեկնեցին, որ յարձակուու ու Տիգրանը պիտի լինի: Աժդահակն այդ բանի առաջն առնելու համար խորամանկութեամբ ամուսնացաւ Տիգրանի Տիգրանուհի քրոջ հետ, որին Տիգրանը մեծ պատուով Աժդահակի մօս դրկեց: Աժդահակը նոյնպէս մեծ հանդիսով ընդունեց և հրամայեց որ ամենքը հնագանդիննը բան: Քիչ ժամանակից յետոյ նա սկսեց գրգռել Տիգրանուհուն, ասելով որ, Տիգրանի կին Զարուհին ուզում է նրա ձեռքիցը Մարաց տիկնութիւնը խլել և թէ Տիգրանն էլ վճռել է իրեն բապանել, որից ազատուելու համար պիտի մի կերպ սպանել Տիգրանին:

Տիգրանուհին երեսանց հաւանութիւն տալով

Աժդահակին, գաղտնի յայտնեց Տիգրանին այդ մասին և ինքն էլ շուտով փախաւ եղօր մօտ:



ԴԱՅ (ՁԵ) արքա ՎԱՀԱԳՆ

Տիգրանը յարձակուեց Աժդահակի վրայ՝ պատերազմում սպանեց նրան և հարուստ աւարով Հայաստան եկաւ իր հետ բերելով թագուհի Անոյշին տասն հազար գերիներով, որոնց Մասսի արեւելեան կողմը ընտակեցրեց: Այս ցեղից առաջա-

ցան Մուրացան նախարարները (Վիշապակունք),
Տիգրանն իր քրոջը Տիգրանակերտը տուեց
բնակուելու համար և գաւառի եկամուտն էլ նը-
րան յատկացրեց:

Սրանից յետոյ Տիգրանն օգնեց պարսից Կիւ-
րոս թագաւորին բարեկացոց դէմ մղած պատե-
րազմում և մի քանի ատրուց յետոյ մեռաւ:

ՎԱՀԱԳՆ ՊՐԴԲՆ՝ Վահագն, որի համար հայ
520 թ. Քր. ա. ժողովրդի երգիչ բանաստեղծները
են հնարել. Վահագն շատ քաջ մարդ էր, մինչեւ
անգամ վիշապների հետ կռուել ու յաղթել էր,
այսպէս որ նրան ոչ միայն հայերն աստուածա-
ցրին, այլ և վրացիք արձան կանգնեցրին և զո-
հերով պաշտում էին: Նա ծնուել էր բոցերից,
բոցէ միրուք ունէր, իսկ աչքերը արեգակներ էին,
Գողթան երգիչները նրա ծնունդը երգում էին՝

«Երկնէր երկն և երկիր, երկնէր և ծիրա-
նի ծով. երկն ՚ի ծովուն ունէր գլարմրիկ եղեգ-
նիկն, ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ ե-
ղեգան փող բոց ելանէր և ի բոցոյն պատանեկիկ
վագէր. նա հուր նէր ունէր, (ապա թէ) բոց ու-
նէր մօրուս և աչկունքն էին արեգակունք»:

Վահագնից էր առաջացել Վահակունեանց նա-
խարարութիւնը:

ՎԱՀԵ ԲՈՂԵՑ Շամիրամակերտ քաղաքը և իր
անունով Վահակունեց, իսկ Վահա-

յաջորդ Վահէի համար պատմում են, որ 4000
հետեակ և 8000 հեծելագոր զօրքով Պարսից Դաշ-
թագաւորին օգնութեան գնաց Ալէքսանդր
Թալեդնացու դէմ: Դարբենը յամթուեց, իսկ վա-
հէն փորձեց դիմադրել, սակայն 331 թ. պատե-
րազմում մպանուեց և նրանով վերջացաւ Հայ-
կազանց հարստութիւնը:

ՅԱՅՋ ՊՐԱՅԱԴՈՐ ՄԱՆԱԿԱՄ ԱՅ ԳԼՅԱՐԴ Ս
ԱՅ ԱՐԺԱԼ Ա ՊԱՅՏ Ա ԱՐԵՎ Ա ՎԵՐ Ս
ԱՅ ԱՄԱՐ Ա ՎԵՐ Ա ՎԵՐ Ս
ԱՅ ԱՄԱՐ Ա ՎԵՐ Ա ՎԵՐ Ս
ԱՆԻՇԱ ՀԱՅԱՍՏԱՆ

331 թ. սկսած Հայոց պատմիչները ընդու-
նում են, որ Հայաստանի թագաւորութիւնը վեր-
ջացել է, բայց օտար պատմիչների ասածներին
նայելով Հայաստանն ուրիշ կերպ է կառավա-
րուել:

Հայերը տիրեցին Ուրարտուին,
ՍԿԻՒԹԱՑԻՔ բայց երկիրը կարգի չբերած հիւ-
չԱՅԱՍՏԱՆՈՒՄ սիսային երկիրներից Հայաստան
մտան Ալիւթացիք: Այդ ժամանակ Ասորեսանի-
պալ թագաւորը ստիպուեց հայերի փոխարէն կը-
պալ մղել, որովհետո վախենում էր, որ նրանք
կարող էին մտնել Ասորեստան: Նա յաղթելով
Ալիւթացիներին, դուրս քշեց երկրի սահմաննե-
րից: Բայց նրանք 20 տարի յետոյ նորից սկսե-
ցին առաջ շարժուել և 635 թ. մտան Հայաս-
տան: Այս անգամ Ասորեստանը ուժապառ էր
եղել և Մէղացոց Կիաքսար թագաւորը զօրանա-

լով պաշարել էր Նինուէ քաղաքը, բայց վախե-
նալով որ սկիւթացիք կարող են մտնել նաև իր
երկիրը, դուրս եկաւ պատերազմելու և թէպէտ
սկզբում յաղթուեց, սակայն մեծ դօքրով դիմեց
նրանց վրայ և յաղթելով դուրս քշեց բոլորո-
վին թէ իր երկրից և թէ Հայաստանի սահման-
ներից:

Մէդացիք այն աստիճան գորացան, որ իրենց
ձեռքը գցեցին մինչև Ալիս գետը և Լիդիա տա-
րածուած երկիրները և հարկատու դարձրին: Աս-
սուրացիք բոլորովին թուլացել էին և քաշուել
Բաբելոն, որտեղ փոքրիկ թագաւորութիւն էին
հաստատել:

Միենոյն ժամանակներում յեղա-
կիրՈՍ ել գոխութիւն ծագեց Մէդացոց երկր-
երուիւնդ ըրում և 550 թ. Քր. ա. պարսիկ Ա-
քեմենեան կիւրոս իշխանը յաղթելով մէջացինե-
րին, գերի բանեց նրանց Աստիագ թագաւորին և
երկրի սահմանները մինչև Լիդիա հասցըեց: Այս
անգամ նրան օգնեցին հպատակ ազգերը և նա
Հայոց, Մանա ու Աշկուզա երկիրների բնակիչ-
ների օգնութեամբ դիմեց Բաբելոնի վրայ և կոր-
ծանեց այդ թագաւորութիւնը: Յոյն պատմիչ-
ների ասելով այդ ժամանակ Հայաստանում իշ-
խում էր Երուանդ թագաւորը, որ իրը թէ պա-
տերազմել է մէջացոց Աստիագ թագաւորի հետ,
յաղթուել և հարկատու դարձել: Վերջը Երուան-
դըն ապստամբուում է, բայց կիւրոսը բանում է
նրան և իրեն հպատակեցնում: Այստեղից Եր-

ուանդն ու կիւրոսը բարեկամանում են: Երուան-
դի յաջորդն եղել է Տիգրան:

Հայաստանը 519—515 թուականնե-
զԱՐՍԻԿ ըից սկսած պարսից պետութեան մի
կոհՍՍԿԱԼՆԵՐ կուսակալութիւն էր և թէպէտ երկի-
րը նրանց ձեռքին էր, այնուամենայ-
նիւ Երասի գետի հովիտներում կար սեփական ազգա-
յին կեանք՝ ազգային տէրութիւն: Պարսից թագաւոր-
ուերը կուսակալներով էին կառավարում Հայաստանը:
Կուսակալները արքայալյալ կեանք էին վարում, ու-
նէին սեփական արքունիք: Կուսակալի մօտ կային նաև
արքունի քարտուղար և զօրապետ, որ իր ձեռքի տակ
ունէր կանոնաւոր զօրք և տեղացիներից կազմած ժա-
մանակաւոր գնդեր: Այս երեք պաշտօնեաները սովո-
րաբար մէկ մէկու թշնամի էին և երբէք համարեա
հաշտ-համերաշխ չէին ազրում: Պարսից թագաւորը
եւլամտից հաշիւը քննկելու համար յաճախ պաշտօնեա-
ներ էր ուղարկում և հաշուի մաքուլ լինելուց էր կա-
խուած պաշտօնում մնալը:

Կուսակալներն առհասարակ աշխատում էին եր-
կիրը ծաղկած վիճակի մէջ պահել, որպէս զի առանց
դուռարութիւնների կարողանային ժողովել երկրից
արուելիք հարկերը, որոնք շատ մեծ էին ժամանակի
հետ համեմատած: Արտաքսերքսես Ա. թագաւորի օրով
մինչև Սկ ծովի ափերը ապրող բնակչութիւնը բաժա-
նուած էր 13 կուսակալութեան և դրանք միասին վըճա-
րում էին 400 տաղանդ հարկ (ըստ պարսից հաշուի
մօտ 680,000 բուրդի): Երկիրը կուլտուրապէս ծաղ-
կում էր, որովհետև կուսակալներն աշխատում էին
վերջ տակ աւազակախմբերին, կառավարում էին խա-
ղաղ և որոշ օրէնքներով, բնակիչների մէջ ծագած ան-
համաձայնութիւնները վերջացնում էին հաշտութեամբ,
հաղորդակցութեան ճանապարհներ էին բաց անում և

որ զլիաւորն էւ աշխատում էին բարելաւել երկրի տնտեսական դրութիւնը:

Քսենօփոն յոյն պատմիչը՝ նկարագրել է այդ ժամանակուայ հայոց տունը. նրա ասելով հայերի տները գետնափոր էին և երկու դուռ (մուտք) ունէին՝ մէկը նեղ՝ մարդկանց համար, իսկ միւսը ընտանի կենդանիների: Զմեռը՝ 15—20 անդամից բաղկացած ընտանիքը տեղաւորում էր այդ փոքրիկ բնականներում՝ անասունների հետ, մինչդեռ ամառը նրանք անց էին կացնուում բացօդեայ՝ լեռներում և գաշտերում: Միենոյն տան մէջ էին պահւում նաև ուտեստի պաշարեղնները, որ էին հայերը պատրաստում էին շատ մեծ քանակութեամբ և մինչև անգամ արտահանում էին երկրից դուրս:

Հայերի պարսից տիրապետութեան ԴԱՐԵՀ Ա. Ժամանակ խաղացած դերն էլ մէծ նշանակութիւն ունի, որպինեակ նլրանք ձգտում էին անկախութիւն ձեռք բերելու, որի համար էլ բազմաթիւ պատերազմներ մղեցին պարսից Դարեհ Ա. ի (521—485 թ.), հետք Դարեհը ստիպուեց զօրք ուղարկելու հայերի դէմ Դադարշիս զօրավարի հետ և առաջին պատերազմը տեղի ունեցաւ Հայաստանի ԶՇՎՈՒ (յայտնի չէ տեղը, գիտնական պ. Բասմաջեանը կարծում է, որ Սասունը պիտի եղած լինի) տեղում՝ 520 կամ 519 թ.: Հայերն երկրորդ անգամ Տիգրա (նոյն գիտնականի կարծիքով՝ Տիգրանակերտ) տեղում պատերազմ եղաւ, որտեղ հայերից 540 հոգի սպանուեցան, իսկ 520 էլ գերի ընկանաւ Հայերն երրորդ անգամ ապստամբեցան և Հայաստանի Ուհյամա (տեղը յայտնի չէ) բերդից

մօտ պատերազմ եղաւ, հայերը մէծ ջարդ կրեցին, բայց երևում է որ պարսիկները չկարողացան գապել նրանց և Դարեհը վասմիսա պարսիկին ուղարկեց նրանց դէմ, բայց հայերը նրան պատերազմի դուրս կանչեցին և այս անգամ Ասորեստանի իզիդու (տեղը յայտնի չէ), վայրում պատերազմ եղաւ, և հայերից 2024 մարդ սպանվեց: Այս էլ չօգնեց և 519 թ. Աւտիյարա (տեղը անյայտ) վայրում, Հայաստանում, պատերազմ եղաւ, որտեղ հայերից 2045 հոգի ջարդուցան, իսկ 559 հոգի էլ գերի ընկան: Այսուհետեւ Արախա անսւնով մի հայ Բաբելոնի թագաւոր հոչակուեց, բայց նրան պատերազմի ժամանակ բանեցին և Բաբելոնում իր զօրավարութակիցների հետ խաչեցին, մօտ 515 թ.:

Դարեհին յաջորդեց Թմերքոէս (485—465 թ.), որի օրով Հայաստանը հպատակ մնաց նրան, բայց հաւանական է, որ կային առանձին հայեղուղներ՝ թագաւորներ՝ կամ իշխաններ, բայց նրանք կախումն ունէին պարսիկ պետութիւնից:

Մի շաբթ թագաւորներից յետոյ ՍԵԼԵՒԿԵԱՆՔ Պարսկաստանում թագաւորեց Դարեհի Գ. Կողոմանն (336—330 թ.), որի օրով Հայաստանի բաղը վճռուեց: Դարեհի օրով շատ զօրացաւ Ալէքսանդր Մակեդոնացի նշանաւոր թագաւոր-զօրավարը և Փոքր Ասիային տիրելով հասաւ Պարսից սահմանները: 331 թ. հոկտեմբերի 1-ին Արքելա քաղաքի մօտ պատերազմ տեղի ունեցաւ Ալէքսանդր Մակեդոնացու

և Դարեհի միջև, Դարեհը յաղթուեց և այդպիսով վերջացաւ Պարսից Աքեմենան հարստութիւնը, Հայաստանն էլ ընկած մակեդոնացոց ձեռքը և երկրի մարզպան կամ կուսակալ նշանակուեց Միհրան անունով մի նշանաւոր պարտիկի իշխան, որ առաջ Սարդէս քաղաքի պետ էր եղել և միացել էր մակեդոնացոց հետ Երկիրը կառավարում էր պարսիկներից որոշուած օրէնքներով:

Ալէքսանդր Մակեդոնացու մահից յետոյ 323
թ. նրա նուաճած Երկիրները բաժանուեցան նրա
գօրավարների մէջ և Հայաստանը բաժին ընկաւ
Սելլակացիներին:

Սելևկը մակեդոնացի իշխան էր և Ալեքսանդր Մակեդոնացու հետ Ասիա գնալով նրա մահից յետոյ առանձին թագաւորութիւն հիմնեց, բայց Տիգրան Բ-ի օրով այդ թագաւորութիւնը կործանեցին:

Հայերը չթողին իրենց ըմբռտ
ՀԱՅ բարքը և ինչպէս որ պարսկից տիրա-
հծնվենեմ պետութեան ժամանակ էին ձգտում
պահպանկախութիւն ձեռք բերելու, այս-
պէս էլ Սելևացոց օրով սկսեցին շարժուել, բայց
նրանք այնքան միայն կարողացան անել, որ 317
թ. Փրատապար կամ Հրահատ անունով հայ իշ-
խանը Հայստանի կուսակալ նշանակուեց: Նա
իր երկրում ազատ իշխան էր, ինքնազլուխ կա-
ռավարում էր և մինչև անդամ ինքնակամ մի պա-
տերազմ էլ մղեց Պոնտոսի ում,

Նրա յաջորդ Արդուարտէսը Հրահատի ազգաւ-

կամներիցն էր և աւելիս պատուապահանջ գլուխուց քանի իր նախորդը՝ 301 թ. Քր. ա. բաշտածակապէս աղպատամբութեան դրօշը պարզեց, սակայն Սելևկը ճնշեց այդ ապատամբութիւնը։ Այնուհետև Հայաստանը երկու կուսակալութեան բաժանուեցի։

Հայոց Արտաւազդ կուսակալի
ՀԱՅ որդի Արտաշէսը 190 թ. Քր. ա.

ԹԱԳԱԼՈՐՆԵՐ յաջորդեց իր հօրը և Սռվենի Զարեհն կուսակալի հետ դաշնակցելով պատճենեց Արմենիա առաջարկեց առաջարկեց



Առաջակացնել էին: Զնայած Արտաշէսին գահազուրի արին, բայց նա օգտուեց Սելևացոց խառնակ զրութիւնից և ինքնազլուխ պետութիւն հիմնեց: Այստեղից սկսուեց Հայաստանի առաջին կանոնաւոր հարստութիւնը, որ կոչւում Արտաշիւան: Այս թագաւորութեան մէջ էին մտնում երասմի հովիտը, Կովկասի մի մասը, Վանայ լճի աւազանը, Եփրատի մերջին մասերը, իսկ արեմուտքից սահմանակից էր Փոքր Հայքը: Փոքր Հայքը ինքնանգմար երկիր էր և Պանտոսի թագա-

ւորութեանհետ բարեկամական յարաքերութիւններ էր պահպանում և այդ էր ոլատառը, որ 112 թ. Քր. ա. նաև միացաւ Պոնտոսի հետ: Արտաշէսը մեռաւ 169 թ. Քր. ա. (159—149), որի օրով պարթեներն սկսել էին արդէն իրենց աշխարհակալական գործը:

Պարթեները աշխարհ եկան մօտ 350 թ. Քր. ա.: Բակտրիայի սահմաններում ապրող Պարսիա թափառական ցեղի Արշակ և Տիրիդատ իշխանները գէպի արևմուտք առաջանալով Սկզբացիներից խլեցին Աստարեն նահանգը և ապա ներս խուժեցին նախնի Պարսկաստանի նահանգները որաեղ և ամրացան: Սելլկ Բ. Թագաւորը շատ աշխատեց հեռացնել Արշակին իր երկրից, բայց չկարողացաւ և այդպիսով սկիզբ առաւ Պարսկաստանի պարթեների թագաւորութիւնը, որ վերջացաւ 226 թ. Քր. յետոյ: Այս ցեղից էին Հայոց Արշակունի թագաւորները:

Այստեղից Հայոց պատմութիւնը շատ խառնէ և Արտաւագդին յաջորդող թագաւորներից յիշում է միայն Արտօալիստրիս, որ թագաւորեց 123—95թ. Քր. ա. և երկար պատերազմեր մրցեց Պոնտոսի Միհրդատ Բ. թագաւորի դէմ:

Նրան յաջորդեց Տիգրան Մեծը (94—56), որի օրով Հայաստանը փառքի դադարնակէտին հասաւ:

ՆԱԽՆԻ ՀԱՅՈՑ ԿՐՈՆԸ

Խաչպէս բոլոր ազգերը, այնպէս էլ նախնի

հայերը եղել էն սկզբում բազմաստուած եան և հեթանուա, Վարդա իր ծնած օրից ընտելացաւ երկու գաղափարի շնորից քարոյ և որովհետեւ երկուսից էլ հաւամար վախենում էր, երկուսին էլ պատուածացրեց: զաւալիսար վաստակ և մաս

Մարդկութեան առաջին կրօնը ընապաշտութիւնն էր, հետևապէս հայերն էլ որպէս մի հին ազգ նոյն էին պաշտում, այդպիսով մարդիկ աստուածացնում էին բնութեան երևելի և աներեւոյթ առարկաներն ու գաղափարները՝ կրակ, ջուր, լեռներ, օդ, հողմ, պաշտում էին ծառեր (սոսի, կաղնի, լոշտակ, բարափ և այլն) և կամ թէ կենդանիներին, գագաններին, նոյն իսկ սողուններին էին աստուածացնում (առիւծ, վարազ, օձ և այլն):

Մըանից յետոյ հայերը ընդունեցին Քաղղէացոց կրօնը. Քաղղէացիք աստղագէտ ազգ էին և պաշտում էին երկնային մարմինները՝ երկինք, մթնոլորտ, արեգակ, լուսին, աստղեր, մոլորակ և այլն: Միևնոյն ժամանակ թէ ընապաշտութեան և թէ քաղղէականութեան շրջանում հայոց մէջ բուն էր զբել ոգեպաշտութիւնը, որով նրանք ընդունում էին զանազան չար և բարի ոգիների զոյութիւնը և ակնածելով վերաբերում դէպի այդ աներեւոյթ ու անգոյ ոգիները. այդպիսիք էին Քաջք, որ ապրում էին լեռներում և ժայռերում, Ուղու (երկի հուրի), մեռելոց հոգիները, Աղէզ կամ Յառալէզ, որոնք ուազմաշներ էին և պատերազմի դաշտում ընկած կտրիչների վեր-

քերը լիգելով՝ բուժում էին: Կային նաև այս
ոգիներ՝ Սպառք, Նհանզք, Յաւերժանարսք և այլն:
Քրիստոսից 6 դար առաջ Զրադաշտ անու-
նով մոգը Պարսից և Մարաց մէջ, ըստ ոմանց
նաև Հայաստանի Պարսկահայք նահանգում, նոր
կրօն քարոզեց, գրեց մի օրէնսդիրք, որ Աւեստա
կոչուեց, որը յետոյ ընդարձակուեց և կոչուեց
Զանդ կամ Զէնդ-Աւեստա: Այդ կրօնը շուտով
պետական կրօն դարձաւ և կոչուեց Զրադաշտա-
կանութիւն կամ Մազդէկանութիւն: Այդ կրօնը
ընդունում էր, որ Զըռւանը ծնաւ Որմիզդ և Արհմի.
Որմիզդը որ բնակում էր Արքայութեան, մէջ,
ստեղծեց Երկինք, Երկիր, լոյս, մարդկանց և բո-
լոր բարի հոգիներին. իսկ Արհմի, որ բնակում
էր դժոխքում՝ այն ամենը, ինչոր չար է: Այս
դաւանութեան պաշտպանները կոչում էին Մոք,
որոնց գլխաւորն էր մողակետը, իսկ սրանց գըլը
խաւորն էլ կոչւում էր մողակետաց մողակետ: Այս
պաշտօնեաները մարդկանց և աստուածների մէջ
միշնորդի պաշտօն ունէին, գուշակութիւններ
էին անում և ժողովրդից յարդուած էին: Այս
կրօնը ընդունում էր նաև տարրապաշտութիւն,
բայց մի աստուած էր ճանաչում՝ Որմիզդ:
Քրիստոսից 5 դար առաջ հայերն արդէն ըն-
դունել էին այդ կրօնը, բայց 331 թ. Քր. ա.
երբ արդէն յունաց և սելեկեանց ազդեցութիւնը
մեծացաւ, նրանց բազմաստուածութեան գաղա-
փարն էլ աեղ գտաւ հայերի մէջ և կամաց կամաց
Զրադաշտականութիւնն ընկաւ, մինչև որ 150

թուից (Քր. ա.) յունամոլ պարթևները այդ կը-
րօնի հետ խառնեցին նաև յունական կրտսպաշ-
տութիւնը և կուռքեր կանգնեցին: Այդտեղից
կազմուեց Հայկական աստուածութիւնների կամ
դից անուանացանկը՝ Արամազդ՝ հայր աստուած-
ների, որի մեհեանները գտնուում էին Բարձր Հա-
յոց Անի ամրոցում, Բագրեանզի Բագաւան գիւ-
ղում, իսկ նրա տօնը տօնուում էր Նաւասարդ
ամսի 1-ին Հայոց Ամանօրին: Անահիս՝ գուասր
Արամազդի, մայր ամենայն զգաստութեանց և
Ջրերի խնամակալ. մեհեանները գտնուում էին
Երիզայում, Աշտիշատում և Արմաւիրում, յետոյ
Բագարան, իսկ այստեղից Արտաշատ փոխադրուեց:
Տօնը կատարուում էր Նաւասարդի 15-ին: Մինչ
աստուած ճշմարտութեան, անաշառութեան, գի-
տակցութեան, սիրոյ, կրակի և լոյսի, որ Արա-
մազդի գործակատարն էր և 6000 աչք ու այդ-
քան էլ ականջ ունէր: Մեհեանը գտնուում էր
Բարձր Հայքի Բագառի գիւղում: Տիր՝ աստուած
գիտութեան և արուեստի, Խօսելու, գրելու, ե-
րազներ մեկնելու և Արամազդի գրագիրն էր.
մեհեանը գտնուում էր Արտաշատում: Աստղիկ՝
գեղեցկութեան, մեհեանները գտնուում էին Աշ-
տիշատում, Անձեւացոց Պաղատոյ լեռան վրայ և
Արտամետի մօտ: Վահազն՝ պատերազմի և յաղ-
թութեանց, մեհեանները գտնուում էին Աշտիշա-
տում, Տոսպի Ահեական գիւղում: Տօնը կատար-
ուում էր Սահմի ամսի 7-ին: Նանէ դիցունի ի-

մաստութեան, մեհեանները գտնւում էին թիւն աւանում:


Բացի այս աստուածները Հայաստանում կային նաև գանազան աստուածների կուռքեր, որ գանազան ժամանակներում բերուած էին այլայլ երկիրներից և կամ նրանց պաշտամունքը օտարների աղդեցութեամբ մեր մէջ էլ բռն էր դրեւ. այդպէս էին՝ Բարշամին, Սպանդարամին, Սանդարամին և այլն:

Աստուածների համար կային առանձին տաճարներ, բայց շատ տեղերում պաշտամունքը կատարւում էր բացօգեայ և կամ անտառներում: Գլխաւոր մեհենաստեղիներն էին Արմաւիր, Արտաշատ, Բագրաբան, Աշտիշատ, Բագւաւան կամ Դիցաւան, Անի կամ Կամախ, Երիզա, Բագառիճ, Թիւն: Աստուածութիւններն ոչնչացան Քրիստոնէութեան մուտք գործելուց յետոյ, թէպէտ դեռ մօտ 5 դար կային գաղտնի հեթանոսներ, բայց հեթանոսական սովորութիւններն դեռ այսօր էլ շարունակւում են:

Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ի Փ

Ըստ հայ պատմիչների Հայազգմթեիններ տանի թագը Հայկազունեաց անկումից յետոյ անցաւ Արշակունի հարստութեան, իսկ Արշակունիները ծագում են պարթեններից: Պարթենների հայրենիքը գտնւում էր հիւսիւարեելեան Պարսկաստանում, որ անապատ էր, իրենք թափառական և ձիավարժ ազգ էին և թէպէտ իրանցի չէին, բայց լեզուն ու կուլտուրան իրանական էր: Նրանց մի մասը վազուց արդէն մտել էր Պարսկաստանի ներքին

նահանգները, իսկ միւսները կամաց կամաց առաջացան ու հիմնեցին առանձին թագաւորութիւն, մօտաւորապէս Քր. 250 տարի առաջ: Թագաւորները գահը բարձրանալիս Արշակ էին կոչւմ և Արշակ առաջինն էլ ապրել է մօտ 250 թ. Քր. ա., որ 248 թ. իր գահը զիջաւ իր եղբօր Արշակ Բ. կամ Տրդատ Ա-ին, իսկ սա օգտուելով



ՀԱՅԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆ

Սելևկացոց թուլութիւնից իր երկիրը ընկարձակել սկսեց, խլեց մի քանի գաւառներ, գրաւեց չիւրկանիան (այժմեան Խորասանի մեծ մասը): Թէպէտ 238 թ. նրան Բակարիայից գուրս քշեցին, բայց նա միացրեց պարթեններին և նորից կրաւեց ձեռքից խլած երկիրները՝ արևմտեան և ունային նահանգները և Մէղացոց Եկբատան

մայրաքաղաքը: Այսպիսով պարթևները մտան նաև
Հայաստան:



ՎԱԴԱՐՇԱԿ

ՎԱԴԱՐՇԱԿ
ՕՐԵՆՄԴԻՐ
149 թ. Քր. ա.
Հայելու հպատակեցան: Արշակ Բ. Մեծ թագաւորը,

Հայելը տեսնելով պարթևների
յաջողութիւնները, մանաւանդ որ
կրօնով ու լեզուով շատ էլ չէին
տարբերում, առանց արիւն թա-
փելու հպատակեցան:

Սելևկեան իշխանութեան առաջն առնելու համար
իր եղբայր Վաղարշակին Հայաստանի թագաւոր
հրատարակեց և այդ հարստութիւնը կոչուեց
Արշակունի:

Վաղարշակն իրեն թագաւորանիստ դարձրեց
Մծբին քաղաքը և նրա առաջին գործն եղաւ ի-
մանալ հայերի ու հայ նախարարների ծագումը:
Հայոց մէջ ոչինչ չգտնելով, Մար Աբաս Կատինա
գիտուն ասորուն մի նամակով իր եղբօր Արշակի
մօտ ուղարկեց և խնդրեց, որ նրան թոյլ տայ
նինուէի գրադարանի գրքերը քննելու: Այստեղ
Մար Աբասը գտաւ Հայկազանց պատմութիւնը,
արտագրեց և բերեց Վաղարշակին: Վաղարշակը
ծանօթացաւ նրա հետ, պատմութեան մի մասը
արձանների վրայ փորել տուեց, իսկ գիրքը պար-
հեց իր գանձարամնում:

Մինչ Վաղարշակը հայ երկրի ու ժողովրդի
անցեալով էր զբաղուած, Կապագովկիայի Մոր-
փիւղիկէս իշխանը, որ թշնամի էր պարթևներին,
մեծ զօրքով Հայաստան արշաւեց: Վաղարշակը
շուտով զօրք ժողովեց և նրա դէմ գնաց: Պատե-
րազմի ժամանակ Մորփիւղիկէսն աշխատում էր
մի կերպ մօտենալ Վաղարշակին, որ յարձակուի,
սակայն հայ իշխանները սպանեցին նրան և զօր-
քին էլ հալածեցին:

Այս պատերազմից յետոյ Վաղարշակը ըն-
դարձակեց Հայաստանի սահմանները, շինութիւն-
ներ արեց, ճանապարհներ բացեց, ճահճոտ տե-
ղերը ցամաքացնելով հրամայեց մշակել, ջրմուղ-

ներ շինեց, թաւուտ անտառները մաքրեց աւազակներից, իսկ Արմաւիր՝ քաղաքում արեգակի, լուսու և իր նախնիքների արձաններ կանգնեց:


Սորա հետ միասին Վաղարշակը հայ նախարարներին էլ վարձատրեց ու նրանց պաշտօններ բաշխեց՝ Բագարատ իշխանին թագադիր՝ թագաւորի գլխին թագ կապող կարգեց, Խորիսունիներին՝ անձնապահ-թիկնապահ, Վարաժնունեաց՝ որսի վերակացու, Արծրունեաց՝ թագաւորի առջեկից արծուանշան տանող, Գնթունեաց՝ հանդերձապահ, Մուրացան ցեղին թագաւորի երկրորդի պատիւը չնորհեց, Վահնունեաց՝ քրմութիւն, Երկու պաշտօնեայ էլ նշանակեց, որոնք գատավարութեան միջոցին իր աջ ու ձախ կողմը պիտի գտնուէին և մէկը պիտի յիշեցնէր, երբ թագաւորն անիրաւացի էր վարւում, իսկ միւսը մեզմ վարուելիս՝ պատիժները:

Նրա հաստատած կարգերից կարևորը ժողովրդական գատարանների բացումն էր և այն, որ անդրանիկ որդին իր մօտ բնակուի, իսկ միւսները Հաշտենից գաւառում:

Վաղարշակը մեռաւ Մծրինում իբր 127 թ. Քր. ա. և նրան յաջորդեց իր Արշակ որդին (128—113 թ.),

Արշակը հօր ընթացքին հետեւց և պոնտացոց հետ պատերազմելով, յաղթեց, իսկ ՚ի նշան յաղթութեան՝ Սև ծովի ափին մի արձան կանգնեց, որ երկար ժամանակ պոնտացիք պաշտեցին, բայց Արտաշէսի հետ ուղած պատերազմի ժամանակ ծովը նետեցին:

Հստաւանդութեան Արշակին ԱՐՏԱՇԵԿՈՒ Ա. յաջորդեց Արտաշէս քաջ և պատեհնԱՐՀԱԿՈՒ. տերազմասէր որդին: Երբ Վա-113-94 թ. Քր. ա. դարշակը թագաւորեց, Արշակ



ԱՐՏԱՇԵԿՈՒ Ա.

ՄԵծը առաջնութեան պատիւն ու դրամ կտրելու իրաւունքն իրեն վերապահեց, սակայն Արտաշէսը

ԵՐ քաջութեան վրայ յոյս դնելով խլեց Պարթև ազգական թագաւորից այդ պատիւը և դրամ տպել սկսեց:

Արտաշէսն իր աշխարհակալական ծրագիրներն իրագործելու համար իր Արտաշամ աղջիկը պոնտացոց Միհրդատ թագաւորին կնութեան տուեց և նրա հետ Հայաստանի հիւսիսային և արևելեան կողմը գտնուած ազգերից կազմած մեծ զօրքով նուաճեց Փոքր Ասիան, անցաւ Եւրոպա, տիրեց Թրակիային և Յունաստանին:

Նրա առասպելական շատութիւն ունեցող զօրքը՝ ի հարկէ չէր կարող միշտ կուշտ լինել. աւանդութիւնը պատմում է, որ զօրքի խմելուց գետերն էին ցամաքում, զինուորների նետած քարերից բլուրներ էին գոյանում: Երբ նրանք նեղուեցան, խոռվութիւն ընկաւ և Փոքր Ասիայում դաւաճանօրէն սպանեցին Արտաշէսին:

Մենակիս նա յիշում է իր քաջութիւնները, անցած փառքը և ասում «աւաղ փառացս անցաւորի»:

Արտաշէսին յաջորդեց (ըստ հայ պատմիչների) Տիգրան Մեծը, որին երկրորդ են անուանում: Նա զինուորական արուեստին վարժ և պատերազմասէր մարդ էր և եթէ Մեծ է կոչում, մասսմբ պարտական է պոնտացոց Միհրդատ թագաւորին, որ նրա ամենամօտիկ դաշնակիցն էր Հոռմայեցոց դէմ մղած պատերազմների ժամանակ:

Միհրդատը Փոքր Հայքը միահիգրան Մեծը ցնելով Պոնտոսի հետ, ուզեց իր 94—56 թ. երկիրն ընդարձակել և դրա համար էլ դաշն կապեց Հայաստանի Տիգրան թագաւորի հետ և իր դռւսար Կլէոպատրային կնութեան տուեց Տիգրանին: Տիգրանն էլ դաշնակցի հետ միացած սկսեց իր գործը և ուզեց մաքրել Կապադովիկիան: Այստեղի կուսակալ Արփոքարզանը Հոռմայեցիներին ապաւինուեց, իսկ դաշնակիցները պոնտացի նախարար Գորդիոսին նշանակեցին կուսակալ:



Տիգրան Բ.

Ֆը կանգնած էին հոռմայեցիք, իսկ միւս կողմը դաշնակիցները՝ Տիգրանն ու Միհրդատը: Թէպէտ Տիգրանը աւելի շուտ աշխարհակալութեամբ էր գրադւում, բայց աշխատում էր իր երկիրը բարեկարգել, ժողովրդին անտեսապէս բարձրացնել և իր երկրում էլ մացնել Հոռմէական քաղաքա-

Դաշնակիցների յաջորդիւնները ապշեցին հոռմայեցիներին և երիտասարդ զօրքավար Կորնելիոս Սուլլան մեծ զօրքով Գորդիոսի վրայ դիմեց և յաղթեց նրան: Այս պատերազմով սկսուեց այն պատերազմների շարքը, որի մէկ կող-

մը կանգնած էին հոռմայեցիք,

իսկ միւս կողմը

դաշնակիցները՝ Տիգրանն ու Միհրդատը: Թէպէտ

Տիգրանը աւելի


շուտ աշխարհակալութեամբ էր

գրադւում, բայց աշխատում էր իր երկիրը բա-

րեկարգել, ժողովրդին անտեսապէս բարձրացնել

և իր երկրում էլ մացնել Հոռմէական քաղաքա-


կրթութիւնը։ Տիգրանը ուշ հասկացաւ, որ Միհրը դատապի ազդեցութեան տակ էր բնկել, իսկ Միհրը դատապի բարեկամութիւնը միայն այն նպատակավ էր, որ կարողանայ Պոնտոսի հետ միացնել



Տիգրանի ՅԱՂԹԱԿԱՆԸ

կապադովկիան, Պաֆլագոնիան և Բիւթանիան։ Այս երկու թագաւորները միատեսակ ձգտում էին Արևելքի իշխող դառնալ և կհասնէին իրենց նպատակին եթէ Տիգրանը հաւատարիմ մնար Մի-

հրդագատի դաշինքին։ Հոռմայեցոց դէմ մղած պատերազմները սկզբում աւելի յաջող էին, քան յետոյ և Միհրդատի զօրքի գլխաւոր ոյժը Փոքր Հայքից հաւաքուող հեծելագնդի մէջն էր։ Պարթևաց Սանատրուկ թագաւորի մահից յետոյ Տիգրանն ուզեց հին անյաջողութիւնների վրէժը լուծծել և Միհրդատին անօգնական թողնելով՝ Պարթևաց երկիր արշաւեց, յաղթեց և պարթևները դաշն կապելով վերադարձրին 95—70 թ. ընթացքում խլած երկիրները։ Այս յաջողութիւնը Տիգրանին հոգի տըռեց և նա Միջագետքի հիւսիսային երկու նահանգներին տիրեց, անցաւ հիւսիս, Աղուանքն ու հվերիան միացըրեց Հայաստանի հետ։ Այս քաջութիւնների համար նա «արքայից արքայ» տիտղոսի արժանացաւ։



ՄԻՀՐԴԱՏ

Դեռ 83 թ. Տիգրանը տիրեց Ասորիքին և պատերազմի ժամանակ նրանց վերջին թագաւոր Փիլիպպոսը մեռաւ։

Տիգրանը Ասորիքը յանձնեց իր զօրավարներից մէկին և զէպի Պալէստինա տրշաւեց, որտեղից բազմաթիւ հրէա գերիներ բերեց Հայաս-

տան։ Շուտով կիլիկիան էլ խոնարհուեց Տիգրանի առաջ։

Մինչև Տիգրանն առաջ էր մղում իր աշխարհակալութիւնը, յանկարծ հոռմայեցոց կու կուլս զօրագարն անհամար զօրքով ողողեց Հայաստանը։ Նրան դիմադրում էր Միհրդատը, որ նուաճած երկիրները վերադարձնելով հաշտուեց բայց շուտով նոր զօրք ժողովեց, եգեյեան ծովում (Սև ծով) երևաց Միհրդատի ուժեղ նաւատորմիլը, իսկ ցամաքային զօրքը ջարդեց հոռմայեցիներին և Միհրդատը ազատ առաջ խաղալով պաշարեց կիզիկոն քաղաքը, իսկ նաւատորմիղն էլ Հոռմէական նաւերը գերած Պոնտոս վերադարձաւ։ Հասաւ Լուկուլոսը և պաշարեց Միհրդատին ու նա մազապուրծ հազիւ ազատուած 72 թ. պարտութիւնից յետոյ փախաւ Տիգրանի մօտ, որ լսելով Հոռմայեցոց արշաւանքի մասին ետ էր եկել Պալէստինայից։ Լուկուլոսը պահանջեց Տիգրանից Միհրդատին իրեն յանձնել, բայց Տիգրանը մերժեց և Լուկուլոսը Ամազիա քաղաքից Հայաստան արշաւեց և պաշարեց Տիգրանակերտ քաղաքը, ուր թագաւորի գանձերն էին պահուած, որ մի խումբ քաջերի օգնութեամբ դուրս տարան քաղաքից և Տիգրանը զօրք ժողովեց և դիմեց Հոռմայեցոց դէմ։ Հայերը պարտութիւն կրեցին և Տիգրանը հազիւ կարողացաւ ազատուել իսկ Տիգրանակերտը, որ Հայաստանի հարուստ ու առաջսակար քաղաքներից մէկն էր Հոռմայեցիներին մնաց։ Այսուհետեւ ազատուած առաջարկ բարեկայ էր

Հոռմայեցիք ձմեռն անցկացրին Կորդուացնահանգում և գարնան պաշարեցին Մծբին քաղաքը, որ մի քանի ամսից յետոյ անձնատուր եղաւ։ Հոռմայեցիք զինուորները կողոպտեցին ամբողջ քաղաքը, իսկ Տիգրանը փոխանակ քաղաքին օգնութեան գնալու քաշուեց Արաքսի հովիտը և Արտաշատի մօտ նորից ջարդուեց Հոռմայեցիներից։ Լուկուլոսն ուզում էր շարունակել իր արշաւանքը, բայց սովից ու ցրախից նեղուած զօրքը աղմկուեց, ստիպեցին նրան թողնել Հայաստանն ու վերադառնալ հայրենիք։

Միհրդատն էլ նորից զօրք ժողովութիւնը վեց և սկսեց մէկ-մէկ ետ խլել կորցրած երկիրները։ Զօրքի ապստամբութիւնն ու Միհրդատի յաջողութիւններն Հոռմի մէջ մէծ իրարանցում առաջ բերին և Լուկուլոսի տեղ Պոմպէոս զօրավարը նշանակուեց, որ Դաստէյրում (Նիկոպոլիս) ջարդեց Միհրդատին և նա փախաւ կողքիս, բայց իր որդի Փառնակը զօրքի հետ դաւաճանեց ու նա անձնասպան եղաւ։

Այսուհետեւ Պոմպէոսն ազատ կերպով առաջ մղեց իր զօրքերը, խլեց Տիգրանից տիրապետած երկիրները և 65 թ. էլ խլեց Ասորիքը։ Տիգրանի դրութիւնը շատ էր փոխուել և նա միայնակ անկարող էր երկար դիմանալ, ուստի և երկար տատանուելուց յետոյ ստիպուեց իրեն համար շատ անպատճաբեր դաշն կապել, որով միանգամյն հրաժարում էր տիրապետած երկիրներից։ Վաստակած մէջայ օգարծակ բարեկայ էր

Տիգրան Մեծից յետոյ թագաւ-
ԱՐՏՍԻՒՅԶԴ Գ. ւորեց նրա որդի Արտաւազդ Գ.
56—36թ.

Այդ ժամանակ արևելք եկաւ
Կրասոս զօրավարը հոռմայեցոց զօրքերով, որպէս
զի Միջագետքը խլէ պարթեներից, իսկ պարթե-
ւաց Սուրէն զօրավարն էլ մեծ զօրքով դիմեց
Կրասոսի դէմ: Այս պատերազմի սկզբին պարթեաց
Որոդէս թագաւորը կասկածելով մի գուցէ Արտա-
ւազդը հոռմայեցիներին օգնութեան գնայ, 53թ.
մտաւ Հայաստան և տիրեց Երկրին: Արտաւազ-
դը նամակ գրեց Կրասոսին, որի մէջ խնդրում
էր, որ թողնէ Միջագետքը և իրեն օգնութեան
շտապէ պարթեների դէմ: Արտաւազդի այս ա-
րարքը շատ բարկացրեց Կրասոսին և նա վճռեց
Երբ հնար ունենայ խստիւ պատժել նրան: Բայց
բաղդը փոխել էր իր ճանապարհը և ծանր զէն-
քերով զինուած հոռմէական լեզէններն անկա-
րող եղան պարթեների հեծելազօրքի կատաղու-
թեանը դիմանալ, 53թ. Կարը կամ Խոռան քա-
ղաքի մօտ Սուրէնը զիստեց Կրասոսին: Մինչ
այս մինչ այս Որոդէսն ու Արտաւազդը հաշտուե-
լով Որոդէսի Բակուր որդին փեսայացաւ Արտա-
ւազդին և մեծ տօնախմբութիւններ տեղի ունե-
ցաւ Արտաշատում, մինչև անդամ յունարէն ներ-
կայացումներ եղան: Արտաւազդը յայտնի էր որ-
պէս հեղինակ յունարէն լեզուով ճառերի ու պատ-
մական գրուածքների և ինքը ներկայացումներ էր
տալիս: Հարսանիքի առթիւ եղած ինչոյքներից
մէկի ժամանակ յանկարծ բերին Կրասոսի գլուխը,

որ Սուրէնն իբր նուէր էր ուղարկել: Բարձրա-
ցան աղմկայոյզ ծափահարութիւններ և Կրասոսի
գլուխը ձեռքից ձեռք էր անցնում, իսկ ծաղր ու
ծանակին վերջ չկար:

Կրասոսից յետոյ երկաց Անտո-
Նանիոնիու նիոսը, որ արևելքի իշխան էր կոչ-
և կանիդիուս զօրավարին ուղարկեց
Հայաստանն ու Վրաստանը նուաճելու, իսկ վեն-
տիդիուսին դրկեց Պարթեների Ասորիք մտնելուն
արգելք լինելու: Որոդէսը Սուրէնին սպանել էր
և այս անդամ Բակուր որդուն ուղարկեց զօրքով,
բայց ամբողջ բանակը չնշուեց զօրքի մէջ կա-
րելի է հայերն էլ եղած լինեն, որովհետեւ պար-
թեների հետ բարեկամական յարաբերութեանց
մէջ էին: Այս պատերազմից յետոյ հասաւ և Ան-
տոնիոսը, միայն խոյա տուեց պարթեների աշ-
խարհը մտնելու: Արտաւազդը գաղտնի օգնութիւն
խոստացաւ Անտոնիոսին, եթէ Մարտաստանին տի-
րէ, որտեղ նոյնպէս Արտաւազդ անունով թա-
գաւոր կար:

Սոցա դէմ, որպէս Մարաց դաշնակից, դուրս
եկաւ պարթեների Հրահատ Դ. (Պրատէս) թա-
գաւորը, բայց Երբ արդէն պատերազմը պիտի
տեղի ունենար, Արտաւազդն իր զօրքով յանկարծ
հեռացաւ բանակից և դարձաւ Հայաստան: Ան-
տոնիոսը յազթուեց և շատ նեղն ընկաւ ու որ-
պէս միակ ապաւէն՝ Արտաւազդի մօտ փախաւ,
իսկ սրտում ոխ պահեց: Արտաւազդը նրան ձմե-

ուելու իրաւունք տուեց, իսկ գարնանը մնացած զօրքով Աստորիքով Եգիպտոս վերադարձաւ:

Անտոնիոսը մտադրուել էր մի կերպ վրէժը լուծել. շուտով առիթ եղաւ և Արտաւազդը թշշնամանալով մարաց ու պարթև թագաւորների հետ, Անտոնիոսին առաջարկեց նուաճել պարթեներին, բայց Անտոնիոսը խորամանկութեան դիմեց, որ մի կերպ բոնէ նրան, սակայն չկարողացաւ և նուաճելով Հայաստանը գերեց Արտաւազդին, նրա որդոցն ու կանանցը ու վերադարձաւ Ալէքսանդրիա, որտեղ ուզում էր մի հանդէս ապրել՝ Արտաւազդը պէտք է ծունկ չոգէր Անտոնիոսի տարփածու կլէպատրա թագուհու առաջ և «Դշոյ թագաւորաց» հոչակէր նրան: Արքայի համար դա ստորութիւն էր և նա հրաժարուեց ու բանտարկուեց:

Այդ միենոյն ժամանակ Անտոնիոսի հակառակորդ Օկտավիանոսը իրեն Հայոց բարեկամյայտարարեց և խոստացաւ ազատել Արտաւազդին և պատերազմ տեղի ունեցաւ այդ երկուսի միջև, որտեղ ջարդուեց Անտոնիոսը և Արտաւազդին պիտի տուաւ 36 թ.

ԱՐՏԱՎԱԶԴԸ հայերին և նրա որդի Արտաշէսը թար 30—20 թ. Ք. Ա. գաւորեց:

Արտաշէսը Հրահատ Գ. ի հետ դաշն կապելով գահից զրկեց Մարտասանի Արտաւազդ թագաւորին և Մարաց երկիրն էլ միացաւ Պարթեաց հետ: Արտաշէսին գահընկեց անելու համար ոմանք պատմում են, որ Տիբերիոս կայսը զրկեց նրան դա-

ից, որովհետև նա հոդմայեցիներին թշնամի էր և տեղը նրա եղբօր Տիգրանին նատեցրին, իսկ ուրիշների առելով իր թէ Մեծ Հայքի բնակիները անրաւական էին նրա կառավարութիւնից և խողոքեցին հոռմայեցիներից նրա եղբայր Տիգրանին թագաւորեցնել, որ Հոռմումն էր գանւում և Օգոստոս Օկտավիանոսը նրան ուղարկեց թագաւորելու, բայց Արտաշէսն արդէն սպանուած էր իր ազգականների ձեռքով:

Տիգրանի մասին ոչինչ յայտնի չէ և նրան յաջորդեց մի ուրիշ Տիգրան, որ մի տարի միայն թագաւորեց՝ բայց նրա քոյքը երատօն, որի հետ վերջ նա ամուսնացաւ, նոյնպէս խառնում էր կառավարութեան գործերում: Տիգրանին գահընկեց արեց Օգոստոս կայսրը, որովհետև նա պարթեների կողմնակից էր (ըստ ոմանց սպանուեց):

Օգոստոսը տիբելով Հայաստանին՝

ՄԻ ՔԱՆԻ Արտաւազդ անունով մէկին թագավորԱկԱկԱկՈՐՆԵՐԻ ուրեցրեց: Փողովուրդը զժգոն նրա կառավարութիւնից ապստամբուեց

և գահընկեց արեց նրան: **Օգոստոսն այս խոտվութիւնների առաջն առնելու համար Կայու կեսարին ուղարկեց Հայաստան:** Նա եկաւ, հանգստացրեց հայերին և նրանց սիրելի մարաց եշխանազն գեղեցկատեսիլ Արխոբարզանին յանձնեց երկրի կառավարութիւնը, բայց մի իշխան նրան ծանր կերպով վիրաւորեց: Նրանից յետոյ 2—14 թ. Ք. Ա. յ. եշխեցին Արտաւազդ Ե., Արտաւազդ Զ. և Տիգրան Ք.:

Հայերը զրկուելով սեփական թագաւորներից ու անտիբական մնալով, պարթեների գահից զրկուած Վոնոնէս Ա. ին հրաւիրեցին թագաւորելու, բայց պարթեների Արտարան Գ. թագաւորը կամենալով մի կերպ սպանել Վոնոնէսին՝ խողոքեց հոռմայեցիներից զուրսքել նրան Հայաստանից, հակառակ դէպրում սպանում էր նրանց տէրութեան սահմաններն ասպատակի

մատնել։ Տիբերիոսը խորամանկութեամբ վոնոնէսին Կիլիկիա ուղարկեց, որտեղ նրան սպանեցին 19 թ.։

Հայերի ցանկութեամբ Հայաստանում թագաւորեց պոնտացոց Պոլեմոն թագաւորի Զենոն որդին Արտաշէս Բ. անուամբ, որ 15 տարի մնաց Հայաստանում։ Սրան յաջորդեց Արշակ Արտարանի որդին, բայց վրացիք սպանել տուին նրան և տիրեցին Արտաշատին։ Արտարանը լսելով այս, մեծ զօրք ուղարկեց վրաց դէմ որդու մահուան վրէժն առնելու, բայց պարթևները սարսափելի ջարդ կրելով ետք քաշուեցան։ Այս պիտով Միհրատը հաստատուեց գահի վրայ 39 թ., բայց իր հօրեղոր որդիի Հրադմիզով 52 թ. խեղդել տուաւ նրան և ինքը թագաւորեց։

Հրադամիզով շուտով ստիգուեց փախչել Վրաստան, որովհետև Պարթևաց Վոլոգէս թագաւորն անհամար զօրքով Հայաստան արշաւեց և իր Տրդատ եղբօրը թագաւորեցրեց։

Ներոն լսելով որ Պարթևները Հայաստան են մըտել, Կորրուլոն իշխանին մհծ զօրքով ուղարկեց նրանց դէմ և նա Տրդատին յաղթեց, Արտաշատն այրեց անցաւ Տիգրանակերտ և այսուեղ Արշէլոյսի որդի Տիգրանին (Կապաղովկայի իշխանին) գահը նստեցրեց, Պարթևների Վոլոգէս թագաւորն այդ ժամանակ Վըրկանաց ազգի հետ պատերազմ ունենալով չկարողացաւ ժամանակին օդնելց բայց երբ լսեց որ Տիգրանին են թագաւոր նստեցրել որդուն թագով պատկեց և Մոնեսէս զօրավարի հետ մեծ զօրքով Տիգրանի դէմ ուղարկեց։

Վերջապէս երկար բանակցութիւնից յետոյ ուղեցին հաշտուել, բայց արայմանները ոչ մի կորմից չընդունուեցան։ Կայսը Պետոս զօրավարին ուղարկեց Հայաստանի պաշտպանութեան համար, սակայն Վոլոգէսը յաղթեց և վերջապէս Հռոմայցիք ընդունեցին Տրդատին, որ Հռոմ զնաց, Ներոնից թագաւոր պատ-

կուեց և վերադարձաւ ու թագաւորեց Տրդատ-Արտաշէս անուամբ (62—82 թ.):

Տրդատ-Արտաշէսի մահից յետոյ թագաւորեց Ակսիդարէս կամ Աշխադար (82—107), որին Տրայանոսը զիկեց զահից և յայտարարեց որ Հայաստանը հոռմայեցոց տէրութեան նահանգ է դառնուեմ։ Բայց Պարթևնեց Խոսրով Ա. թագաւորը Հայաստանում թագաւորեցրեց Պարթամասիր անունով իր ազգականին 109 թ.։ Տրայանոսը բարկացած Հայաստան արշաւեց։ Պարթամասիրը նրան ընդ առաջ դնաց և հնազանդութիւն յայտնեց, սակայն Տրայանոսը նրան 115 թ. զրկեց թագից։ Պարթամասիրը պատերազմի բռնուելով նրա հետ սպանուեց։

Տրայանոսի յաջորդ Ազրիանոսը Հայաստանում, Ասորիքում ու Միհրագեաքում եղած զօրքերն ետ կանչեց և հայերին թոյլ տուեց սեփական թագաւոր ունենալ։ Այդ բանից օգտուելով հայերն իրենց համար թագաւոր ընտրեցին. այդ թագաւորը Աշխադարի որդի Պարթամասպատ պիտի եղած լինի։

140—150 թ. Հայաստանում թագաւորում էր Աշեմենիս կամ Աքեմենիդ, որին յաջորդեց Սոյեմոս 159—169 թ., որի օրով Պարթևների Խոսրով զօրավարը մհծ զօրքով Հայաստան մտաւ և Սոյեմոսը կապաղովկայի Սևերիանոս կուսակալից օգնութիւն ինչըցէ։ Եկեղեաց գաւառում պատերազմ տեղի ունեցաւ և երկու կողմերն էլ մհծ կորուստ ունեցան։ միայն պարթևները յաղթեցին, իսկ Սոյեմոսը Հոռմ փախաւ (161—162 թ.):

Հոռմայեցիք Լուցիոս Վերոնին մհծ զօրքով պարթևների դէմ ուղարկեցին և 169 թ. Սոյեմոսը նորից թագաւորեց։ Այսուեետև մեզ մինչ 190 թ. ոչինչ յայտնի չէ, միայն այդ թուականին թագաւորեց Սանատուկը, որ չեզոք մնաց։ Նրան յաջորդեց Վաղարշ որդին և Պարթևների հետ միաբանելով հոռմայեցոց դէմ արշա-

ւեց, բայց յաղթուեց ու հաշտութիւն ինդրեց։ Հռոմայեցի զօրավարները վճռեցին հայոց թագաւորութեանը վերջ տալ և 211 թ. Վաղարշին բանտարկեցին։

Այս գէպքը ստի կանգնեցրեց հայերին, նրանք ուժգին գիմագրութիւն ցոյց տուին և յաղթեցին Հռոմայեցիներին, իսկ Վաղարշը 216 թ. բանտառմ մեռաւ։ Վաղարշի մահից յետոյ Հռոմայեցոց Մարկիանոս կայսրը նրա որդիի Տրդատ Բ-ին 218 թ. թագ ուղարկեց և նա թագաւորեց։

Միւսոյն ժամանակ Պարթեաց եր ՍԱՍԱՆԵԱՆՔ կրում մի մեծ յեղաշրջում եղաւ։ Պարթեաց Ստանար քաղաքի ատրուշանի վերակացու Սասանի թոռ Արտաշիր Պաղաքը 212 թ. մեծ քաջագործութիւններ անելով ուզեց Գրողեարի թագը ժառանգել։ Պարթեաց Արտարան թագաւորը չհամաձայնուեց, իսկ Արտաշիրը զէնքի դիմեց, վերցրեց Ստանը քաղաքը և տիրեց Պէրսիս նահանգին։ Արտարան եւ ուզեց նրան բոնել տալ, բայց չյաջողուեց և Հորմիզդշան դաշտում պատերազմ եղաւ։ Արտարանը մեռաւ 224 թ., իսկ Արտաշիր Սասանը 227 թ. ազրի լի 28-ին իրեն արքայից արքայ հրատարակեց և այսպիսով հիմք գրեց Պարսկաստանում Սասանեան հարստութեանը։

Այստեղից մինչև Տրդատ Մեծը պատմութիւնը շատ խառն է և յայտնի չէ թէ ովքեր են իշխել Հայ յաստանում, բայց հայ պատմագիրները տալիս են Միշագետքի հայ թագաւորների պատմութիւնը։

ԱԲԳԱՐ Քրիստոսից 33 տարի առաջ Միշագաւորքի Մծրին քաղաքում հաւաքամ անունով մէկին թագաւոր են հրատարակում։ Արշամը ըստ աւան-

դութեան Տիգրանի եղբօր որդին էր և տեսնելով իր տկարութիւնը, հաշտուեց հռոմայեցիների հետ և 30 տարի թագաւորելով, յիշատակութեան արժանի ոչինչ չարեց, բայց նրա յաջորդ Արգարը յայտնի է դառնում որպէս առաջին հայ քրիս-



Ա Բ Գ Ա Ր

տոնեայ թագաւոր, Գահը ելնելուց երկու տարի յետոյ ամբողջ Հայաստանը հռոմայեցոց հարկատու դարձաւ և Օգոստոս կայսեր հրամանով

հողմայեցի հարկահանները Հայաստան եկան աշ-
խարհագիր անելու: Հարկահաններն իրենց հետ
բերել էին կայսեր պատկերը, որ գրին մեհեանի
մէջ: Հրէաստանի Հերովդէս թագաւորը, որ Ար-
շամի ճնշողներից մէկն էր եղել, պահանջեց, որ
իր պատկերն էլ դնեն կայսեր պատկերի կողքին,
սակայն Արգարը մերժեց, որի պատճառով պա-
տերազմ ծագեց և Հերովդէսը յաղթուեց:

14 թ. Քր. յ. մեռաւ Օգոստոս կայսրը և
յաջորդեց Տիբերիոս: Արգարը չնորհաւորելու հա-
մար դեսպաններ ուղարկեց Հռոմ, սակայն նը-
րանց այնտեղ անպատուեցին, որից Արգարը վի-
րաւորուելով ապստամբութեան համար պատրաս-
տութիւն տեսաւ ու Եղեսիայում ամրացաւ: Միե-
նոյն ժամանակ մեռաւ և պարթեաց թագաւորը
և նրա որդոց մէջ գահի համար խռովութիւն ըն-
կաւ: Արգարը որպէս պարթենների ազգական, գը-
նաց Պարսկաստան, հաշտեցրեց նրանց և ուրու-
կութեամբ հիւանդացած Հայաստան վերադար-
ձաւ: Նրա այս ճանապարհորդութիւնը հռո-
մայեցիներին կասկածի տակ գցեց և նա դես-
պանների միջոցով նրանց գործակալին պարզեց
եղելութիւնը: Այս դեսպանները վերադարձին լը-
սելով Քրիստոսի հրաշագործութիւնների մասին,
գնացին երուսաղէմ, անձամբ տեսան և երբ ե-
կան՝ պատմեցին ամեն ինչ Արգար թագաւորին:

Արգարը լսելով այս, անմիջապէս նամակով
իր մօտ հրաւիրեց Յիսուսին, որպէս զի բժշկէ
իրեն և իր մօտ էլ բնակուի: Յիսուսը պատաս-

խանեց, որ գալ չի կարող, բայց իր համբարձու-
մից յետոյ աշակերտներից մէկին կուղարկէ բժշկ-
կելու: Այս լսելով դեսպանների հետ եղած նկա-
ռիչը, ուզեց նկարել Յիսուսին, բայց Յիսուս ա-
ռաւ կտաւը և երեսին քաշելով տուեց նրանց իր
կենդանագիրը՝ «անծնուազործ դաստառակը»:

Քրիստոսի համբարձումից յետոյ Հայաստան
եկաւ Թադէոս առաքեալը, բժշկեց արգարին և
թագուհու, իշխանների, պալատականների ու ժո-
ղովրդի հետ մկրտեց նրանց ու սկսեց քարոզել:
Թադէոսն իր տեղ թագաւորի խոյրարար Արգէին
եպիսկոպոս ձեռնազըելով, գնաց հիւսիսային Հա-
յաստան:

Արգար քրիստոնէութեան ջերմ պաշտպան
հանդիսացաւ, հրամայեց ամեն տեղ ազատ պաշ-
տել, իսկ իր հարեան թագաւորներին էլ նամակ-
ներով խնդրեց չհալածել քրիստոնեաններին և 34
թ. վախճանուեց:

Արգարի մահից յետոյ Հայաս-
տանը երկու թագաւորութեան
ՅԱԶՈՐԴՆԵՐԸ է բաժանում. Եղիսիայում թա-
գաւորում է Արգարի որդի Ա-
նանունը, իսկ Հայաստանում քեռորդի Սանտ-
րուկը: Այս երկուսն էլ ուրացան քրիստոնէական
հաւատըննախարարների հետ քրիստոնեանների դէմ
սաստիկ հալածանք հանեցին: Անանունը նահա-
տակեց Արգէ եպիսկոպոսին, որովհետեւ նա չու-
զեց հեթանոս թագաւորի համար խոյր շինել:
Իսքն էլ շուտով պատժուեց. պալատի նորոգու-

թեան ժամանակ քարէ սիւներից մէկը ընկնելով
տեղն ու տեղը սպանեց չտրագործ թագաւորին:

Սանատրուկը, որ վաղուց ուղամ էր սպանել
Անանունին, լսելով նրա մահը, Աբգարի արու
զաւակներին կոտորեց, յափշտակեց նրա գահը,
իսկ Աբգարի կողջ Հեղինէ թագունուն, որից շատ
բարիքներ էին տեսել, Միջագետքի թագունի ա-
նուանեց, բայց Հեղինէն չկամեցաւ հեթանոսնե-
րի մէջ բնակուել և գնաց երուսաղէմ, որտեղ
իր կեանքը բարերարութիւններ պնելով ու աղ-
քատսիրութեամբ անցրեց:

Սանատրուկը տիրեց Աբգարի երկրին և սաս-
տիկ հալածանք հանեց քրիստոնեաների դէմ, ու-
րոնք բաւական բազմացել էին:

Քրիստոս աշխարհ եկաւ Հրէաստա-
Քրիստոնէութեան նում այն ժամանակ, երբ այդ Եր-
թիին, կիրը լցուած էր հեթանոսներով
բազմաստուածեաններով, բայց նա
գալիս էր որպէս Աստուծու որդի և նրա բարի խօսքի
քարոզիչ և իր աշակերտներին էլ ասաց «զնացէք ու-
սուցէք, քարոզեցէք բոլոր ժողովրդներին» Աստուծու
խօսքը: Նա եկաւ միայնակ, յաղթեց շատերին, երու-
սաղէմում կանգնեց այն խաչը, որի վրայ ինքը խաչուեց:

Հրէաստանի ժողովուրդը ճանաչեց Մեծ Քարոզ-
չին, ուստի նորը քարոզած խօսքը, ճանաչեց Աստծուն,
բայց հեթանու կառավարիչների հետ միաբանած ժո-
ղովրդի արիւն ծծողները «խաչեցէք նրան» էին աղա-
ղակում:

Նորա աշակերտները 30 թ. սկսեցին քարոզել:
Դրանցից թովմա առաքեալը Եփրատի ափերից սկսեց
իր քարոզը և մինչև Հնդկաստան հասաւ և նրան Տե-

տեց նաև Բարթուղիմէոս առաքեալը, իսկ Թագէոսը
Միջագետքում տարածեց քրիստոնէութեան լոյսը և
գնաց Հիւսիս:

Բայց ինչպէս էին ապրում քրիստոնեաները: Ա-
մեն տեղ նրանց հալածում էին, խիստ պատիժներ տա-
լիս, խաչում, տանջանքներով սպանում, գաղտների
կերակուր դարձնում և նրանք ստիպուած էին գաղտնի
աղօթել, գաղտնի աղօթատներ ունեին, որոնց մեծ մա-
սը գտնուում էր գետնի տակ, որտեղ հաւաքւում էին
նոքա և օրէցօր աճում-բազմանում, թէպէտ նրանց ան-
խայ կոտորում էին:

Սանատրուկն էլ արդպէս էր տանջում նրանց և
աւանդութիւնը պատմում է որ նա իր դստեր Սան-
տուխտին, որ քրիստոնեայ էր դարձել՝ Թագէոս առա-
քեալի հետ նահատակեց և շուտով արժանի պատիժ էլ
կրեց. մի օր որսի գնալով նրան պատահարար սպա-
նեցին, 65 թ.:


Սանատրուկը արքունի հարստութեան մեծ մասը
ծախսեց Մծրին քաղաքի նորոգութեան վրայ որով-
հետեւ երկրաշարժից կործանուել էր և մեռաւ առանց
չափահաս ժառանգի:

Արշակունի աղզից ժառանգ չլինե-
եր ՈՒԱՅՆԻ Բ. լու պատճառով նայ նախարարներն
65-85 թ. ու զօրքը մօր կողմից Արշակունի

Երուանդ իշխանին ընտրեցին թա-
գաւոր: Երուանդը դաժան դէմքով մի մարդ էր
և առասպելլը պատմում է, որ առաւօտեան կա-
նուխ նրա առջև կարծր ժայռերի կտորներ էին
բերում, որոնք նրա նայուածքից կտոր-կտոր էին
լինում:

Երուանդը դեռ ևս Սանատրուկի կենդանու-
թեան ժամանակ իր քաղցր վարմունքով իր կող-

մըն էր քաշել նախարարներին, բայց երբ թագաւոր եղաւ, իր գահի ապահովութեան համար Սահատրուկի որդոց սրի անցրեց։ Տիրասէր Սմբատ Բաղրատունի թագաղիր ասպետը չկամեցաւ ոչ



ԵՐՈՒԱԾՆԴ Բ.

ժառանգին թագաւոր պսակել և կոտորածից առ զատելով Արտաշէս մանուկին՝ փախաւ Պարսկաստան, որտեղ նրանց սիրալիր կերպով ընդունե-

ցին։ Արտաշէսը մեծանում էր Պարսկա արքունիքում արքայավայել Այս դէպքը երուանդին մտասանջութեան մէջ գցեց և նա դեսպանների միջոցով ապալքեց Պարսկա թագաւորին, որ Արտաշէսը Սանատրուկի որդին չէ, իսկ Սմբատին պատժելու համար նրա կալուածքները գրաւեց և նրա երկու աղջիկներին Անի (Կամախ) ամրոցում բանտարկեց։ Այս էլ չօգնեց նրան և յուսահատուած, Միջագետքը տուեց Հռոմայեցիներին, որպէս զինարկաւոր դէպքում օգնեն, իսկ ինքը գնաց Արմաւիր՝ բուն Հայաստանում բնակուելու։ Այդաեղ նա երկու ամուը քաղաք շինեց՝ Երուանդաշատ և Երուանդակերտ և ծննդոց անունով էլ որսի անտառ տնկեց։

Մինչ այս, Արտաշէսը չափահաս դառնալով, Սմբատի հետ պարսիկ օգնական զօրքով Հայաստան մտաւ հայրենի գահը ժառանգելու։ Նախարարներից շատերը նրա կողմն անցան, իսկ Մուրացան Արգամը՝ թագաւորի երկրորդը, երկորքով քանի մի նախարարների ու վրաց զօրքի հետ Երուանդի կողմը բռնեց։

Այս բանը Սմբատին շատ անհանդասաւացրեց և նա ծածուկ յայտնեց Արգամին, որ եթէ Երուանդից հեռանայ, դարձեալ կմնայ երկրորդութեան պատում։

Երկու բանակ Ախուրեան գետի մօտ իրարհանդիպեցին և Արգամն իր զօրքով հեռացաւ Երուանդի բանակից։ Տեղի ունեցաւ մի չափ-

սուած ճակատամարտ, երկու կողմերն էլ կը ու-
ռում էին կատաղի քաջութեամբ: Երուանդի գօր-
քը չկարողացաւ դիմանալ: Սմբատի քաջութեա-
նը և թէպէտ Տաւրացի վարձկան քաջերն աշխա-
տում էին սպանել Արտաշէսին, սակայն Գիսակ
իշխանը միջամտելով ազատեց նրան, իսկ ինքը
դէմքի կէսը կորցնելով մեռաւ:


Երուանդը յողթուեց և փախուստի դիմեց,
իսկ Սմբատը նրան մինչև Երուանդաշատի դրո-
ները հալածեց: Առաւտեան դէմ հասաւ և Ար-
տաշէսը, որին Երուանդը մար էր կանչում և
աժենքին ասում էր, որ նա ոչ թագաւորազն է,
այլ մար հովուի որդի: Սմբատի գօրքը մար ա-
մատ (մարն եկաւ) գոռալով, յարձակուեց քա-
ղաքի վրայ: Շուտով քաղաքն անձնատուր եղաւ
և Երուանդը իր արքունիքում թագնուեց: Քայց
մի դիմուոր վաղրով սպանեց նրան:

Արտաշէսը Երուանդին արքայավայել պա-
տռով թաղեց և գերեզմանի վրայ արձան կան-
գնեցրեց:

Այս յաջողութիւնից յետոյ, Սմբատաշէս թ. բատ Բագրատունին մտաւ Երուան-
դը 126 թ. դի գանձարանը և գտնելով Սան-
նատրուկի թագր՝ Արտաշէսին թա-
գաւոր պատկեց:

Արտաշէսն իր բարեկամներին վարձատրեց,
պարսից և մարաց օգնական գօրքերին նուէր-
ներով հայրենիք ճամբեց, Արգամին երկրորդու-
թեան պատուի մէջ հաստատեց, յակնթագարդ

պաակ, ականջներին օղեր և մի ուսին կարմիր
կօշիկ կրելու ու ոսկէ գդալ պատառաքաղով ճա-
շելու կրաւունք չնորհեց, որ միայն թագաւոր-
ներին էր յատուկ: Մնաց Սմբատը, որին Արտա-
շէսը գլխաւոր սպարապետ և երկրի ու արքու-
նիքի վերակացու նշանակեց, Գիսակի ժառան-
գներին Դիմաքսեան անունով նախարարութեան



ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ.

պատիւ տուեց, նախարարներին էլ արժանաւոր
կերպով վարձատրեց, իսկ Պարսից թագաւորին
Սմբատի ձեռքով մեծագին ընծաներ ուղարկեց:

Այս բոլորից յետոյ Արտաշէսը ուզում էր
երկիրը բարեկարգել և երբ նա Արտաշատը նո-
րոգեց ու իրեն մայրաքաղաք դարձրեց, դեռ ևս

ծրագիրը չիրագործած՝ Ալանաց թագաւորը կովկասեան լեռնականների գլուխն անցած Հայաստանի վրայ արշաւեց: Հայոց զօրքը բաջութեամբ ետ մղեց նրանց և Արտաշէսը գերելով ալանաց արքայորդուն՝ կուր գետի աջ ափին բանակեց: Ալանները խնդրեցին ազատել արքայորդուն ու խոստացան երբէք չմօտենալ Հայաստանին, առկայն Արտաշէսը մերժեց:

Այդ ժամանակ ալանների արքայագուստը գեղեցիկ Սաթենիկը գետի միւս ափից կանչեց Արտաշէսին և խնդրեց ազատել իր եղբօրը ասելով, որ լաւ չէ թագաւորապնին ստրկացնել և երկու քաջ ազգերի մէջ թշնամութիւն գցել:

Արտաշէսը շատ հաւանեց գեղեցկունուն և Գողթան երգիչները հին ժամանակ երգում էին թէ «Քաջ Արտաշէսը հեծաւ իր գեղեցիկ սև ձին, սրաթև արծուի պէս անցաւ գետի միջով, ոսկէզօծ շիկափոկ պարանը զցեց, բոնեց օրիորդին և արագութեամբ իր բանակը բերաւ» ու ամուսնացաւ: Հարսանիքի համար էլ երգում էին, որ ոսկի ու մարգարիտ էին շաղ տալիս:

Արտաշէսը նկատեց, որ երկիրը շատ էր աւերուել առևտուրը ընկել էր, ջրերում նաւազնացութիւնը ընդհատուել, ձկնորսութիւնն ու երկրագործութիւնը շատ փոքր չափով էին տեղի ունենում, իսկ երկրի գաւառների ու նահանգների սահմաններն իրար էին խառնուել, որից յաճախ վէճեր էին ծագում: Նա նախ երկրի սահմանները որոշեց և գաւառներն իրարից բաժանեց սահմանաքարերով, կամուրջներ շինեց, ջրերում նաւազնացութիւն սկսել տուաւ, իսկ յետոյ ժողովրդի


անտեսական դրութիւնը բարելառելու համար ձկնորսութեան, երկրագործութեան և արհեստներին մեծ զարկ տուեց, անձշականքնակ գաւառները տուեց Ալան գաղթականներին ու Կասպից երկիրներից բերած գերիներին: Բացի այս նա կանոնաւորել տուեց օրացոյցը և հայոց մէջ տոմարական հաշիւ մացրեց:

Ըստանեական կեանքում Արտաշէսը շատ անբաղդ էր. Արտաւազդ որդին չարասիրտ ու նախանձու լինելով, ուզեց Արգամից նրկորդութեան պատիւը խել և սպանեց ծերունի Արգամին: Մինչև անգամ Սմբատին էլ ուզեց սպանել սակայն խոհեմ Սմբատը թողեց սպարապետի պաշտօնը և Տմորիք քաշուեց:

Արտաւազդը վատ օրինակ եղաւ իր եղբայրներին, որոնք նախանձեցին, բայց խելացի Արտաշէսը նրանց էլ գոհացրեց ու պաշտօններ տուեց՝ Վրույրին հազարապետի ու արքունապետի, Մաժանին՝ քրմապետի, զօրքն էլ չորսի բաժանելով Արեւելեան գունդը յանձնեց Արտաւազդին, Արևմտեանը՝ Տիրանին, Հարաւայինը՝ Սըմբատին, Հիւսիսայինը՝ Զարեհին:

Երկրի ներքին բարեկարգութիւններից յետոյ Արտաշէսն սկսեց զբաղուել երկրի քաղաքական ապահովութեամբ և Հոռմայեցիներին պարբերաբար արուող հարկը գաղարեցրեց, բայց Տրայանոս կայսը մեծ քանակով եկաւ, յաղթեց հայերին ու միւս ազգաւամբ ազգերին և թագաւորը սակագուեց հարկ աւալ ու հաշտուել: Այս պատերազմից յետոյ Արտաշէսը հոռմայեցոց յանձնաւ-

բարութեամբ պարթկաց աշխարհը գնաց, բայց
Մարանդ գաւառի Բակուրակերտ աւանում հի-
ւանդանալով Արեղոյ Նախարարին ուղարկեց Ե-
րիզայի աստուածներից կեանք խնդրելու, ու-
կայն մինչև նորա վերադարձը մեռաւ:




ԱՐՏԱՇԵՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Արտաշեսի թաղումը չատ փառաւոր էր, մարմինը
զըել էին ոսկէ դագաղի մէջ, բեճեղէ անկունի մէջ,
հագցրել էին երկար ոսկէթել զգեստը, զլիին թագը և
դագաղի առջնը իր ոսկէ զգեստները: Դագաղի չորս
կողմը գնում էին իր որդիքն ու ազգականները, որոնց
ետեից զինորական պաշտօնեանները, յետոյ նախա-
րարներն իրենց զինուած գնդերով: Յուղարկաւորու-
թեան առջևից գնում էին փողահարները, իսկ ետեից
գնում էին լալկան կանայք ու անթիւ ժողովուրդ: Ար-

տաշէսին այնքան էին սիրում, որ շատերը՝ մերձաւոր-
ներն ու ժողովուրդը, ծառաներն ու ուրիշները գե-
րեզմանի մօտ անձնասպան եղան: Արտաշէսը 41 տա-
րի թագաւորեց:

Զարաբարոյ Արտաւազդը, որ
ԱՐՏԱՇԵՍԻ դեռ հօր կենդանութեան ժա-
ՅԱԶՈՐԴՆԵՐԸ մանակ դառնացրել էր նրա սիր-
տը, մահից յետոյ իր հօր թաղ-
մանն էլ նախանձեց: Գողթան երգիչներն եր-
գում էին, որ երբ Արտաշէսին թաղում էին ու



ԱՐՏԱՒԱԶԴԻ ԳԱՀԱՎԻԺՈՒՄԸ

շատերը կսկիծից անձնասպան եղան, նա դոչել
էր՝ «Դու գնացիր և ողջ երկիրը հետդ տալար,

ես աւերակների վրայ որպէս թագաւորեմ»։ Արտաշէսն էլ իբր թէ գերեզմանից անիծել էր նրան պատասխանելսվ՝ «Եթէ դու Ազատ Մասիսը որսի գնասա, քեզ կրթոնեն քաջքերը, կտանեն Ազատ Մասիսի բարձունքները, այնտեղ մնաս և թող լոյս չտեսնես»։

Այս անէծքը կատարուեց և մի օր Արտաւագդը Մասիսի բարձրաւանդակները որսի գնալով, ցնորուեց ու երփարի հետ վիճը ընկնելով կորաւ։ Փողովուրդը պատմում էր, որ Արտաւագդը մի այրի մէջ շղթայուած էր և իր երկու շները կրծում էին շղթաները, որ ազատուի և աշխարհին վերջ տայ, բայց դարբինների սալի ու մուրճի ձայներից շղթաները դարձեալ ամրանում էին։

Տիրան Ա. 131—151. Արտաւագդի եղբայր ու յաջորդ Տիրանը հոռմայեցոց կայսեր զրկած թագով ու ծիրանով թագաւոր պասկուեց և կայսեր ու իր պատկերով դրամ տպեց։ Սա զբոսաւէր մարդ էր և 21 տարի թագաւորելով, մի օր ճանապարհին ձիւնի բռնուելով մեռաւ։

Տիգրան Գ.—Արտաւագդի փոքր եղբայր Տիգրանը Պարթևաց հետ միացաւ և յաղթեց հոռմայեցոց, մինչև անգամ Փոքր Ասիա մտաւ, բայց մի թագուհի բռնեց նրան և բանտարկեց, որտեղից ազատուեց փեսայնալով հոռմայեցոց կայսեր։

Վաղարշ 193—217 թ.—Սա յաջորդելով իր հօրը Վաղարշաւան անունով քաղաք հիմնեց, իսկ Վարդգէսի աւանը նորոգելով Վաղարշապատ անուանեց։ Վաղարշը բարեկամացաւ հոռմայեցոց հետ, որպէս զի երկիրը խաղաղուի, սակայն Խաղարներն ու Բասլաց ազգը

ձորա պահակից անցնելով, Հայաստան մտան։ Երկու անգամ հայերը ընդհարուեցան նրանց հետ և յաղթեցին, սակայն վերջին կուռում Վաղարշը սպանուեց։

Վաղարշի հրամանով Նաւասարդ ամսի առաջին օրը, որ հայոց նոր տարին էր, մեծ շքով էին առնում և կուսաների Բագաւան քաղաքում մեծ հանդէսներ էին կատարում։ Բագաւանը, որ Դիցաւան էլ էր կոչում, կառուցուած էր նպատ լերան հիւսիսային ստորառում։ այնտեղ կար Վանատուր չաստուծու բագինը, որ հիւրընկալութեան համար էր և այնտեղ եղած զոհերի միաը բաժանւում էր անցորդներին։

Վաղարշին յաջորդեց Խոսրով ԽՈՍՐՈՎ ՄԵԾ որդին, որ իր հօր վրէժն առնեւ 218—260 թ. լու համար անցաւ Կովկասեան լեռներով, յաղթեց լեռնականներին և իբր նշան յաղթութեան արձան կանգնեց, իսկ նուաճած ազգերից հարիւրին մէկը պատանդ վերցնելով՝ դարձաւ Հայաստան։

Այս պատերազմից յետոյ նա իր զէնքը հըստմայեցիների դէմ դարձեց, որոնք Հայաստան էին մտել, և փառաւոր յաղթութիւն տարաւ։

Այս Խոսրովի ժամանակն էր, որ Արտաշէր Սասանը թագաւորեց։ Աւանդութիւնը պատմում է, որ Արտաշէրը մտաւ Հայաստանը, բայց Խոսրովը յաղթեց նրան ու մինչև Հնդկաստան փախցրեց։ Արտաշէրը ապագայ պարտութիւնների առաջն առնելու համար՝ իր մօտ կանչեց պարսիկ նախարարներին և մեծ վարձ խոստացաւ նրան, ով կսպանէր Խոսրովին։ Այդ բանը յանձն առաւ Պարթև Անակ նախարարը և փախաստական ձեա-

նալով, Խոսրովի մօտ եկաւ ու մեծ պատռով
ընդունուեց:


Խոսրովը պատրաստում էր Արտաշրից վրե-
ժը լուծելու, երբ մի օր որսի ժամանակ Անակը
սպանեց Խոսրովին և ձիով փախաւ: Նախարար-
ներն ընկան նրա ետեից և Տափերական կամրջի
մօտ բռնելով խեղզեցին երասխ գետի մէջ, իսկ
մեռնող Խոսրովը հրամայեց, որի անցնել Անա-
կի ամբողջ ընտանիքը:

Խոսրովի մահից յետոյ հայ

ՏՐԴԱՏ ՄԵԾ Նախարարները դիմադրեցին պար-
295—336 թ. սից հալածանքին, բայց Արտաշր-
ըրը յաղթեց և հրամայեց կոտորել Խոսրովի ըն-
տանիքը, որից ազատուեց Տրդատ որդին և Ար-
տաւագդ Մանդակունի նախարարը նրան Հռոմ
փախցրեց, իսկ Օտա Ամատունին ազատելով
Խոսրովագուխար դստերը, արքունի գանձերի հետ
Անի ամրոցը տարաւ: Այս անգամ Հայաստանի
արևմտեան մասին հռոմայեցիք տէր դարձան և
276 թ. մի հայ իշխան կուսակալ էր այնտեղ
իսկ արևելեան Հայաստանը մնաց պարսիկներին:

Բատ աւանդութեան Տրդատը դաստիարակ-
ւում էր Հռոմում և որպէս քաջ մարդ շուտով
անուն հանեց: Պատմում են, որ մի անգամ նա
մէկ ձեռքով վայրի ցուկի եղջերները պոկեց, մի
օր էլ ձիարշաւին հակառակորդը նրան յոպնակից
վայր գցեց. զայրացած Տրդատը ընկաւ նրա ե-
տեից և մի ձեռքով յոպնակը կանգնեցրեց: Հռո-
մայեցոց ու Պարսից պատերազմի ժամանակ

երբ հռոմայեցիք յաղթուեցան և յըրուեցան, Տըր-
դատի ձին վիրաւորուած լինելով՝ չկարողացաւ
փախչել, ուստի նա վերցրեց զէնքերն ու ձիու
թամբը և լողալով անցաւ եփրատի միջով: Գոթաց



ՏՐԴԱՏ ՄԵԾԸ ԵՒ ԼՈՒՍԱԿՈՐԻՉԸ

Ճոչէ թագաւորը Հռոմայեցոց կալուածները մըտ-
նելով Դիոկղետիանոս կայսեր մենամարտի կան-
չեց: Կայսեր փոխանակ Տրդատը գնաց և Հռչէին

բռնելով բերեց կայսեր մօտ կայսը իրեւ
վարձ թագաւորական ծիրանի հազցրեց և զօրք
տուեց, որ իր հօր տեղը թագաւորէ:

Տրդատը հասաւ կեսարիա, որտեղ նրան
դիմաւորեցին հայ նախարարներից շատերը, իսկ
երբ Հայաստան մտաւ, նրան դիմաւորեց Օտար
Ամատունին Խոսքովադուխտի և գանձերի հետ:

Տրդատը Հռոմում հեթանոսական ոգով էր
դաստիարակուել և իր յաջողութիւններից յետոյ
շնորհակալութեան զոհ մատոյց երիզայում Ա-
նահիտ դիցուհուն: Այդ ժամանակ նրա մօտ էր
ծառայում և Անակի որդի Գրիգորը, որ ծնաւ
257 թ. և երբ Անակի ընտանիքը որի քաշեցին,
իր ստնտու Սոփիան ազատեց և գաղտնի Կե-
սարիա փախցրեց, որտեղ նա քրիստոնէական
ոգով կրթուեց: Երբ Գրիգորը խելահաս էր, ի-
մացաւ որ իր հայրը սպանել է Տրդատի հօրը,
հօր մեղքը քաւելու համար Տրդատի մօտ մտաւ
ծառայելու: Տրդատը հրամայեց Գրիգորին, որ
Անահտի արձանը պսակներով զարդարէ, սակայն
նա, որպէս քրիստոնեայ՝ հրաժարուեց: Զայրա-
ցած Տրդատը հրամայեց չարչարել մինչև իր
հաւատն ուրանայ, բայց երբ իմացաւ որ նա իր
հօրը սպանողի որդին է, հրամայեց նախ տասն-
երկու չարչարանքներով տանջել, իսկ յետոյ
գցել Սրտաշատի Խոր Վիրապը: Բայտ աւանդու-
թեան Գրիգորը 14 տարի մնաց Խոր Վիրապում,
կերակրուելով մի բարեպաշտ կնոջ ամեն օր
գցած հացի կտորներով:

Տրդատն այսքանով էլ չբաւականացաւ և
երբ հասաւ բուն Հայաստանը ու թագաւորեց՝
քրիստոնէութեան դէմ սաստիկ հալածանք հա-
նեց: Այդ ժամանակ Հայաստան փախան կոյսեր,
որոնց հալածել էր Դիոկղետիանոս կայսը: Կայ-
սը գրեց Տրդատին նրանց մասին և Տրդատը
հրամայեց որոնել. նրանց գտան Վաղարշապատի
հնաձններում: Տրդատը, տեսնելով գեղեցկուհի
Հոփիսիմէ կուսին, ցանկացաւ ամուսնանալ, բայց
նա հրաժարուեց և Տրդատի զինուորները Վա-
ղարշապատի մօտ նահատակեցին նրանց:

Այս չարագործութիւններն անպատիժ չմնա-
ցին: Տրդատը մի օր մեծ հանդիսով որսի քնա-
լով խելագարուեց և սկսեց անտառներում թա-
փառել: Դիւահարուեցան նաև նախարարներից
շատերը: Մինչ թագաւորը տանջուում էր, Խոս-
րովդուխտը քանիցս երազում տեսաւ, որ Վիրա-
պում եղած Գրիգորը միայն կարող է բժշկել
նրան, սակայն ոչ ոք չէր հաւատում, որ նա
կարող էր կենդանի մնալ, բայց և այնպէս Օտան
գնաց և գտնելով նրան, հանել տուաւ Վիրապից:

Ս. Գրիգորն սկսեց քարոզել, բժշկեց Տրդա-
տին և 298 թ. (ըստ ոմանց 301 թ.) նրան իր
ընտանիքով, պալատականների ու ժողովրդի հետ
մկրտեց: Սորանից յետոյ Ս. Գրիգորը ամփոփեց
և կոյսերի մարմինները նահատակութեան տե-
ղերում, Հոփիսիմէի, Գայիսանէի, ու Շողակաթի
անունով վկայարաններ շինեց, որոնք այժմ էլ
կան չուն են էջմիածնի մօտերքում:

Ա. Գրիգորը մի տեսիլ տեսաւ՝ Միածին Փրկիչն իջաւ երկնքից և ոսկէ մուրճով խփեց զետնին։ Մուրճի խփած տեղը 303 թ. մի մեծ եկեղեցի շինեց և տեսլի համաձայն էջմիածին անուանեց, որ դարձաւ Մայր Եկեղեցի և աթոռանիստ կայան Հայոց կաթողիկոսների։

Ա. Գրիգորը քրիստոնէութեան լոյսը տարածելու համար կոչուեց Հայոց երկրորդ լուսաւորիչ։

Ա. Գրիգորը կեսարիայում ամուսնացել էր Մարիամ անունով յոյն աղջկայ հետ, որից երկու որդի ունեցաւ՝ Արիստակէս և Վըթանէս։ Ա. Գրիգորն ու Մարիամը շատ աստուածաւուն էին և բաժանուեցան միմեանցից, Արիստակէսը յանձնուեց դայեակներին, իսկ մայրը Վըթանէսի հետ կուսանոց մտաւ։

Լուսաւորիչն ամբողջ Հայաստանի մէջ քրիստոնէութիւն քարոզեց, քանդեց կոաւաները և Եկեղեցիներ շինեց, դպրոցներ, աղքատանոցներ ու անկելանոցներ բացեց և եպիսկոպոսներ ձեռնազրեց, իսկ ինքն սկսեց առանձնական կեանք վարել ու իր որդի Արիստակէսին յանձնեց իր հօտը։

Արիստակէսը ներկայ գտնուեց 325 թ. Նիկայում հայրապետների ու ժողովին, որտեղից բերեց Հաւատոյ հանգանակը (Հաւատամք ի մի Աստուած...) որ և եղաւ հիմք Հայոց Եկեղեցու։ Ա. Լուսաւորիչն էլ ճգնում էր Սեպուհ լերան Մանեայ այրում, ուր վախճանուեց 332 թ., Հովիւները վերցրին մարմինը և թաղեցին, բայց

մի քանի տարի յետոյ գտնելով նրա մարմինը, փոխադրեցին Թորդան գիւղը։

Տրդատը քրիստոնէութեան ջերմ ՏՐԴԱՏԻ պաշտպան հանդիսացաւ և քրիստոնէայ կոստանդիանսս կայսեր տեսութեանը գնաց։ Պարսից թագաւորը օգտուելով նրա բայցակայութիւնից՝ գըրգուեց հայ նախարարներին և Սլկունեաց Սլուկիշանը ապստամբուելով Տրդատից ամրացաւ Տարօնում։ Բայց ներքին խոռվութեան վրայ աւելացաւ և արտաքինը՝ հիւսիսային լեռնական ազգերը Հայաստան արշավեցին։ Տրդատը լսելով այս, շուտով վերագարձաւ և իրեն հաւատարիմ նախարարների հետ զօրքը վերցրեց և Մուշեղամարդ դաշտի վրայ հանդիպեց լեռնականներին։ Պատերազմի ժամանակ Բասլաց Գեղուենոն թագաւորն աշխատում էր ըստ իրենց սովորութեան չուանով բռնել Տրդատին, բայց նաձիով վրայ ընկաւ և երկու կէս արեց Գեղուենոնին։ Սլուկի իշխանին պատժեց Մամզունը, որ Զինաստանից էր Եկել և, ոսկանելով նրան, նախարարի պատուին արժանացաւ։ Այս նախարարութիւնը կոչուեցաւ Մամիկոնեան։ Այս բանից յետոյ Տրդատը յարձակուեց պարսից վրայ և մինչև նոր Եկբատան քաղաքը հասաւ, իսկ պարսիկները ստիպուած հաշտուեցան։ Տրդատը ծերանալով ու միևնույն ժամանակ զզուելով նախարարների վատ արաքներից, Մանեայ այրը քաշուեց ճգնելու, նախարարներից թունաւոր-

ուելսկ մօտ 336 թ, մեռաւ ու թաղուեց թորդան գիւղում:


Տրդատից յետոյ անկարգութիւնն ըրդան 336 աներն այն աստիճանի հասան, որ ջորդները զորրորդ Հայոց Արքեղայոս իշխանը սպանեց Արքստակէս հայրապետին, որին յաջորդեց Վրթանէսը, որ նախարարների հետ Տրդատի Խոսրով որդուն թագաւոր հրատարակեց (336—343 թ.): Խոսրով Փոքրը կամ Կոտակը իր կեանքը որսորդութեան մէջ անցրեց և Խոսրովակերտ ու Դուին քաղաքները հիմնեց: Այս շինութիւնների ժամանակ հիւսային լեռնականները նորից Հայաստան արշաւեցին, բայց Վահան Ամատոնի իշխանը Օշականի Առավարների մօտ յարձակուեց, շատերին կոտորեց, իսկ մնացածներին հալածեց:

Խոսրովի օրով պարսիկները նորից փորձեցին Հայաստանի երբեմն իրենց ձեռքն եղած գաւառները խլելու, սակայն չյաջողուեց: Խոսրովը մեռնելով, նրան յաջորդեց մոլի եղբայր Տիրան Բ. (343—353 թ.): որ Յուլիանոս ուրացող կայսեր պատկերը եկեղեցում գրեց, Յուսիկ հայրապետը տեսնելով այդ անկարգութիւնը՝ ջարդ ու փշուր արեց պատկերը, իսկ Տիրանը ծեծելով սպանել տուաւ Ս. Յուսիկին:

Տիրանը չկատարեց պարսից թագաւորին տուած իր խօսքը՝ պարսից ու յունաց մէջ չեղոք լինելու, և պատերազմի ժամանակ յունաց

կողմն անցաւ, որի ճամար պարսից Շատուհ թագաւորը բանեց նրան ու կուրացրեց:

Եպոնակ թագաւորը Հայոց սիրառ 353—368 թ. որդուն Հայաստանի թագաւոր հըմար բարատարակեց, բայց յոյներն իրենց



ԱՐՃԱԿԻ ՄԱՀԼ սկսեմ մաքավաղեմի սովորութեամբ նրանից հարկ պահանջեցին: Արշակն անարգեց նրանց դեսպաններին և յունաց կայսրը Թէոդոս զօրավարին զօրքով Հայաստան ուղարկեց: Վախեցած Արշակը ժամանակի ներսէս Մեծ հայրապետին միջնորդ ուղարկեց Թէոդոսի մօտ. նա հաշտուեց, իսկ Արշակն ի պատիւ այդ հաշտութեան ամուսնացաւ:

կայսեր ազգականուհի Ոլիմպիադա օրիորդի հետ: Այսուհետև Արշակն սկսեց անկարգ կեանք վարել. իր եղբօրորդի Գնէլին զրկեց կալուածներից, որի համար Արշակի կուրացած հայր Տիրանը յանդիմանեց նրան, բայց Արշակը նախ իր հօրը խեղդել տուաւ, յետոյ էլ սպանեց Գնէլին ու նրա Փառանձեմ կնոջ հետ ամուսնացաւ, իսկ Ոլիմպիադային մի անպիտան քահանայի ձեռքով թունաւորեց: Չարիքներից մեծն այն էր, որ նա Արշակաւան անունով մի քաղաք հիմնեց և որպէսզի քաղաքը շուտով լցուի բնակիչներով յայտարարեց, որ ամեն մի չարագործ կազատուի պատժից, եթէ այնտեղ բնակուի: Շուտով երկիրն ամեն տեսակ չարագործութեան բուն դարձաւ և նախարարները դժգոհ նաև այն բանից, որ թագաւորն անմեղ տեղ Սիւնեաց ու Կամսարականաց ցեղը համարեա ամբողջովին ջնջել էր տուել, պահանջեցին վերջ տալ անկարգութիւններին ու Արշակաւանին: Արշակը չհամաձայնուեց ու նախարարները յարձակուեցան, որի անցրին Արշակաւանը և միայն երեխաներն ազատուեցան ներսէս Մեծի շնորհիւ:

Այս բանի կողմնակից գտնուեց նաև պարսից Շապուհ թագաւորը և Ալանոզան զօրավարին զօրքով Հայաստան ուղարկեց: Ալանոզանը շուտով նեղեց Արշակին և կալանաւորելով Պարսկաստան տարաւ: Շապուհը պահանջեց Փառանձմին ու նախարարների կանանցը, բայց նախարարները պատերազմով պատասխանեցին և

յաղթելով, մեծ մասամբ ընտանիքներն առած Յունաց Հայաստան փախան:

Զայրացած Շապուհը թագաւորից լուծեց իր վրէժը և շրջթայակապ Անոյշ բերդն ուղարկեց նրան. հաւատուրաց Մեհրուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան նախարարներին էլ մեծ բանակով Հայաստան զրկեց: Նրանք Արտագերս բերդում բռնեցին Փառանձեմ թագուհուն և շատ ուրիշների հետ Ասորեստանում ցցի վրայի ըսպանեցին, իսկ Արշակը լսելով այս անցքերը, 368 թ. Անոյշ բերդում անձնասպան եղաւ:

Արշակի մահից յետոյ Հայաստանը Բ-ի տանը Մեհրուժանի ասպատակութեան մեջ թիւնների ասպարէզ դարձաւ: Ներսէս Մեծ հայրապետը դիմեց յունաց կայսեր, որ նրա մօտ պատանդ եղած Արշակի որդի Պապին թագաւորացնէ: Կայսրը զիջու հայրապետին և 368 թ. նրան յունական զօրքի հետ Հայաստան ուղարկեց: Յունաց զօրքը Զիրաւ դաշտում հանդիպեց Մեհրուժանի պարսիկ զօրքին և Նպատ լերան մօտ պարսից զօրքը յաղթուեց, իսկ Մեհրուժանը փախստի դիմեց, սակայն Սմբատ Բաղրատունի սպարապետը հասաւ և բռնեց նրան: Սմբատը ուղում էր նրան բանակը տանել, բայց մտածելով որ Ներսէս հայրապետը կիսդայ նրան և կազատէ, մօտիկ զտնուող վրանաբնակներից վերցրեց տաքացած շամփուրը, ոլորեց պատակի ձևով և դնելով նրա զլիին ասաց. «Պատամ եմ բեզ, Մեհ-

բուժան, որովհետև յանկանում էիր Հայոց թագաւոր դառնալ և ես թագաղիր ասպետ լինելով պիտի որ հայրենական պաշտօնս կատարեմ։ Ապա մեռաւ Մեկուժանը, որ մինչև իր մահը հայրենիքին դաւաճանեց և երեք չզղջաց։

Պապը վարակուել էր յունական մոլութեամբ և ներսէս Մեծը շարունակ յանդիմանում էր նըրան, որի համար Պապը գաղտնի թունաւորել տուաւ հայրապետին և Թիրն աւանում թաղեց։ Պապը դէպի յոյներն էլ ապերախտ գտնուեց, որի համար Տերենտիանոս զօրավարը բռնեց նըրան, տարաւ կ. Պօլիս, ուր 374 թ. գլխատեցին։

Պապի յաջորդ Վարազդատը Հայաստանի յոյն իշխանների կամայական գործողութիւնների դէմ բողոքելու համար գնաց կ. Պօլիս, բայց կայսը փոխանակ ընդունելու նըրան, աքսորել տուաւ, իսկ նրա փոխարէն Պապի Արշակ Գ. (379—384) և Վաղարշակ Բ. որդիներին Արևելեան և Արեմտեան Հայաստանի թագաւորներ կարգեց։ Կայսը այս բաժանմամբ ուզում էր ազգը երկսի բաժանել, որպէս զի ներքին խոռվութիւնները հնար չտան ապստամբելու յունաց դէմ։ Այս բաժանումը ճիշտ որ շատ թուլացրեց երկրի ոյժը, մանաւանդ որ պարսից Հայաստանը երեք տարի պարսիկ մարզպանով էր կառավարւում։

Վաղարշակը շուտով մեռաւ և պարսից մասում թագաւորեց Խոսրով Գ. (386—391 թ.)։ Շատ չանցած մեռաւ նաև Արշակը, իսկ Խոսրովը միացնելով երկու թագաւորութիւնները միա-

յնակ էր թագաւորում։ Նա որպէս ազատասէր մարդ ոչ պարսից և ոչ էլ յունաց կողմն էր բըռնում և ներսէս Մեծի թոռ Ս. Սահակին կաթողիկոս նշանակեց։ Շապուհը զայրացած այս կարգադրութիւնների վրայ, իր Արտաշիր որդուն Խոսրովի դէմ զրկեց և նա Խոսրովին ձերբակալեց ու շղթայած Անոյշ բերդն ուղարկեց։

Խոսրով Գ. ից յետոյ թագաւորեց խաղաղասէր ու բարի Վուամշապուհ եղբայրը։ Նա լաւ գիտէր անցեալ սխալների տիսուր հետևանքները և այդ միակ պատճառով թէ յունաց և թէ պարսից հետ հաշտ մնաց, մինչև անգամ այն երկու



Ս. ՍԱՀԱԿ

ազգերի մէջ ծագած մի վէճի համար Միջագետք գնաց որպէս միջնորդ դատաւոր և գործը հաշտութեամբ վերջացրեց։ Բացի այս, նրա թագաւորութիւնը հայոց համար մի դարավլուխ է և այդ օրից կեանք է առնում հայոց լեզուն, գիր ու գրականութիւնը և քաղաքական անդորր կեանքում հայ ժողովուրդը հոգեպէս էլ միխթարւում է, ոտը դնում լուսաւորութեան ճանապարհին։

Սորա ցանկութիւններին կամակատար հանդիսացաւ Մեսրոպ Մաշտոց վարդապետը, որ Տարոնի Հացեկաց գիւղիցն էր, ծնուած՝ 361 թ., լաւ վարժյունարէն, ասորերէն և պարսկէրէն լեզուներին։ Մեսրոպը նախ զինուորական էր, յետոյ արքունիք քարտուղար, բայց 400 թ. նա կուսակրօն եղաւ։



U. UBUUUNQ

որպէս զի մի կերպ հայերէն տառեր կազմէ: Ժողովում թագաւորը յայտնեց, թէ ինչպէս ինքը լսել է Միջագետքում Դանիէլ անունով մի եպիսկոպոսի մօտ հայերէն տառեր կան: Այս բանը շատ հաւանական է, որովհետև նախնի հայերը պէտք է որ շրջակայ ազգերի պէս ունենային սեփական նշանագրեր, բայց ի հարկէ չկատարելազործած, որովհետև քաղաքական հանգա-

Նա տեսնում
էր, որ հայերը սե-
փական գիր ու
դպրութիւն չու-
նեն, եկեղեցինե-
րում յունարէն
ու ասորելէն են
կարդում և ժողո-
վրդին թարգմա-
նում, ուստի և Ա.
Սահակ հայրապե-
տի ու թագաւորի
հաճութեամբ Վա-
ղարշապատում մի

մանքները չէին թոյլ տալիս։ Դանիէլեան նշանագրերի լուրը ստուգելու և եղածն սւսումնասիրելու համար Վահրիճ անունով մէկին դրկեցին նրա մօտ։ Վահրիճի բերածը պակասաւոր էր և Մեսրոպն ինքը գնաց սովորելու, բայց ոչինչ չգտաւ բացի Վահրիճի բերածից, ուստի ձանապարհորդեց այն կողմերը, որպէսզի նշանաւոր մատենագարաններում որոնէ։ Մեսրոպի ջանքներն ի դուր անցան և ըստ աւանդութեան նա Աստծուն ապաւինեց ու 406 թ. գտաւ գրերի պակասը։

Այս տեսնելով թագաւորն ու կաթողիկոսը,
անմիջապէս դպրոցներ բացին, սկսեցին ուսու-
ցանել և ամբողջ Հայաստանը նոր կեանք ու կեն-
դանութիւն ստացաւ։ Մերոպի առաջին աշա-
կերտները ուսումը կատարելագործելու համար
Աթէնք, Ալէքսանդրիա և ուրիշ քաղաքներ զբ-
կուեցան և վերադառնալով շարունակեցին իրենց
ուսուցիչների գործը։

Այդ աշակերտներից նշանաւոր եղան Հայոց պատմութիւնը գրող Մովսէս Խորենացին, Ս. Մեսրոպի կննասպիր Կորինտը, «Եղծ աղանդոց»-ի հեղինակ Եղիկ Կողմացին, Վարդանանց պատմիչ Եղիշեն, Վահանիկ պատմութիւնը գրող Ղազարը, Դաւիթ անյաղթ Փիթլսոփիան, Ղեռնդ երէցը, Յովսէփ Եկեղեցացին, Յովսէփ Պաղսացին և այլք, որոնք օգնեցին Մեսրոպին և հայ գպութեան զարկ տուին:

— Ծեսրոպն իր աշակելտների օգնութեամբ թար-
զմանեց Աստուածաշունչ ս. գիրքը, եկեղեցական գըր-
քերը և հայոց եկեղեցու համար մի ծիսարան կազմեց,
9

որ Մաշտոց է կոչւում։ Աղքային այս յառաջադիմութիւնը այնքան մեծ ու նշանաւոր երկոյթ էր, որ կոչուեց «Ոսկեղար Հայոց Գրականութեան»։

Վոամշապուհը 21 տարի խաղաղ թագաւորելուց յետոյ մեռաւ և ազգը մնաց անմիտիթար։

Վոամշապուհի մահից յետոյ Ս. Վ. Ա. Մ. Շ. Ա. Պ. Ի. Ս. Ս. Ա. Կ. Մ. իջնորդութեամբ Խոս-ՅԱԶՈՐԴՆԵՐԸ ըով Գ. ազատուեց Անյուշ բերդից և մի տարի թագաւորելով

414 թ. մեռաւ։ Պարսից թագաւորը օգտուեց հանգամանքից և իր որդի Շապուհին թագաւոր կարգեց (414—418 թ.), բայց նա այնքան նախատինք կրեց հայերից, որ ստիպուած էր հեռանալու և 4 տարի թագաւորելուց յետոյ հայրենիք գնաց, որպէսզի իր հօր տեղը թագաւորէ։ Շապուհի հեռանալուց յետոյ հայերը ապստամբութեան դրօշը պարզեցին և Ներսէս Ճիճրակացի նախարարապետ գօրավարի տուաջնորդութեամբ դուրս քշեցին պարսիկներին Հայաստանից։

Զորս տարի շարունակ հայերը ԱՐՏԱՇԻՐ Կ. Ա. Մարտնչեցին պարսից դէմ և Պարս-ԱՐՏԱՇԻՐ Գ. կաստանի նոր թագաւոր Վոամը 422—428 թ. Հայաստանը ողողեց պարսիկ առաջատակից գօրքով։ Ս. Սահակը, որ մի մեծ հայրենասէր էր, ներքին ու արտաքին խոռվութիւններից զգուած, իր ուշադրութիւնը յունական Հայաստանի վրայ դարձրեց ու Մեսրոպ Մաշտոցին և իր թոռ Վարդան Մամիկո-

նեանին զրկեց կ. Պօլիս կայսրից ինդրելու, որ յունական Հայաստանում հայ լեզուն ուսուցանելուն խոչնդուններ շինեն։ Կայսը հրովարտակով իրաւունք տուեց նրանց, իսկ Վարդանին էլ սպարապետութեան պատիւ շնորհեց։ Ս. Սահակն անցաւ յունական Հայաստան և սկսեց այնտեղ գտնուած հայերին խսամել։

Այս բանը շատ վնասեց պարսիկներին, որովհետև երկիրը մնաց անտէր և հարկերը պակսեցան, ուստի և Վոամը վճռեց հաշտուել հայ նախարարների հետ։ Նախարարները Ս. Սահակին հրաւիրեցին խորհրդակցելու։ Հայրենասէր հայրապետը սիրտը ցաւած Այրարատ գնաց և Սմբատ Բագրատունուն ու Վարդան Մամիկոննեանին ուղարկեց Վոամի մօտ գեսպանութեան պաշտօնով։ Վոամը մեծ պատուով ընդունեց նրանց և Վոամշապուհի Արտաշիր կամ Արտաշէս որդուն Հայոց թագաւոր կարգեց 422 թ.։

Արտաշէս Գ. շատ մոլի ու զեղիս վարքի տէր մարդ էր և շուտով զզուեցը նախարարներին, որոնք վճռեցին գահընկեց անել նրան և հաւաքուելով Ս. Սահակի մօտ, պահանջեցին որ միանայ իրենց հետ ու գնան բոքոքեն պարսից թագաւորին և պարսիկ իշխող կարգել տան։ Վշտացաւ հայրապետը՝ «Քան. լիցի, ասում էր նա, իմ հիւանդ ոչխարը գայլերի բերանը տալ և չբժշկել՝ չուղղել նրան. ինչպէս կարելի է, որ ես իմ հիւանդ ոչխարը փոխեմ առողջ գաղանի հետ, որի հէնց առողջութիւնն է մեզ պատուհաս»։

Նախարարները չկամեցան, լուել, կարծեցին թէ նա ուզում է իրենց խաբել, որպէսզի թագաւորը ժամանակ գտնէ և իրենցից վրէժը լուծ ծէ, ուստի իրենց հետ առած Սուրմակ անունով մի քահանայ, գնացին Պարսկաստան և թագաւորի առաջ ամբաստանեցին Ս. Սահակին և Արտաշէսին, թէ միացել են յունաց հետ և պիտի ապստամբին։ Վասմը հաւատաց, կանչեց Արտաշէսին ու կաթողիկոսին և Վեհմիհրշապուհ պարսկին մարզպան նշանակեց ու Հայաստան դրկեց։ Այսպիսով 428 թ. վերջացաւ Արշակունեաց հարստութիւնը։

ՄԱՐԶՊԱՆՆԵՐ ԵՒ ՌԱՏԻԿԱՆՆԵՐ

Արշակունեաց հարստութեան ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵ- անկումից յետոյ Հայաստանը ՌԱԶՄԸ 451 թ. Պարսկաստանի նահանգ դարձաւ և պարսիկներից նշանակուած մարզպաններով կառավարուեց։ Ս. Սահակին յաջորդող կաթողիկոսների անպիտանութիւնից նախարարները զգուեցան, զղացին և գնացին Ս. Սահակի մօտ ու աղաչեցին նորից կաթողիկոսանալր սակույն հայրապետը մերժեց, պատմեց նրանց Հայաստանի գլխին գալիքների մասին տեսած տեսաիլը և քաշուեց Բագրեանդ, ուր 439 թ. վախճանուեց։ Վեց ամսից յետոյ վախճանուեց և Ս. Մեսրոպը։

Զղացող նախարարները Յովսէփ Պաղնացուն, որ Ս. Սահակի և Մեսրոպի աշակերտն էր, ըն-

տրեցին կաթուղիկոս։ Յովսէփը հայրենասէր հոգեորական էր և անմիջապէս ժողով գումարեց Շահապիվանում, ուր եկեղեցական հարցեր քննելուց յետոյ երկրի բարեկարգութեանը հոգտարան։

Պարսկաստանում թագաւորելով Յաղ- կերտ Բ., վճռեց իր հպատակներին կը- րակապաշտութիւն ընդունել տալ և յունաց դէմ մղած պատերազմից յե- տոյ, իր զէնքը Հո- նաց դէմ դարձրեց, իսկ հայերից օգնա- կան զօրք վերցրեց։ Հայոց օգնական զօրքն ու նախա- րարներից շատերը պարսից խորաման-

կութեան զոհ գնացին և այս միջոցներով Յաղկերտն ուզում էր հայերին թողնել առանց առաջնորդող ձեռքերի, որպէս զի կարողանար հեշտութեամբ նուածել նրանց։

Հայ նախարարները Հոնաց երկրում տարած յաղթութեան իբրև վարձատրութիւն հալածուեցան։ Յաղկերտը ստիպեց նրանց արևին երկրու պագել, բայց նախարարները յանձն չառին և թա-



ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ

գաւորի հրամանով ոմանք բանտարկուեցան, իսկ ոմանք փախչելիս նահատակուեցան:

Այսուհետև Հայաստան ուղարկուեց Դենքա-
պուհ պարսիկը, որ շատ նեղեց հայերին, սկսեց
հարկեր հաւաքել թէ ժողովրդից և թէ վանքե-
րից։ Միևնոյն ժամանակ Միհրներսէն պարսիկը
հաւատի մի թուղթ գրեց հայերին, որով սափ-
պում էր կամ պարսից զենի զառնալ և կամ պա-
տասխանել։ Կաթողիկոսը հայ մեծամեծների խոր-
հրդով խիստ լեզուով պատասխանեց, կէտ առ կէտ
հերքեց նամակը՝ ցոյց տալով պարսից աղանդի-
անպիտանութիւնը։

Այս անգամ հայերը զգացին իրենց սխալը, տեսան թէ իրենց անմիտաբանութեամբ թշնամին որպիսի թակարդներ է լարում և աշխարհական ու հոգևորական միացան:

Յաղկերտը զայրացած հրամայեց իր մօաւ կունչել նախարարներին։ Թէպէտ նախարարները գիտէին Յաղկերտի դիտաւորութիւնը, բայց ըստիպուեցան զնալ։ Նա շատ վատ ընդունեց և հրամայեց իր հետ արևին երկրպագել։ Նախարարները հրաժարուեցան, իսկ նա հրամայեց բանտարկել բոլորին և պատրաստութիւն տեսաւ Հայաստանը ոչնչացնելու համար արշաւանքի։


Մի պարսիկ գաղտնի յայտնեց նախարար-
ներին Յազկերտի նպատակը, որի համար նրանք
առելեմ ուրացան, որպէսզի արգելանքից ազա-
տուեն: Ուրախացած Յազկերտը վարձատրեց նր-
բանց և մոգպետի, 700 մոգերի ու զօրքի հետ

Հայաստան ուղարկեց բոլոր հայերին հաւատաշփոխ անելու: Երբ պարսից բանակը հասաւ հայոց Անգղ գիւղը, մի կիբակի օր մողակետն ուզեց եկեղեցին քանդել, բայց պատարագիչ Ղեռնդ երէցը ժողովրդի հետ յարձակուեցան և ծեծեցին մողակետին ու մողերին: Մողակետն այս ծեծի համար բողոքեց Վասակ Սիւնի իշխանին, որ իսկապէս ուրացել էր հաւատը: Վասակն սկսեց նեղել հայերին, որպէսզի կարողանար արգելքների առաջն առնել, բայց նախարարները միացած յարձակուեցան Վասակին ձերբակալեցին: Սակայն նա երդուեց այլևս չգաւաճանել և նախարարները հաւատալով նրա երդմանը՝ ազատ թողին, յարձակուեցան Միքներսէն զօրավարի բերած պարսիկների վրայ, մեծ մասը կոտորեցին ու փախցրին, իսկ որովհետև պարսից զօրքը Աղուան էր մտել՝ Մեծն Վարդանը զօրքը երեքի բաժանեց՝ մէկ մասը ներշապուհ Արծրունու առաջնորդութեամբ Ատրպատական զրկեց, մէկ մասը Վասակին տուեց երկրի պաշտպանութեան համար, իսկ երրորդ զօրքաբանակը իր հետան առած աղուաններին օգնութեան գնաց և յաղթանակով Հայաստան դարձաւ:

Յազկերան այս բոլոր անյաշընդութիւնները
վրէժը լուծելու համար ամբողջ ձմեռը պատրաս-
տուեց և գարնանը Առւշկան Նիւսալաւուրտ զօ-
բավարին անհամար զօրքով Հայաստան ուղարկեց:
Հայերը հոգի առան, վառուեցան հայրենիքի սի-
րով և սկսեցին հաւաքուել, որպէսզի արիւնով

վերականգնեն իրենց պատիւը։ Հայ կամաւորների թիւը 66 հազարի հասաւ և սրանց վլուխն անցաւ Քաջն Վարդան Մամիկոնեանը, մտաւ Արտազ ու Տղմուտ գետի ափին Աւարայր գաշտում բանակեց։ Հակառակ կողմից մօտեցան պարսիկները։

Պատերազմինախրնթաց օրը ամենքը զուարթ



ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄ

էին և խրախուսում էին իրար. բոլորեքեան խոստովանուեցան և հազորդուեցան և մի գաղափարի նուիրուած սպասում էին իրենց կեանքը զոհելու հայրենիքի ու եկեղեցու համար։ Վարդանը ճառով խրախուսեց. «չվախենանք նրանց սրերից, ասում էր նա, որով մեր մարմինը կը սպանեն, բայց հոգին՝ ոչ, կամ յաղթենք և կամ

քաջերին յասուկ մահով մեռնենք»... Քաջալերում էր նաև Ղեղնդ երէցը, որ հայրենիքի նախանձախնդիր ու երկնաւոր վարդապետի անձնուրաց աշակերնն էր։

451 թ. յունիսի 2-ին առաւտեան սկսաւ պատերազմը։ Հայերը Վարդանի առաջնորդութեամբ աներկիւղ յարձակուեցան պարսիկների վրայ, այնպէս որ թշնամին շփոթուեց։ Քաջ Վարդանը մտաւ պարսից շարքերը, բայց շուտով չորս կողմից շրջապատերին նրան և նա՝ քաջին յատուկ մահով ընկաւ։ Երեկոյեան դէմ պատերազմը դադարեց և հայերը ճեղքելով պարսից բանակը քաշուեցան իրենց ամուր բերդերը։

Այս պատերազմում ընկան 1036 հայ, 3544 պարսիկ և 9 իշման։ Հայ նախարարներից ընկան Քաջ Վարդան, Կորովի Խորէն, Արի Արտակ, Զարմանալի Տաճառ, Խմաստուն Հմայեակ, Հրաշակերտ Ներսէն, Մանուկ Վահան, Արդար Արսէն Յառաջադէմ Գարեգին։

Հայոց եկեղեցին յարգեց իր անձնուէր պաշտպանների յիշատակը և բարեկենդանի վերջին հինգաբթի օրը նուիրուած է նրանց յիշատակին։

Պատերազմի անյաջողութիւնից մեղմացաւ Յազկերաը և Ատրորմիզդ պարսիկին մարզպան կարգեց ու հրամայեց, որ հայերի հետ մեղմ վարուի։ Ատրորմիզդը, ճիշտ է, հայերին կրօնի ազատութիւն տուեց, սակայն Սահակ եպիսկոպոսին, Յովսէփի կաթողիկոսին, Ղեղնդ երէցին և միւս հոգիորականներին շղթայած Պարսկաստան


զրկեց, ուր 454 թ. Նիւշապուհ քաղաքի մօտ նահատակուեցան: Վասակն էլ գնաց Յազկերտի մօտ իր գործերի վարձը ստանալու, բայց նրա վրայ շատերը չարախուեցին և նա բանտում որդնոտուեց ու այնպէս մեռաւ:

Յազկերտը իր չարիքները լը-
կԱՀԱՆ ՄԱՄԻ- բացրեց հայ նախարարների բան-
ԿՈՆԵԱՆ տարկութեամբ, սակայն նրա յա-
481—510 թ. ջորդ Պերողը հանեց նրանց բան-

տից և Ատրվշնասպ պարսիկ իշշ-
խանի հետ Հայաստան զրկեց: Նախարարները նախ-
կին անհամերաշխութիւնից խրատուած այս ան-
դամ սկսեցին միանալ, իսկ Վարդանին փոխա-
րինեց նրա եղբօր որդի Վահան Մամիկոնեան
քաջ իշխանը, որ պարսից բարեկամ ձեացաւ,
միամտացը զրկին, սակայն միանալով վրաց
հետ հալածեց Հայաստանից պարսիկներին ու
հաւատուրացներին: Սորանցից յետոյ հայ իշ-
խանները Դուխնում ժողով արին և Սահակ Բա-
գրատունուն մարզպան նշանակեցին, իսկ Վա-
հանին սպարապետ:

Պերողը քանի անգամ զօրք զրկեց Վահանի
գէմ, բայց միշտ հայերը յաղթեցին և միայն մի
անգամ յաղթուեցան վրաց խարդախութեան պատ-
ճառով. այդ կուռում սպանուեց Սահակ Բագ-
րատունին: Պարսից համար վհատեցուցիչ էր Շտէ
գիւղի կոիւր, որտեղ Վահանը 40 հոդով 2—
3000 պարսիկներին յաղթեց և չորս հոդի կորցնե-
լով ձեղքեց բանակը և անվաս դուրս եկաւ գիւղից:

Միւնոյն ժամանակ պարսիկները պարտու-
թիւնը կրեցին Հեփթաղների դէմ մղած պատե-
րազմում և Պերողը սպանուեց, իսկ նրա յաջորդ
վաղարշը վճռեց հաշտուել Վահանի հետ և Նի-
խոր իշխանին դեսպանի պաշտօնով նրա մօտ
դրկեց: Վահանը երեք պայման առաջարկեց. ա)
կրօնի կատարեալ ազատութիւնը, բ.) անպիտան
մարդոց պաշտօն ու պատիւ չտալ և գ.) զրպար-
տութիւններին հաւատ չընծայել, այլ քննել, և
յետոյ վճիռներ տալ կամ պատժել:



ՎԱՀԱՆԻ ՄՈՒՏՏՔԸ ՊԱՐՍԻՑ ԲԱՆԱԿԸ

Նիխորն ընդունեց նրա առաջարկը և նրա-
վրեց տեսնուելու: Վահանն արքայավայել մտաւ
պարսից բանակը, այնպէս որ մինչև անգամ պար-

սիկները վախեցան։ Վահանը հաշտութիւն կնքելով Դուքին վերադարձաւ Անդեկան պարսիկ մարզպանի հետ, բայց նրա բարեխօսութեամբ Վահանը նշանակուեց մարզպան։

Մինչ Վահանն աշխատում էր խաղաղացնել հայրենիքը, Պարսկաստանում թագաւորեց Կաւատը, որ ցանկանում էր հայերին կրակապաշտ դարձնել և 493 թ. մոդերին զօրքի հետ Հայաստան ուղարկեց։ Այս անգամ էլ Վահանը ջարդեց պարսիկներին։

Վահանի տեղ մարզպան եղաւ նրա վարդ եղբայրը, որ 4 տարուց յետոյ պաշտօնանկ եղաւ և նրա տեղ մի պարսիկ նշանակուեց։ Այդ ժամանակներում Հռոմեաց Հայաստան արշաւեցին ու սրանց դէմ դուրս եկաւ Գնումնեաց Մժեծ քաջ իշխանը և փառաւոր յաղթութիւն տարաւ։ Կաւատն այդ քաջութեան համար Մժեծին մարզպան նշանակեց և նա 30 տարի խաղաղութեամբ կառավարեց։

Մժեծից յետոյ Դեսշապուհ պարսիկը մարզպան եղաւ, բայց հայոց Մովսէս կաթողիկոսը (որ 551 թ. Հայոց թուականը հաստատեց) նրան անօրէն վարքի համար պաշտօնանկ անել տուաւ։ Սրան յաջորդող մարզպանները թշնամարար վերաբերուեցին դէպի հայերը մինչև Մմբատ Բագմայալթը։

Պարսից Խոսրով թագաւորը Սըմսոն ԲԱԶ-ը բատ Բագրատունի իշխանին 592 ՄԱՅԱՂԹ. ԴԱ-թ. իր տիրասէր ծառայութեան իիթ. ՔԱՅԼ ՎԱ- համար Հայոց մարզպան նշանակեց։

ՀԱՆ Սմբատն սկսեց ինստել հայերին, որոնք անվերջ պատերազմներից աղքատացել էին։ Ծուտով Խոսրովի ու Հեփթաղների միջև պատե-

րազմ ծագեց և Սմբատը որպէս պարսից զօրքի սպարապետ մեծ յաղթութիւններ արաւ, սպանեց Հեփթաղների թագաւորին, որով աւելի ևս սիրելի զարձաւ պարսից թագաւորին և 8 տարի իշխելուց յետոյ մեռաւ Տիգրոնում։

Սմբատին յաջորդեց Դաւիթ Սահառունին հայ իշխանը, որի օրով Խոսրովը մեծ զօրքով յունաց վրայ արշաւեց և Մուշեղ Մամիկոնեան իշխանին էլ հրամայեց հետեւ իր օրինակին, սակայն Մուշեղը մերժեց և ամրացաւ Տարոնում։ Խոսրովը Յունաստանից Կարին գնալով իր քեռորդի Միհրանին 30,000 զօրքով Մուշեղի դէմ զրկեց։ Մուշեղն էլ Գայլ Վահան իշխանին զրկեց նրա դէմ, որը խորամանկութեամբ ջարդեց պարսիկներին և Միհրանին սպանեց 604 թ.։ Գայլ Վահանը ծերացած հասակում նորից յաղթեց պարսիկներին և դուրս վոնդեց նրանց Տարոնի սահմաններից, բայց շուտով ինքն էլ մեռաւ։

Դաւիթը 23 տարի իշխելուց յետոյ ընտանիքով Յունաստան գնաց, որտեղ կիւրապալատ նշանակուեց, իսկ նրա տեղ մարզպան եղաւ Վարագտիրոց, որ 8 տարի իշխելուց յետոյ նոյնպէս Կ. Պօլիս վախաւ։

Այսպիսով մարզպանութիւնն էլ վերջացաւ և Հայաստանը կառավարուեց յունաց կայսեր նշանակած կիւրապալատ կամ պատրիկ կոչուած իշխաններով։ Վերջերը երկիրը մնացել էր անխնամ և միայն Թէոդորոս Ռշտունի քաջ իշխանն իր զօրքով աշխատում էր խաղաղացնել երկիրը, երբ Հայաստանին նոր թշնամի աւելացաւ. դոքա էին Արաբացիք։

է. դարում Արաբիայում Մահարաշտրա Հնագավառ Հնա մէդ անունով մէկը նոր կրօն քաշԱՍՏԱՆՈՒՄ ըողեց և արաբացիք հաւատալով նրան սկսեցին դէնքի ուժով տարածել մահմեդականութիւնը և շուտով Պարսկաստանը Արաբիայի նահանգ դարձաւ: 640 թ. մօտ 18,000 արաբացիք Արդրահմանի առաջնորդութեամբ Հայաստան մտան: Նրանց ճանապարհի առաջին գաւառը Տարօնն էր և Տիրան Մամիկոնեան իշխանը հայ իշխաններից օգնութիւն չստանալով միայնակ դիմադրեց 8000 զինուորով. սակայն յաղթուեց, մանաւանդ որ կուռի ժամանակ Սահուռ Անձեւացի իշխանը արաբացիների կողմն անցաւ: Տիրան սպանուեց և արաբացիք անարդել առաջ գնացին, պաշարելով առան Դուլին քաղաքը, այրեցին, ջարդեցին ու 35,000 գերի վանելով վերադարձան Արաբիա:

Շատ չանցած Արաբացիք նորից Հայաստան մտան և համարեա առանց դիմադրութեան Հայաստանի մէկ մասին տէր դարձան, ուստի և հայերը զզուած նախարարների անմիաբանութիւնից՝ դեսպանների միջոցով ամիրավետին հնագանդութեան խոստում տուին, Այս բանը յոյներին դայրացրեց և նրանք հայերից հպատակութեան խոստումը պահանջեցին: Հայերը նրանց էլ խոստում տուին և Համազասպ Մամիկոնեանը պատրիկ նշանակուեց, որի յաջորդի օրով հայերը բոլորովին Արաբացոց հնագանդցան և ստիպուած եղան հարկ էլ տալու:

Հայոց աշխարհը յոյների ու արաբների ձեռքին կռուի ինձոր դարձաւ, ողողուեց արիւնով և կոիւներից մէկում սպանուեց Աշոտ Բագրատունէ Բիւրատեան իշխանը, որ երկրի կառավարիչ էր, և 694 թ. Աբգլա արաբը ոստիկան կոչումով Հայաստան եկաւ, բայց հայերը նրան շուտով երկրից արտաքսեցին: Այս դէպքը զայրացրեց արաբացոց և Մոհմատ ոստիկանն անհամար զօրքով Հայաստան արշաւեց: Ժամանակի Սահակ կաթողիկոսն արեան առաջն առնելու համար ճանապարհուեց, որ նրա բարկութիւնը իջեցնէ, սակայն հիւանդանալով, աղերսալիր թուղթ գրեց ու վախճանուեց: Աւանդութիւնը պատմում է, որ երբ Մոհմատը մօտեցաւ նրա դագաղին, կաթուղիկոսը ձեռք շարժեց և նամակը տուեց նըրան, որով նա մեղմացաւ:

Մոհմատից յետոյ 13 ոստիկան և քանի մի հայ պատրիկներ նշանակուեցան, որոնցից ոմանք քաղցր վարուեցան հայերի հետ, իսկ ոմանք երկիրը քարուքան արին: Կոչմ ոստիկանը հայ նախարարներին ու մեծամեծներին Նախիջևանի եկեղեցու մէջ այրել տուաւ, իսկ Բուզան ամբողջ երկիրը ասպատակի մատնեց՝ աւերեց ու այրեց և նախարարներին ու իշխաններին Սմբատ սպատակետի հետ ամիրապետի մօտ տարաւ: Սրանցից մի քանիսը հաւատն ուրանալով պատուեցան, իսկ Սմբատը չուրացաւ և բանտում մեռաւ, որի համար Խոստովանող կոչուեց:

Արաբացիք Հայաստան մտնելով, իրենց հետ բերին և իրենց կուլտուրան: Ժողովուրդը կոտորում էր, իսկ Արաբացի կտորավարիչները իրենց ճաշակով արքունիքներ էին կառուցանում, և այդ օրից հայոց մէջ

տեղ գտաւ արաբական ճաշակը։ Արաբացոց արշաւանքը
ոչ միայն քաղաքականապէս ազգեց հայերի վրայ, այլև
նա իր հետքերը թողեց հայ դրականութեան, ճարտա-
րապետութեան ու լեզուի մէջ։

Բ Ա Գ Բ Ա Տ Ո Ւ Ն Ի Ք

Եթէ հաւատանք հայ պատմիչներին, Բագրատու-
նիք շատ հին ցեղ էին և առաջացան Շամբաթ անու-
նով մի ճրէա իշխանից, որին գերի էր բերել Հրաչեա
Հայկազունին։ Վաղարշակ թագաւորը այդ ցեղից սե-
ռուած Բագրատ անունով իշխանին որդոցորդի թագա-
ղիր ասպետութիւն շնորհեց, որով ի հարկէ նրանք
շատ մօտ էին թագաւորին և միշտ լաւ պաշտօններ
ունէին։ Նրանք սկզբում բնակւում էին Ապեր գաւա-
ռում, յետոյ Կոգովիտ գաւառում, որտեղ նրանք հիմ-
նեցին Բագրատն քաղաքը, իսկ յետոյ նրանք գնեցին
Արշարունեաց երկիրը Շիրակ գաւառի հետ՝ Անի քա-
ղաքով, որտեղ և նրանք թագաւորութիւն հիմնեցին։
Իսկապէս Բագրատունիք թագաւորում էին միայն Շի-
րակում և շրջակայ մի քանի գաւառներում, այնպէս
որ Հայաստանի գորցէ մի տասներորդն էր նրանց
ձեռքին, իսկ մնացեալը կամ այս ու այն հարեան ազ-
գերի ձեռքին էր և կամ թէ սեփական հայ թագաւոր
ունէր, ինչպէս էին Արծրունիք Վասպուրականում և
կամ թէ Կարսի թագաւորները։ Հայոց թագաւորութիւ-
նը Հայաստանում վերջացաւ Բագրատունիներով։ Պէ-
տքէ նկատել, որ այդ միենոյն ժամանակներում և յե-
տոյ շատ ուշ Վրաստանում նոյնպէս թագաւորում էր
հայ Բագրատունիներին ազգական Բագրատին թա-
գաւորացեղը։

Սմբատ Խոսովանողի մահից յետոյ
ԱՇՈՏ Ա. սպարապետ եղաւ նրա Աշոտ սրդին, որ
859—889. իր քաղցր բնաւորութեամբ ժողովրդի
սիրտը շահեց և որպէս խելացի կա-
ռավարիչ ամիրապետից իշխանաց իշխան տիտ-
ղոսի արժանացաւ։ Աշոտը հարկերը ժողովեց և
ուղարկեց ամիրապետին, իսկ նա զիջանելով Ա-
շոտի ինքըին ազատեց ու Հայաստան ուղարկեց
բանտարկուած նախարարներին։

Մինչ այս, Զահապ պարսիկ իշխանը մեծ
զօրքով հայոց վրայ արշաւեց։ Նրան գիմաւորեց
հայոց սպարապետ՝ Աշոտի Աբաս Եղբայրը և Ե-
րասխի ափերին յաղթելով նրան՝ փախցրեց։

Նախարարները տեսնելով Աշոտի կառավար-
չական հմտութիւնը՝ միջնորդեցին ամիրապետի
առաջ, որ նրան թագաւորեցնէ հայոց վրայ։ Ա-
միրապետը համաձայնուեց, Աշոտին թագ ու թա-
գաւորական զգեստներ դրկեց և 885 թ. Գէորգ
կաթողիկոսը նրան թագաւոր օծեց։ Յունաց կայ-
լը յայտնեց իր ուրախութիւնը և թագ ու թա-
գաւորավայել ընծաներ ուղարկեց Աշոտին։

Այնուհետև Աշոտը շրջակայ իշխանների հետ
հաշտուեց, վերջ տուեց Վանանդի ու Գուգարքի
խոռովութիւններին և կ. Պոլիս գնաց Լեռն կայսեր
այցելելու, բայց վերակարծին 889 թ. Շիրա-
կում մեռաւ։

Աշոտին իր անդրանիկ Սմբատ
ԱՄԲԱՏ Ա. որդին յաջորդեց, որ հօրը մահ-
889—914 թ. ուան համար մեծ սուզ պահեց։

Արաւ սպարապետը դժգոհ այդ բանից մի քանի անգամ Սմբատի հետ պատերազմի բըռնուեց, սակայն յաղթուեց, իսկ Սմբատը 892թ. Շիրակաւանում թագաւոր օծուեց: Դեռ նոր էր խաղաղել երկիրը, երբ Ավշինը ոստիկանը մեծ գորքով Հայաստան մտաւ: Սմբատը հաշտուեց նրա հետ, բայց երբ Ավշինը նորից արշաւեց՝ Սմբատը Դողա գիւղի մօտ յարձակուեց, յաղթեց և երկիր սահմաններիցը դուրս քշեց:

Սրանից յետոյ Սմբատն ուզեց Աղճիքն ու Տարօնն ազատել Ահմատ ոստիկանի լծից, բայց Վասպուրականի Հագիկ Խշանը խարէութեամբ հայոց գորքի մէջ շփոթ զցեց, որից օգաուելով Ավշինը նորից Հայաստան արշաւեց և Սմբատը իր որդուն պատանդ ալլով հաշտուեց:

Սմբատը հարկանաւաք ոստիկաններից զըզուած՝ խնդրեց ամիրապետից որ իրեն թողնի այդ պարտաւորութիւնը: Ավշինի յաջորդ իւսուփ ոստիկանը դժգոհ այս բանից, Սմբատի դէմ եւլաւ, բայց ներքին խռովութիւնները Սմբատին կաշկանդել էին և նա ստիպուեց հաշտուելու իւսուփն այլ կերպ լուծեց վրէժը՝ Սմբատից ապատամբուած Գագիկ Արծրունի իշխանին վասպուրականի թագաւոր հրատարակեց:

Սմբատի դրութիւնը շատ վտանգուեց, որով հետև Գագիկն ու իւսուփը միանալով նրա դէմ պատերազմ հրատարակեցին: Յուսահատ թագաւորը Գուգարք փախաւ, որտեղ լսեց որ իր որդիքը յաղթուել են և իր հետ գտնուած մի բու-

որն քաջերով կապոյտ բերդում ամրացաւ: Իւսուփը պաշարեց նրանց. թէպէտ բերդը անառնիկ էր, սակայն թագաւորը սովոր նեղուելով ստիպուեց զիջումների դիմել ու իւսուփից խօսք վերցնելով, որ իրեն ու իր մարդոցը ձեռք չկտալ՝ անձնատուր եղաւ—913թ.: Թէպէտ իւսուփը կեղծ պատիւներ տուեց նրանց, սակայն 914թ. չարաշար մահով նահատակեց Սմբատին:

Սմբատի Աշոտ որդին հօր մասնածք. Եթէ հուան լուրն առնելունպէս մի քաշկաթ. 915—928 սի հարիւր կտրիմներով իւսուփի պահապահններին գուրս քշեց Հայաստանից և ժողովրդի ցանկութեամբ 915թ. հօր գահը նստեց: Աշոտին ուժեղութեան համար Երկաթ էին կանչում:

Խաղաղութիւնը տևական չեղաւ, որովհետեւ անդրդիատ պատերազմները ժողովրդին տնտեսապէս քայքայել էին և սովոր սկսեց իր հունձը: Ծնողները հացի համար հարազատ որդուն էին ծախում:

Սովին ուժ էր տալիս ներքին անդրդութեան խախտումը, որի համար Յունաց կոստանդին կայսրը Աշոտին կ. Պօլիս հրաւիրեց և երկիրը խաղաղացնելու համար զօրք տուեց: Իւսուփը նոր որոգայթներ լարեց և Աշոտ երկաթի հօրեղբօր որդի Աշոտ սպարապետին թագաւոր անուանեց, որով որանց մէջ պատերազմներ տեղի ունեցան և Յովհաննէս պատմաբան կաթողիկոսի միջոցով միայն հաշտուեցան: Այս էլ եր-

կար չտևեց, միւս իշխաններն էլ Աշոտ Երկաթի դէմ զինուեցին և նա 100 մարդով Սևան կղզին քաշուեց և իւսուփի զրկած զօրքին յաղթելով իր ձեռն առաւ կառավարութեան զեկը, բայց 928 թ. մեռաւ:

Աշոտին յաջորդեց Արաս եղբայրը, որ Երկիրը խաղացնելու նպատակով Դուխնի ոստիկանի հետ դաշն կապեց, Կարսը իրեն թագաւորանիստ առաւ ու Առաքելոց անունով մեծ եկեղեցին շինել տուաւ, որը գեռ չէր օծուած, երբ արխաղների Բէր թագաւորը մօտեցաւ Կարսին և պատգամ դրկեց, որ եկեղեցին իրենց ծիսով պիտի օծել տայ. Արասը դուրս եկաւ պատերազմելու, յաղթեց, բռնեց նրան և Կարս բերելով ցոյց տուեց եկեղեցին ու կուրացրեց. 951 թ. մեռաւ Արասը և յաջորդեց իր որդի Աշոտը:

Աշոտ Գ. ուզեց Երկիրը հիմնուածու. ՈՂՈՐ- վին բարեկարգել և 90,000 զօրք ՄԱԾ 952—977 ժողովելով ինը տարի մարտնչեց Թշնամիների դէմ և 961-ին Անի քաղաքում թագաւոր օծուեց: Այդ օրուանից Անին մայրաքարտաք դարձաւ:

Կարսի գաւառակալ Աշոտի եղբայր Մուշեղը առաջինը դաւաճանեց և կողմնակիցների շընորհիւ թագաւոր օծուեց: Այսպիսով առաջացաւ Կարսի թագաւորութիւնը: Բայց Աշոտ Գ. լոեց և իր գէնքը ամիրապետեց ապստամբած Համտուն ոստիկանի դէմ գարձրեց, որին զիխատել տուաւ և ամիրապետից մեծ շնորհների արժանացաւ:

Աշոտը հոչակուեց որպէս բարեպաշտ և աղքատառէր, անկելանոցներ ու աղքատանոցներ բա-

ցեց և շատ անգամ անձամբ ճաշում էր աղքատների հետ, որի համար նրան Ողորմած մականուն տուին:

Աշոտը մեռնելով թաղուեց Անիի մօտ՝ Զօշվանքում, ուր այժմ էլ կայ նրա գերեզմանը տապոնաքարով և վրան զրած է նրա անունը:

Աշոտ Ողորմածի յաջորդ՝ Մմբատ ՄՄԲԱՏ Բ. ԵՒ (977—990) որդին Անին շէնցնեց Աղջիկ Ա. լով զբաղուեց և Տրդատ ճարտար ըապետի ձեռքով շատ գեղեցիկ շէնքեր, եկեղեցիներ շինեց և քաղաքը աշտարակներով ու ամուր պարիսպներով շընջապատեց:

Անին շատ առաջ Ախուրեան գետի ափին փոքր բերդ էր և Աշոտ Ողորմածը ցած պարիսպով պատեց, իսկ Մմբատ Բ. 980 թ. ընդարձակեց քաղաքը և չորս կողմից Մեծանիստ կոչուած պարիսպը շինեց: Կարճ ժամանակում Անին հարստացաւ, բնակիչների թիւն այնքան մեծացաւ, որ շատերը կարծում են թէ միլինի պիտի հասած լինէր, իսկ եկեղեցիների համար էլ նրա «հազարումէկ» եկեղեցիներով էին երդում: Մայր եկեղեցին՝ Կաթողիկէն սկսաւ շինել Մմբատը, բայց աւարտեց Գագիկ Ա.-ի կին Կատրամիդէ թագուհին: Երկրորդ՝ Գագիկ Ա.-ի շինած Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցին է, իսկ երրորդը Ապլղարիպ մարածախտի շինած Ս. Փրկիչը: Անւոյ նախըշին անգաս այնքան հարուստ է եղել, որ իր համար եկեղեցի է շինել:

Քաղաքի մէջ այսօր էլ կանգուն են բարձր աշտարակը, միջնաբերդի պալատը, արքունի խորհրդատունը, պարիսպների մի մասը և գոները և բոլորն էլ զարդարուած են քանդակներով ու մողայիքներով:

Արդէն բաւական ժամանակ է, ինչ հայագէտ պրօֆեսուօր Ն. Մարը պեղումներ է կատարում Անիում,

որտեղ 1904 թ. մի հնագարժն-թանգարան բացուեց որ օրէցօր հարստանում է պ. Մարի գտած իրեղէներով: Բացի բազմաթիւ նկարներից ու խաչքարերից գտնուած են նաև բրոնզէ բուրփառ, ճրագ, ապակէ ու կալէ ամաններ, պղնձէ աշտանակ, կարաս, դրամներ պղնձէ կոճակներ, բրոնզէ ապարանջաններ, ունելիքներ, գնդասեղներ, շղթայ, բոժոժ և այլն:

Մինչ Ամբատն զբաղուած էր շինարարութեամբ, կարսի Առւշեղ թագաւորը խանգարեց երկրի անդարբութիւնը և Ամբատը ստիպուեց զէնքի դիմել, սակայն տեսնելով որ Տայոց կիւրապարար օգնութեան է եկեղ հաշտուեց:



ԳԱՐԻՒ

Ամբատին յաջորդեց իր եղբայր Գագիկը (990—1020), որ յայտնի եղաւ որպէս խաղաղասէր, եկեղեցասէր և աշխարհաշէն և 30 տարի խաղաղ թագաւորեց ու մեռաւ: Գագիկ Ա. այն առտիճան վախեցրեց թշնամիներին, որ ոչ ոք սիրտ չառաւ նրա հետ պատերազմել և նրան արքայից արքայի կոչում տուին:

Ամբատն իրեն ժողովրդի աշխատաւութեամբ աշխատաւութեց մի քանի թիւթեամիտ արարքներով և որ գլխաւորն է, ամուսնացաւ իր քըոջ աղջկան հետ:

Ամբատին յաջորդեց իր եղբայր Գագիկը (990—1020), որ յայտնի եղաւ որպէս խաղաղասէր, եկեղեցասէր և աշխարհաշէն և

30 տարի խաղաղ թագաւորեց ու մեռաւ: Գագիկ Ա. այն առտիճան վախեցրեց թշնամիներին, որ ոչ ոք սիրտ չառաւ նրա հետ պատերազմել և նրան արքայից արքայի կոչում տուին:

Գագիկի յաջորդ Յովհաննէս Սըմենովնէսնէս բատը թուլամորթ ու ոչ վարչաշ-
ՍՄԲԱՏ կան մարդ էր, իսկ նրա կրտսեր
1020—1040 եղբայր Աշոտը աշխոյժ և ուղղա-
մասէր լինելով ապստամբուեց նը-
րա դէմ, բայց Պետրոս Գետաղարձ կաթողիկոսն
ու ափխաղաց թագաւորը հաշտեցրին նրանց: Ա-
շոտը շարունակեց որոգայթներ լարել և Ապի-
րատ իշխանին պատուիրեց սպանել եղբօրը, սա-
կայն Ապիրատը Ամբատին Անիում դահ նստե-
ցնելով փրխաւ:

Այս ընտաննեկան կրիւների ժամանակ նոր թշնամի էլ աւելացաւ՝ Սելջուկեան թաթարները Վասպուրական մտան, որտեղի Սենեքերիմ թա-
գաւորը ազատուելու համար իր երկիրը յոյնե-
րին տուեց և փոխարէն ստացաւ Սեբաստիաքա-
ղաքն իր շըջակայքով և սրանով վերջացաւ Ար-
ծրունեաց թագաւորութիւնը:

Սելջուկների իշխան Տուղրիլ բէկը Ամբատի երկիրը մտաւ և Վասակ Պահլաւունին քաջու-
թեամբ դիմագրեց, բայց սպանուեց: Մինոյն ժամանակ յոյնաց Վասիլ կայսրը ափխաղների դէմ մղած պատերազմից յետոյ հայերի դէմ գը-
նաց: Յովհաննէս Ամբատն անձարացած մի թղթով Անին յոյներին կտակեց և Վասիլը հեռացաւ: Վա-
սիլի յաջորդ Կոստանդինը 1029 թ. մահուան
անկողնում Անիի կտակի թուղթը կիրակոս ա-
նունով հայ քահանային յանձնեց, որ հայոց թա-
գաւորին տանէ, բայց անարժան քահանան պա-

Տեղ թուղթը և յաջորդ Միքայէլ կայսեր մեծ
գնով ծախեց 1034 թ.:

Սմբատը մեռնելով երկերը թողեց բոլորո-
վին խառնակ դրութեան մէջ:

Յովհաննէս Սմբատն անժառանգ
ԳԱԳԻԿ Բ. մեռաւ, իսկ միակ ժառանդ Աշո-
1040—1045 թ. տի Գագիկ որդին անչափահաս էր:

Երկրի շփոթ դրութիւնից օգուտ
քաղեց Միքայէլ կայսը և սկսեց պահանջել Ա-
նին: Խնամակալ իշխանները վճռեցին զիմադրել,
իսկ տէրութեան խնամակալ Վեստ Սարգիս Սիւ-
նին ուզեց թագաւորել բայց դորա դէմզինուեց
տիրասէր Վահրամ Պահլաւունին:

Միքայէլ կայսը երեք անգամ զօրք ու-
ղարկեց, բայց հայերը ցիր ու ցան արին նրանց,
իսկ չորրորդ անգամ 100,000 զօրք զրկեց, որոնք
Անին պաշարեցին: Վահրամը 30,000 զօրքով դուրս
եկաւ քաղաքից և սոսկալի ջարդ տուաւ ու հա-
լածեց. յոյները 20,000-ի չափ մարդ կորցնելով
փախան: Այս յաղթութիւնից յետոյ միաբանած
իշխանները Գագիկին Անիում թագաւոր օծել
տուին: Վեստ Սարգիսը դժողո՞ արքունի գանձե-
րի հետ Անիի միջնաբերդում ամրացաւ: Գագի-
կը նրան համոզեց, որ հեռանայ, բայց երբ նա
գանձեղը չուզեց վերադարձնել՝ մի քանի մար-
դով գնաց, բռնեց և բանտարկեց: Սարգիսը մի
կողմից յոյներին գրգռեց, միւս կողմից էլ ակր-
սեց Գագիկին շողոքորթել, որով ազատուեց, իսկ

նրա գաղտնի խորհրդով եկած յոյներն էլ հայե-
րից պարտութիւն կրեցին:

Այս բանից յետոյ յունաց կայսը խորա-
մանկութեամբ կ. Պօլիս հրաւիրեց Գագիկ Բ-ին
և նա յուսալով իշխանների ու կաթողիկոսի հա-
ւատարիմ մնալու երդման վրայ՝ գնաց: Այստեղ



ՀԱՅԵՐԸ ՀԱԼԱԾՈՒՄ ԵՆ ՅՈՅՆԵՐԻՆ

Երկօրեայ պատուից յետոյ նրանից պահանջեցին
Անին, բայց Գագիկը մերժեց յանձնել և 1045 թ.
Բոսֆորի կղզիներից մէկը աքսորուեց:

Ուրախացած Վեստ Սարգիսը իշխաններին


խարեց և Անուոյ 40 բանալիներն ու Բագրատունեաց ձեռքն եղած երկիրը յոյներին յանձնելու նամակով զրկեց կայսրը կայսրը ցոյց տուեց բոլորը Գագիկին, բայց նա զարմանալով հայ նախարարների տիրաննողութեան վրայ հառաջանքով ասաց:

«Հայստանի տէր ու թագաւորն ես եմ և ժողովրդի հաճութեամբ ընտրուած և ես չեմ կարող համաձայնիլ ու նրան զրկել այդ քաղաքից»: Կայսրը սկսեց համոզել նրան, բայց նա սուգ մտաւ և ճարահատ Անիի փոխարէն Պիզու քաղաքում ընակութիւն հաստատեց:

Յոյները կարծեցին թէ այսպիսով Անին գրկաբաց կընդունի նրանց. բայց ոչ, հայերը երկար գիմադրեցին և յոյները մասնութեամբ տիրեցին քաղաքին: Սելջուկեանք նորից Հայստան մտան և Տուղրիլ բէկը Արծն վաճառաշահ քաղաքն այրեց, իսկ Սմբատաբերդն ու Արծեկն հիմքից կործանեց: Հայ նախարարները կարսի թագաւորի հետ նրա դէմ գուրս եկան և յաղթուեցան: Սոյն կուում Թաթուլ Վանանդեցի հայ իշխանը գերի ընկաւ: Թաթուլը վիրաւորել էր պարսից ամիրայի որդուն, որին Տուղրիլը շատ էր սիրում: Երբ Թաթուլին Տուղրիլի մօտ բերին, նա ասաց, որ եթէ տղան ապրի, կազատէ նրան. Թաթուլը պատասխանեց. «Եթէ հարուածն իմն է, չի ապրից»: Տղան մեռաւ և Տուղրիլը սպանելով՝ Թաթուլին՝ նրա աջը ամիրային զրկեց ասելով. «Ճաղ վատ բազկից չէ մեռած»: Տուղրիլը չը

կարողացաւ առնել Մանազկերտը, որովհետև ներս սից հայերը մի ֆռանգի օգնութեամբ այրեցին սելջուկների պաշարման մեքենաները:

Տուղրիլը յետոյ եկաւ Ալփալանը և պահանջանակ առաջանաւ:



ԹԱԹՈՒԼ ՎԱՆԱՆԴԵՑԻ
շարեց Անին, բայց չկարողանալով առնել՝ հեռանում էր, երբ հայերը ետեի գոնից գուրս գալով վախսսի գիմեցին: Սելջուկները նկատելով այս ներս խուժեցին Անի և սկսեցին անտեսանելի կոտորած, իսկ հրդեհը լափեց ամբողջ քաղաքը:

Արանից յետոյ Ալփալանը կարսի Գագիկ թագաւորից պահանջեց իրեն հպատակուիլ: Գագիկը խորամանկութեան գիմեց և Տուղրիլի հահամար սպաւոր ձեացաւ: Ալփալանը լսեց՝ հաշ-

տուեց, իսկ Գագիկը քաշուեց Փոքր Հայքի Ծամբ-
ընդաւրերդը և սորանով Կարսի թագաւորութիւնն
էլ վերջացաւ:

Գագիկ Բ. Պիգուի շրջակայքում
ԳԱԳԻԿԻ ՄԱՀԼ էլ թագաւոր էր ճանաչում և
1079թ. հայատնաց յոյներին պատժելով
ամենքին պատկառելի էր դարձել:

Կեսարիոյ յոյն հայատեաց մետրոպօլիտն իր
շան անունը Արմէն էր զրել: Գագիկը լսեց այս
և գնաց նրա մօտ: Մետրոպօլիտը լաւ ընդունեց
և Գագիկը ճաշին խնդրեց կանչել շանը: Մետ-
րոպօլիտը շփոթուած ստիպուեց կանչել «Արմէն»,
այն ժամանակ Գագիկը աչքով արեց իր սպա-
սաւորներին, որոնք բռնեցին մետրոպօլիտին ու
շանը, միասին դրին մի պարկի մէջ և շանն այն-
քան ծեծեցին, որը կատաղած՝ խածնելով սպա-
նեց մետրոպօլիտին: Յոյներն այս արարքի վրէ-
ժը լուծեցին. Երբ մի օր Գագիկն իր զօրքից բա-
ժանուած երեք հոգով կիզիստրա բերդը գնաց՝
դարան մտած յոյները բռնեցին նրան և բերդի
Մանդալեայ իշխանները բերդից կախեցին նրան:

Այս անցքից քիչ յետոյ մեռան Գագիկի Յով-
հաննէս և Դափիթ որդիքը և վերջացաւ Բագրա-
տունեաց հարստութիւնը: Այսպիսով վերջացաւ
նաև բուն Հայաստանի թագաւորութիւնը:

Հայոց բողջաւ մաս մերժուած
Հայուանը և Հայ 1891—0011 ԱՅ Ա ՍՊԱՎ
ՌՈՒԲԻՆԵԱՆՔ ԵՒ ԼՈՒՄԻՆԵԱՆՔ
Առան պահման լուսնի մարդի

Բագրատունեաց անկումից յետոյ
ՌՈՒԲԻՆ Ա. ԵՒ Հայաստանն այս ու այն ազգերի
ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. շահատակութեանց ասպարէզ դար-
ձաւ և հայերը թողին իրենց տունն
ու տեղը և սկսան գաղթել: Ոմանք բոլորովին հե-
ռացան հայրենիքից, ոմանք լեռներում, անձաւ-
ներում թագնուեցան, իսկ ոմանք էլ անցան Կիլի-
կիա՝ Տօրոսի հայերի մօտ, որով մի ստուարա-
թիւ գաղոյթ կազմուեց:

Գագիկի ազգական Ռուբէն իշխանը, որ Գա-
գիկի հետ էր եղել երբ նրան յոյները բռնեցին,
զինուեց յունաց դէմ, միացեալ հայերի գլուխն
անցած մի իշխանապետութիւն կազմեց 1080թ.
Նրան օգնեցին Գող Վասիլ, Ապիրատ և Լամբ-
րոնի Օշին իշխանները:

Ռուբէնն իշխեց 15 տարի և 1095 թ. մե-
ռաւ և նրան յաջորդեց Կոստանդին որդին, որ իր
երկիրն ընդարձակեց և Վահկայ բերդին տիրե-
լով իր աթոռանիստ դարձրեց: Կոստանդին Ա.-ի
օրով երեացին երուսաղէմը մահմեդականներից
ազատող Եւրոպացի խաչակիր զօրքերը 1096 թ.
որոնց նա օգնեց, մինչև անդամ միացաւ նը-
րանց հետ, և խաչակիրների առաջնորդ իշխան-
ները նրան մարկիզի ու կոմսի տիտղոսներ տուինտ
Կոստանդինը մեռաւ 1099 թ.:

Կոստանդին Ա-ի յաջորդ Թորոսը
ԹՈՐՈՍ Ա. ԵՒ (1100—1123) քաջ և իմաստուն
Լեհոն Ա. իշխանապետ եղաւ։ Նա սկսեց Կի-
լիկիան մաքրել յոյներից, սակայն
մահմեդականները մտան Տօրոսի լեռների կող-
մից, որոնց դէմ գնաց Գող Վասիլը և յաղթեց։



ԹՈՐՈՍԻ ԱՌԱՋԱԿԱՏՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊՐՈԴՈՒԿՏՈՒՆ ԵՎ ՄԱՆԵՐԻՆ

Մըանից յետոյ Թորոսը Գագիկին սպանող Ման-
տալիա իշխաններից Կիղիստրա քաղաքը պահան-
ջեց և որովհետեւ նրանք մերժեցին, զէնքի զօրու-
թեամբ տիրեց, պահանջեց Գագիկի զգեստներն
ու զէնքերը և իշխաններին էլ սպանել տուաւ։

Թորոսին յաջորդեց իր եղբայր Լևոն Ա.
(1123—1141 թ.), որ շուտով գրաւեց Տարսոն
ու Մամեստիա քաղաքները։ Զնայած որ Լևոնը
շարունակ օգնում էր շրջակայ քրիստոնեայ իշ-
խաններին, քայց և այնպէս Անտիոքի ու Մա-
րաշի իշխանները նրան խարդախութեամբ բան-
տարկեցին և նա պատանդները, Ատանա ու Մա-
մեստիա քաղաքներն ու մեծ գումար տալով կարո-
ղացաւ ազատուել, և գալով Կիլիկիա մեծ զօրքով
Անտիոքին մօտեցաւ և այնտեղի իշխանը ստիպ-
ուեց հաշուուելու, պատանդներին էլ ազատեց։

Հերթը յոյներին հասաւ. Յովհաննէս Կոմինե-
նոս կայսը Կիլիկիա արշաւեց, առաւ Անարգա-
բան ու Վահկայ բերդը, իսկ Լևոնին Ռուբէն ու
Թորոս որդւոց հետ բռնեց կ. Պոլիս տարաւ,
ուր Լևոնը մեռաւ բանտում, 1141 թ., Ռուբէ-
նին էլ կուրացրին ու սպանեցին։

Թէպէտ Լևոն. Ա. և Ռուբէնը ցա-
թորոս Բ. ւալի մահով մեռան, բայց Թորոսն
1141—1168 թ. իր քաջութիւններով կարողացաւ
Յունական զօրքի պաշտօնեայ դա-
ռնալ և երբ կայսը նորից Կիլիկիա արշաւեց նա
էլ բանակումն էր; Կայսը սպանուեց և Թորոսն
օգտուելով հանգամանքից, մի քահանայի մի-
ջոցով հայ իշխաններին իմաց տուեց իր գա-
լուստը; Անմիջապէս իշխանները պատրաստուե-
ցին և նրա առաջնորդութեամբ տիրեցին Վահ-
կայ բերդին։ Մանուէլ կայսըն այս վերածնու-
թեան առաջն առնելու համար Անդրոնիկոս զօ-

բապետին մեծ զօրքով Թորոսի դէմ ղրկեց, բայց հայերը յաղթեցին և իրար ետեից առան Մսիս, Ատանա, Անարգաբա, Թիլ, Մամեստիա և այլ քաղաքները և Թորոսը կիլիկիային տէր եղաւ։ Յոյները հայոց դէմ զինեցին իկոնիոյ Գըլըճը Ասլան Սուլթանին, բայց Թորոսը նրան էլ յաղթեց և իր եղբօր Ստեփանէի սպանման վրէժը լուծելու համար յունաց երկիրն ասպատակեց։ Թորոսը մեռաւ 1168 թ. և որդու անչափահաս լինելու պատճառով Թորոսի աներ Թոմաս պայլ լատին իշխանը ինսամակալ նշանակուեց։

Թորոսի Մլեհ եղբայրը, որ ձգտում էր իշխանապետութեան, Հալէպի սուլթանի օգնութեամբ 1169 թ. դուրս քշեց խնամակալին և իշխանապետ եղաւ։ Մլեհը մի քանի պատերազմ մղեց յոյների դէմ, իսկ խաչակրութիւնից կիլիկիայում մնացած լատինացիներին, ուրոնք աշխատաւմ էին հայերին կաթոլիկացնել՝ արտաքսեց իր երկրից։ Նա իր անհաջտ բնաւորութեամբ զօրքին էլ իր դէմ զինեց և 1174 թ. սպանուեց։

Մլեհին յաջորդեց իր Ստեփանէ եղբօր որդի Ռուբէն Բ. (1174—1185), որ եկեղեցասէր մարդ լինելով, կամաւորապէս հրաժարուեց գահից և կրօնաւոր եղաւ, բայց երկու տարի յետոյ՝ 1187 թ. մեռաւ։


Ռուբէնն իր գահը յանձնեց իր Լեհոն Բ. Լեոն եղբօրը, որ հմուտ քաղաքաւ 1186—1219 թ. գէտ ու ուաղմագէտ մարդ էր և եւրոպացոց հետ շփուած լինելով, երկիրը նրանց օրինակով բարեկարգեց՝ հիւրանոցներ, որբանոցներ, գպրոցներ բացեց ու ճանապարհներ բաց անել տուաւ, զարկ տուեց եր-

կրագործութեան, նաւարկութեան և վաճառաւկանութեան, իսկ երկրի խաղաղութիւնը ապահովեցնելու համար սահմաններում բերդեր շնուց և սահմանապահ զօրքի թիւն աւելացրեց։ Հայոց արքունիքը եւրոպականին նմանուեց, նորաձեռւթիւններն այն աստիճան շատացան, որ մինչև անգամ հայերը կասկածում էին, որ այդ բոլորը կաթոլիկութիւն տարածելու համար է։ Այս բոլորից աւելի աչքի էին ընկնում պետական հաստատութիւններում մուծուած եւրոպական կարգերը։

Սոյն բարեփոխութեանց միջոցին Եգիպտասուի սուլթանն առաւ երուաղեմը և խաչակիրներին դուրս քշեց։ Վիրաւորուած եւրոպացիք նորից խաչակրութիւն կազմեցին և եկան կիլիկիա իրենց կուխ ունենալով գերմանացոց Ֆրիդրիխ Բարբարոսսա կայսեր։ Լեոնը շատ օգնեց նրանց և գերմանացոց կայսրը՝ Ֆրիդրիխի յաջորդը թագուցարկեց, իսկ Ֆրիգոր Տղայ կաթողիկոսը 1198 թ. թագաւոր օծեց Լեոնին։ Յունաց կայսրը նոյն պէս թագ ուղարկեց և բարեկամացաւ Լեոնի հետ։ Լեոնն իրեն մայրաքաղաք ընտրեց Սիս քաղաքը, որ գեղեցիկ շնուրթիւններով զարդարեց, եւրոպական կարգեր մատցրեց ու խնամէացաւ Լու-

սինեան ցեղի հետ, որով աւելի սերտ կապուեց
եւրոպացոց հետ:


Դէպի եւրոպացիք տածած յարդանքի հետ
Լևոնին անհաճոյ էին նրանց կրօնական միտում-
ները և նա այդ առաքելութեան դէմ էր գնում
շարունակ, իսկ մահմեդական հարկան ազգերը,
որոնց մի քանի անգամ յաղթել էր Լևոնը, շատ



Լեհոն Բ.

Էին անհանգստացնում, Բացի այս, Լևոնը մի քա-
նի անգամ ստիպուած եղաւ Անտիոքի ու Սր-
ջակայ քաղաքների քրիստոնեայ իշխանների դէմ
զէնքիդիմելու և փառաւոր յաղթութիւններ արաւ:
Լևոնի դէմ վտանգներ էին նիւթում մի քա-
նի իշխաններ և երբ նա իր աներ կիպրոսի թա-
գաւորի մօտից կիլիկիա էր գալիս՝ թշնամիները

դարան մտան: Լևոնն իր ռազմանաւերով դի-
մագրեց և յաղթանակով կիլիկիա մտաւ: Այնտեղ
նա լսեց որ Լամբրոնի Հեթում իշխանն ապս-
տամբուել է, իսկոյն բռնեց և որդոց հետ բան-
տարկեց, կալուածները գրաւեց և ապա Հալէպի
Ղայասէդղին Ղազի սուլթանի վրայ արշաւեց, որը
կիլիկիային հանգիստ չէր տալիս: Սուլթանը պար-
տութիւն կրեց և փախուստի դիմեց: Նոյն վի-
ճակի արժանացաւ նաև Ղոնիայի Սուլթանը:



ՊՂՆՁԷ ԴՐԱՄՄ ԼԵՒՈՆ Բ-Ի կայումս Փոքր
Ասիան կունենար մի քաղաքակիրթ կառավարու-
թիւն, բայց նա մեռաւ առանց արժանաւոր ժա-
ռանգի 1219 թ. և մարմինը թաղուեց Սիս քա-
ղաքում, իսկ սիրտը իր սիրած Ակներ վանքում:
Լևոն Բ. 13 տարի իշխանապետ եղաւ, իսկ 21
տարի թագաւոր.

Լևոնի միակ ժառանգը Զապէլ աղջիկն էր, որ Խը-
նամականներով թագաւորեց: Նա ամուսնացաւ Անտի-
ոքի իշխանի Փիլիպոս որդու հետ. որ և թագաւորեց
1222 թ., սակայն տեսներով որ նա թագաւորական
գանձն ու հարստութիւնը Անտիոք է ուղարկում, հայոց
զօրքը գիշերով բռնեց նրան և բանտարկեց, ուր նրան
թունաւորեցին և 1225 թ. մեռաւ: Սրանից յետոյ եր-
կրի խնամակալ Կոստանդին պայլը կաթողիկոսի խոր-
հրդով Զապէլին իր Հեթում որդու հետ պսակեց և Հե-
թումը թագաւորեց:

1226 թ. Լամբրոնի իշխանը
ՀեթոհՄ Ա. Սոսւմ Հեթումին թագով պսակեց
1226—1270 թ. և նա թագաւոր օծուեց:

Հեթումը աչալուրջ ու գործունեայ մարդ
էր և իր ազգի վիճակն էլ բարւոքեց: Նա շա-
րունակ գործ ունէր թաթարների հետ և իր քաղցր
բնաւորութեամբ կիլիկիան ազատեց նրանց հա-
րուածներից:

Թաթարներն ողբելով ամբողջ Հայաստանը
Բաչուի առաջնորդութեամբ իկոնիա մտան: Ի-
կոնիոյ սուլթանն իր ընտանիքը Հեթումի մօտ
զրկեց, որպէսզի վտանգից զերծ մնայ, բայց Բա-
չուն մօտեցաւ կիլիկիային և Հեթումին պատ-
գամ զրկեց հաշտուելու, եթէ սուլթանի ընտա-
նիքն իրեն յանձնէ. Հեթումը ստիպուած եղաւ
պահանջը կատարել: Իկոնիայի սուլթանը դժգոհ
այս դաւաճանութիւնից՝ Լամբրոնի կոստանդին
իշխանին Հեթումի դէմ զինեց: Հեթումը Տարսոնն
ամրացնելուց յետոյ մի քանի անգամ ընդհա-
րուեց կոստանդինի հետ, որի գորքի մէջ էր և
սուլթանը, որը սպանուեց, իսկ կոստանդինն էլ
ստիպուեց հաշտուել:

Այս պատերազմներից յետոյ Հեթումը թա-
թարներին օդնական զօրք ուղարկեց և ինքն էլ
գնաց Մանգոյ խանի մօտ: Նրա բացակայութեան
ժամանակ Եղիպտոսի մամլուկների Փնդուխտար
զօրավարը կիլիկիան ասպատակի մատնեց և Հե-
թումի Թորոս ու Լևոն որդիքը դուրս եկան նըրա
դէմ, բայց Թորոսը սպանուեց, իսկ Լևոնը զերի

ընկաւ: Մամլուկներն սմբողջ կիլիկիան ոտի տակ
տուին, այլեցին Սիսը և թագաւորների գերեզ-
մանները բանալով ուկոսրները հանեցին: Հեթու-
մը կիլիկիա շտապեց և ուզեց գոնէ Լևոնին գե-
րութիւնից ազատել, որի համար մամլուկները



«ՀեթոհՄ ՈՂԲՈՒՄ Է ԻՒՐ ՈՐԴՈՑ ՄԱՀԸ»

պահանջեցին, որ թաթարները ետ տան Հալէպ
քաղաքը. Հեթումն այս էլ յաջողեցը եց, ազատեց
Լևոնին և մի տարի յետոյ Մակար անունով կը-
րօնաւոր դարձաւ, իսկ թագաւորութիւնն յանձ-
նեց Լևոնին և քիչ յետոյ մեռաւ:

Հօր մահն այնքան վշտացրեց Լե-
լեհոն Գ. ւոն Գ-ին, որ նա հիւանդանալով
1270—1289 թ. երեք ամիս անկողնին ծառայեց

ու 1271թ. Տարբոսում թագաւոր օծուեց։ Ուրախութիւնն ընդհանուր էր և Լեռնը ներեց քաղաքական յանցաւորներին, աղքատներին առաստ նուերներ տուեց, զօրքի ոռճիկներն աւելացրեց եկեղեցիները նորոգեց և ուսման ծաւալմանը ձեռք զարկեց։

Թագաւորի ժողովրդասիրութիւնը դուր չեկաւ պարոններին (իշխաններին) և գաղտնի դաշտագրութիւն սարքեցին նրա դէմ, բայց շուտով իմացուեց։ Զնայած Սելջուկներն երկիրը աւերի մատնեցին և հինգ տարի հայերը տառապում էին, այսուամենայնիւ իշխանները չօգնեցին Լեռնին։

Այս անհամաձայնութիւններին աւելացաւ մի նոր աղէտ. մամլուկները մի կողմից, իսկ ժանտախտը միւս կողմից սկսեցին իրենց հունձը. Լեռնին էլ ընտանեկան դժբաղութիւն պատահեց, բայց պարոնները մնացին անշարժ և Լեռնն իր ծերունի եղբօր Մմբատին ղրկեց մամլուկների դէմ. Մմբատը դուրս քշեց նրանց և Փրնդուխտարը Դամասկոս փախչելով ազատուեց։ Այս յաղթութիւնը հոգի տուեց Լեռնին և նա յաղթեց Ղոնիայի սուլթանին, որ շարունակ անհանգշտացնում էր Կիլիկիան՝ իսկ թաթարներին էլ օդնեց մամլուկների դէմ։

Լեռնը մահից առաջ իրեն ժառանգ նշանակեց Հեթում որդուն և 1289թ. մեռաւ։

Լեռն Գ-ի մահից յետոյ Կիլիկիան Լեհուն Գ-ի աւելի աղմկուեց. մի կողմից ներքին ՅԱԶՈՐԴՆԵՐԸ պառակումը, միւս կողմից արտաքին յարձակումները չէին թողնում, որ երկիրը խաղաղուի։ Երբորդ ցաւը պապականութեան ջատագով քարոզիչներն էին, որ հայերին հանգիստ չէին տալիս։

Հեթում Բ. 1289թ. թագաւորեց, բայց աւելի եկեղեցուն նուիրուեց քան երկրին և եղիպատոսի սուլթան Մալէք-ալ-Ալբէֆ Սալլահէտինը անհամար զօրքով ներս խուժեց Կիլիկիա, առաւ Հոռմելայ ըերդը ու Սաեփանոս կաթողիկոսին և. Լուսաւորչի աջի հետ գերի տարաւ եղիպատոս։

Այս գեպքից քիչ յետոյ Եգիպտոսում սաստիկ ժանտախտ երևաց, սուլթանն այս բանը և. Աջի գերմանը վերագրեց, ուստի հաշտուեց Հեթումի հետ և ետ դարձրեց և. Աջը. 1293թ. Հեթումը կրօնաւոր եղաւ և տէրութիւնը իր եղբօր թորոս Գ-ին յանձնեց, որը երկու տարուց յետոյ նոյնպէս կրօնաւոր եղաւ և Հեթումը ստիպուեց նորից իր գահը վերագանալ։ Հեթումն իր քոյլերին ամուսնացնելով խնամէացաւ յունաց և Կիլլըացոց հետ և 1296թ. Թորոսի հետ կ. Պօլիս գնաց։

Հեթումն իր տեղը թողեց Մմբատ եղբօրը, բայց նա եղբօր վստահութիւնն ի չար գործ դրեց և 1297թ. թագաւոր օծուեց։ Հեթումը Կիլիկիա շատպեց, բայց պարոնները նրան մայրաքաղաքից վանդեցին և նա ստիպուած յոյներից ու թաթարներից օգնութիւն իւլնդրեց, որոնք մերժեցին։ Մմբատն աւելի մեծ շարութեան ձեռնամուխ եղաւ՝ Թորոսին սպանեց իսկ, Հեթումին կուրացրեց։ Մրանից վրէժը լուծելուց չորսրորդ եղբայրը՝ Կոստանդինը՝ զօրքին գրգոհց նրա դէմ և 1298թ. նրան գահընկեց անելով ինքը թագաւորեց նրա տեղը։

Այդ խլրտումների ժամանակ Հեթումի աչքերը, ինչպէս պատմում են, բացուեցան և Կա 1299 թ. նորից թագաւորեց, իսկ Երկրի խաղաղութիւնը չվըրդովելու համար Սմբատին ու Կոստանդինին Կ. Պոլիս կայսեր մօտ դրկեց՝ խնդրելով թոյլ չըտալ նրանց կիլիկիա գալու, Հեթումը վերջապէս զգաստացու և ժողովրդին իր հետ կապելու համար արտաքին թշնամիների դէմ զնաց ու Դամասկոսի էմիրին մի կիրճում շրջապատելով, սարսափելի կոտորածից յետոյ ետ մղեց, իսկ էմիրին գերելով թաթարաց Ղազան Խանին ուղարկեց:

1301 թ. Հեթումը բոլորովին հրաժարուեց զահից և Թորոսի Լեռն որդուն թագաւոր օծել տուաւ:

Լեռն Գ. իր լատինասիրութեամբ ու կաթոլիկասիրութեամբ բոլորովին զզուեցրեց հայերին և նրանք չարիքի առաջն առնելու համար ապստամբուեցան: Թաթարաց Պիլարու զօրավարը, որը Ասարգաբայումն էր, սպանել տուաւ Լեռնին ու արքայահօր Հեթում Բ. 1307 թ. և Երկիրը խաղաղուեց:

Լեռնի Օշին եղբայրը նրանց մահը լսելով զօրքի գլուխն անցաւ, Պիլարուին զուրս քշեց Կիլիկիայից և հաշտուեց հայոց սահմանակից լատին իշխանների հետ 1308 թ. լատինուհու հետ պսակուեց և կաթոլիկասիրութեամբ հկեղեցական ու ազգային անկարգութիւնների տեղիք տուեց և 1320 թ. մեռաւ:

Օշինին յաջորդեց Լեռն Ե. որ Լեհոն Ե. դին, որ 10 տարեկան լինելով 0-1320-1342 թ. շին իշխանը խնամակալ նշանակուեց: Լեռն Ե ի անգութ ու անքաղաքական բարքն աւելի արագացրեց Ռուբինեանց անկումը, իսկ Երկրի խնամակալը մի վասակար մարդ Եր:

Եղիպատոսի և Բաղդադի Մալէք-ալ Նազար սուլթանը Փոքր Ասիայից քրիստոնէութիւնը հայածելու նպատակով յաջող արշաւանքով Կիլիկիային մօտեցաւ: Լեռնը դիմեց Եւրոպացոց, ուրոնք անմիջապէս կրօնական խնդիրը մէջ գցեցին, իսկ Եղիպատացիք աւերեցին Երկիրը և Լեռնից Երդմնաթուղթ վերցրին Եւրոպացոց հետ յարաբերութիւնները խղելու մասին:

Հարուածը շատ մեծ էր. 25 օր հուր ու սուր Եր թագաւորում, աւարով ու գերիներով յղիացած թշնամին հազիւ հազ հեռացաւ Կիլիկիայից, Ժողովուրդը Երկրի բաղդը տնօրինողների անփութութիւնը տեսնելով ինքնապաշտպանութեան զնդեր կազմեց, որոնք կրծերում ու ամրութիւններից թշնամու դէմ էին ելնում: Այդ բոլորի հետ միացաւ և սովոր կթագաւորի վարկը բոլորովին ընկաւ: Եւրոպացիք դրամական ու աղլորի աննշան օգնութիւն հասցրին, բայց Մալէք-ալ Նազարը լսելով այս բանը՝ Երկու անգամ Կիլիկիայի վրայ յարձակուեց և թագաւորից խաչի ու աւետարանի վրայ Երդմնաթուղթ վերցրեց:

1342 թ. մեռաւ Լեռն Ե.:
Լեռն Ե, մեռաւ անժառանգ և մուշկուսնդին Գ. բինեանց տոհմը վերջացաւ, Երկիրը եւ ԳՈՒԻԴՈՆ*) մասց բախտախնդիր լատին իշխանների ձեռքին, որոնք Հեթում Բ-ի

*) Ռուսուցիչներին առաջարկում ենք Ռուբինեան-Լուսինեան անցնելու ձեռքի տակ ունենալ պ. Կ. Բասմաջեանի «Լեռն Ե. Լուսինեան վերջին թագաւոր Հայոց» գերքը (տպ. Փարիզ 1908 թ.) իրեն ստուգապատում:

Քրոջ Զապէլի (ամուսնացած էր Կիպրոսի թագաւորի եղբօր հետ), որդի՝ հայոց գունդատարլ Յովհաննէսին թագաւոր ընտրեցին և կոստանդին Գ. անուամբ 1342 թ. գահը նստեցրին որպէս թագապահ, մինչև որ Գուիդոնը, որ թագաժառանգ էր, կըգար Կ. Պօլսից:

Կոստանդին Գ. իր անխոնհեմ ընթայքով մեծ խըսովութիւնների պատճառ դարձաւ: Ճիշտ է արքունիքը եւրոպական նորամուծութիւններով լցրեց, բայց ազգային սովորոյթները վերացան և ժողովուրդը խորթացաւ թագաւորից, բայց ամենից աւելի վասեց թագաւորի կաթոլիկ հոգին և ժողովուրդը զօրքի հետ սպանեց նրան հաղիւ մի տարի թագաւորելուց յետոյ:

Կոստանդինի տեղ 1342 թ. Սուում թագաւոր օծուեց իր Գուիդոն եղբայրը, որ իր եղբօր օրինակին հետևեց: Հայրենասէր հայերը զգուշացրին նրան, բայց նա չուղղուեց և երկու տարի թագաւորելուց յետոյ նրան էլ սպանեցին 1344 թ. իւրայինների ու եղբօր Պեմունդի հետ:

Գուիդոնի մահից յետոյ հայերը ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. լաւ հասկանալով լատինահայ թա- 1345—1363 թ. գաւորների միտումները՝ մօր կող-

մից Ռուբիննեան կոստանդինի իշխանին թագաւոր ընտրեցին: Սա առաքինի մարդ էր և խիստ հրաման արձակեց կրօնական վէճերին վերջ տալ, հայրենի կարգերը վերականգնեց, իր ուշադրութիւնը ժողովրդի առօրեայ կեանքի վրայ կենդրոնացրեց, իսկ Գուիդոնի ազգականներից ոմանց բանտարկեց, ոմանց էլ դուրս քըշեց երկրից: Բանտարկուածների մէջն էին և Գուիդոնի գահաժառանգները՝ եղբօր որդիք Պեմունդ և Լեոն:

Կիլիկիոյ վիճակի բարւոքումը եղիպտոսի

սուլթանին հանդիսատ չէր տալիս, որովհետեւ նա վախենում էր նոր խաչակրութիւնից և հայոց թագաւորութեան վերջ տալու նպատակով Այասքերդն առաւ: Կոստանդին Դ. Կիպրոսի Պետրոս թագաւորից Պոբերտ Լուսինեանի հրամանատարութեամբ և Հռոգոսի ասպետներից եկած օգնական զօրքերով յաղթեց նրանց և Եւրոպա աւետաբեր դեսպաններ զրկեց օգնութիւն խնդրելու, սակայն ունայն անցաւ և նա ծովի կողմից կիպրոսի հաւատորմիղի վրայ յուսացած ցամաքով յարձակուեց մամլուկների վրայ և 1357 թ. Ալ-Ֆքաննլը ետտա դղեակը խեց:

Մինչ այս մինչ այն Գուիդոնի եղբօրորդի Պեմունդն սկսեց աշխատել խլել Կիլիկիայի թագը կոստանդինից և անցաւ Եւրոպա, որպէսզի Աւենիոնի պապից հայոց թագաւոր օծուի, սակայն ճանապարհին Վենետիկում մեռաւ 1363 թ.: Նոյն տարին մեռաւ և կոստանդինը:

Նրա տեղ թագաւորեց Լեոն որդին, բայց որովհետեւ երկրին ամբողջովին դէմ էր նրան, ուստի նա 1363—1365 թ. տիրապետելով՝ գահը զիջաւ Կոստանդինին, որ 1365 թ. թագաւոր օծուեց: Այս կոստանդինը թագաւորների հեռու ազգականներիցն էր և պատահմամբ թագաւորեց, իսկ Կիպրոսի Պետրոս թագաւորն աշխատում էր Գուիդոնի Լեոն հօրեղբօրորդու համար: Կոստանդինը նեղուելով ներքին խոռվութիւններից ու մահմեղականներից, Պետրոսին խնդրեց գալ և ժառանգել հայոց թագաւորութիւնը, բայց Պետրոսը 1367 թ. զօրքով Կիլիկիա անցաւ, որպէսզի Կոստանդինի հետ թշնամիների վրայ յարձակուի, սակայն որովհետեւ կոստանդինն օգնութեան չեկաւ՝ թողեց Կիլիկիան և

Կրպոս վերադարձաւ միտքը դնելով թագաւորացնել Աւոնին: Իրանից յետոյ Հայերի վիճակն աւելի վատացաւ և ժողովուրդը երկու կուսակցութեան բաժանուեց, մի մասն ուզում էր գահը Պետրոսին յահճնել, իսկ միւս մասն ուզում էր կոստանդին Դ-ի այրի Մարիամ թագուհուն ամուսնացնել մի որևէ Եւրոպացի իշխանի հետ ու թագաւոր Հոչակել, բայց Պետրոսը սպանուեց, իր պալատականների ձեռքով և թագավաճ կարգուեց Մարիամ թագուհին, մինչև Լեռն Զ-ի գալուստը:

Լեհոն (Զ*): Լեռն Զ. Լուսինեանը (1374—1375) թ. ինչպէս նաև Գուիտոնը ծագում էին ֆրանսիական Լուսինեաններից, որոնք խաչակիր զօրքերի հետ արեւելք եկան և նրանցից մէկը 1192 թ. Կիպրոսի թագաւորութեանը սկիզբ դրաւ: Հայերը Լուսինեանների հետ ինամէացան Լեռն Բ-ի երկրորդ ամուսնութեամբ:



Լեհոն Զ.

Սույն Հայոց գունդը ստարլ էր և նրա մահից յետոյ քաղաքական հանգամանքները ստիպեցին Զւանին կողջ որդոց հետ Կիպրոս փախչել և Լեռնը մեծացաւ Կիպրոսում:

Կոստանդինի սպանումից յետոյ Հայերը պատգամաւորութեամբ հրաիրեցին Կիլիկիա թագաւորելու, բայց այստեղի Պետրոս թագաւորը իոնչնուտ եղաւ և միայն նրա մահից յետոյ 1374 թւին՝ Ապրիլին իր 25

*). Ոմանք առաջին Լեռնը Հաշուելով, որովհետև լոկ իշխան էր, որան անուանում են Լեռն Ե.:

մարդոց հետ նա գնաց Կոռիկոս բերդը, որտեղից միքանի ամիս յետոյ մեծ հանդիսով Սիս մտաւ:

Այդ ժամանակ Հայոց թագաւորութիւնը Սիս համար էր և թագաւորն էլ նման էր աւելի մի զաւառակալի քան թագաւորի:

Լեռնը Սիս համանելով անմիջապէս խորհըրդակցեց կաթողիկոսի ու իշխանների հետ և Սըսում թագաւոր օծուեց նախ լատին եպիսկոպոսից և ապա Հայոց կաթողիկոսից, որից շատ վրդովուեցան հայերը և մահմեդականներին զրգուեցին նրա դէմ, այնպէս որ նրանք պաշարեցին Սիսը, բայց երեք ամիս պաշարելուց յետոյ հաշտուցան: Այն ժամանակ հայերը դիմեցին Եղիպատուի Սուլթանին, որ 15,000 զօրք ուղարկեց Սիսը գրաւելու համար: Շուտով մի այդքան զօրք էլ աւելացաւ և Լեռնը ստիպուած մտաւ Միջնաբերդը թշնամուց պաշտպանուելու համար, բայց ճնոտից վիրաւորուեց և տեսնելով որ այս ելք չունի անձնատուր եղաւ 1375 թ. ապրիլ 16-ին և այսպիսով բոլորովին վերջացաւ Հայոց թագաւորութիւնը:

Այնուհետև Լեռնն ուղարկուեց Կահիրէ, իսկ ամիր Յակուբ Շահ անունով մէկը Սիս կառավարիչ նշանակուեց:

Լեռնը ապրում էր Եղիպատում և ոչ մի կերպ չկարողացաւ ազատուել չնայած որ շատերն էին բարեխօսել նրա համար: 1377 թ. մի խումբ ուխտաւորներ գնացին Կահիրէ, որոնք Եւրոպայից Երուսաղէմ էին գնում, որոնցից Յովհաննէս Դարդել անունով մէկ կաթոլիկ հոգևորա-

կան որպէս խոստովանահայր մնաց Լեռնի մօտ,
բայց տեսնելով նրա տառապանքը՝ գնաց Եւրո-
պա, բարեխօսեց Արագոնի և Կաստիլիայի թագա-
ւորների առաջ և նրանց միջնորդութեամբ Լեռ-
նը 1382 թ. գերութիւնից ազատուած Եւրոպա
անցաւ, դիմեց Աւենիոնի պապին, որ օգնէ հայոց
գահը նստելու, բայց յուսակտուր իր բարերար-
ներին գիմեց, դարձեալ ոչինչ չեղաւ, միայն
Կաստիլիայում ապրելու համար երեք քաղաք
ստացաւ՝ Մագրիդ, Վիլարէալի և Անդուխարի:
Լեռնը չանգատացաւ, գնաց Փարիզ, ուր շատ
շքեղ կերպով ընդունեցին նրան և որովհետև
Թրանսիայի թագաւորը Անգլիացոց հետ վէճի էր
բռնուած միջնորդի պաշտօնը Լեռնին վիճակուեց
և նա 1386 թ. գնաց Լոնդոն, բայց անյաջողու-
թեամբ վերադառաւ ու Փարիզում ընակութիւն
հաստատեց ոտքիկ ստանալով թագաւորից: 1393
թ. նոյեմբեր 29-ին Փարիզում մեռաւ Լեռնը և
թագուեց իր կտակի համաձայն Կեղեստինեանց
վանքում:

1789 թ. Թրանսիական յեղափոխութիւնից
յետոյ Լեռնի մահարձանը տեղափոխեցին և ներ-
կայումս գտնուում է Սէն-Դընիի արքայական
դամբարանում:

Լեռնի մահով հայոց թագաւորութիւնը բո-
լորովին վերջացաւ, թագաւորի տիտղոսն ան-
ցաւ Կիպրոսի թագաւորներին, իսկ մի առ ժա-
մանակ էլ Իտալիայի թագաւորներն օգտուեցան
այդ տիտղոսով:

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԻ

Բազրատունեաց անկումից յե-
ՄԵԼԻՔԾԱՀ եկ տոյ 40 տարի շարունակ Հայաս-
ֆԱԼՏՈՒՆ տանի արևմտեան մասը մնաց յու-
նաց ձեռքին, արևելեանը՝ պար-
սից, հիւսիսայինը՝ վրաց, իսկ հարաւայինը՝ ա-
րաբացոց: Պարսկաստանում թագաւորեց Ալփառ-
լանի որդի Մելիքշահը, որ օգտուելով հանգա-
մանքներից մեծ զօրքով Հայաստան արշաւեց և
ամբողջ երկրի տէր դարձաւ (1086—1093 թ.):
Նրա մահից յետոյ Հայաստանը նորից բաժա-
նուեց և վրաց Դաւիթ թագաւորը 1124 թ. մին-
չև Շիրակը հասաւ եւ հազիւ ժողովուրդը շունչ
քաշեց ու փախչողներն էլ տեղները վերադառ-
ձան: Սակայն շուրջ լսախտուեց խաղաղութիւնը,
որովհետև Անիի նախկին ամիրայի որդի Փալ-
տունը խլեց Շիրակը վրացիներից և Անին էլ պա-
շարելով առաւ:

Երկրի այս թշուառ կացութիւնը արձագանք
գտաւ Վրաստանում և վրաց պետական ծառա-
յութեան մէջ եղած սպասարկներ Զաքարէ և
Իվանէ Սանահնեցի հայ իշխանները վրացի ու
հայ զօրքով Շիրակ արշաւեցին, դուրս վանեցին
մահմեղականներին ու ամբողջ հիւսիսային Հա-
յաստանը վրացիներին մնաց 1160—1220 թ.:

ԺԳ-ըորդ դարու սկզբում Ա-
թաթարները սիայի թաթարները գորանալով
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Զինգիզնանի առաջնորդութեամբ

Ասիայն արևմտեան մասը նուաճե-
ցին և Խորազմիի Զալալէդդինն իր բարկութիւնը
հայոց վրայ թափեց։ Նրա դէմ դուրս եկան կի-
լիկիոյ հայ զօրքերը և նա ստիպուած Պարսկաս-
տան փախաւ։ 1233 թ. Զարմաղանը թաթար զօր-
քով Հայաստան արշաւեց։ Նրանց գործած ան-
գըթութիւններն անկարելի է նկարագրել և հա-
յերը թողին հայրենիքն ու սկսեցին գաղթել—
փախչել։ Յետոյ եկաւ անգութ հաջու զօրավարը։
90 տարի շարունակ թաթարներն հայի արիւնով
ողողեցին երկիրը և հարաւային գաւառները
քիւրդ բէկերին մնաց, արևելեանը՝ պարսիկնե-
րին, արևմտեանը՝ թիւրքմէններին, իսկ վերջը
օսմանցիներին։

Փոթորիկը դեռ չէր դադարել,
ԵԵՆԿԹԵՄՈՒՐ երբ Էօգբէք թաթարների Լէնկթե-
1387 թ., մուը զօրապեաը տիրեց թաթա-
րստանին և 1387 թ. Պարսկաս-
տանի վրայով Հայաստան արշաւեց, մտաւ Սիւ-
նիք և աւերի մատնեց, բնակիչներին արի անց-
կացրեց, առաւ Վանը, Փոքը Ասիա մտաւ և ա-
մեն տեսակ անգիտութիւններից յետոյ Սամար-
դանդ վերագարձաւ, որտեղ և մեռաւ։

Լէնկթեմուրի մահը հայոց կեղեքիչներին
հոգի տուեց և նրանք պակասը լրացրին։ Անըն-
դհատ կոիւներից երկիրն անմշակ մնալով, անա-


սելի սովը ընկաւ, որին հետեւց համաձարակ հի-
ւանդութիւնը և հայն նորից փախստի դիմեց,
իսկ թիւրքմէնների Ղարա-Իւսուփի գօրավարի որ-
դին և Լէնկթեմուրի Շահրուկա որդին 1410—
1430 թ. Հայաստանը պատերազմների ասպարէզ
դարձրին։

Մինչ եկ մահմեղականները
Մէջմէտ Բ. պատերազմներով էին զբաղուած
ՍՈՒԼԹԱՆ Փոքը Ասիայում կամաց-կամաց
զօրացան Օսմաննեան ցեղերը և
մինչև Բրուսա հասան։ 1453 թ. Մէհմէտ Բ.
սուլթանը կ. Պօլիսն առաւ։ Սուլթանն իր հպա-
տակների հետ շատ լաւ վարուեց ու երկրի
առեսութը ծաղկեցնելու համար հայերին կ.
Պօլիս հրափրեց, և Պրուսացի Յովակիմ եպիս-
կոպոսին 1461 թ. հայոց պատրիարք նշանակեց
առանձին արտօնութիւններով։ Այստեղից սկիզբ
առաւ կ. Պօլոյ պատրիարքութիւնը։

Մինոյն ժամանակներում աննախանձելի էր
հայոց կաթողիկոսութեան վիճակը։ Ռուբիննեանց օրով
կաթողիկոսի կայանն էր Միս քաղաքը, 1440 թ.
Գրիգոր թ. կաթողիկոսացաւ և հէնց առաջին օրից
երկպատակութիւնների տեղիք տուեց, որի համար և
հայերը 1441 թ. էջմիածնում կիրակոս Վիրապեցուն
կաթողիկոս ընտրեցին և այսպիսով միաժամանակ
երկու կաթողիկոսութիւն ունեցանք, որ այսօր էլ
շարունակում են։

Մէհմէտ Բ. իր երկրի սահմանները շուտով
ընդարձակեց և 1473 թ. Դերջանի մօտ յազմե-
ամականութիւն պահանջ արա՞ ամենարար 12.

Ղոկ Աթիւրքմէններին՝ Հայաստանի մի ուսմասին
տիրեց: Ժամանակ ըցցում մաս և զմայն նախան
Այսուհետեւ Օսմանցիք՝ երկար պատերազմ-
ներ մղեցին պարտիկների դէմ մինչեւ 1555 թ.
Վճարս վցամբ 1587 թ. Պարսկաստանում թա-
ՇԱՀ-ԱԲԲԱՍԻ գաւորեց Շահ Աբբաս Մեծը: Աս
ԱԲՇԱԽԱՆՔ շատ խելօք մարդ էր և Եւրոպա-
նաւորաց միջ ցող հետ յարաքերութիւն սկսեց,
Անգլիայից ռազմագէտներ հրաւիրեց իր զօրքը
Կըթելու համար: Շահ Աբբասը 1603 թ. Թաւրիզն
առաւ և Օսմաննեանք Սինան փաշային մէծ
զօրքով նրա դէմ ուղարկեցին, որովհետեւ նա
մտել էր նաև Այրարատ: Դեռ ևս Օսմանցի զօրքը
չհանած Շահ Աբբասը հրամայեց Այրարատի բո-
լոր հայերին: Այրարատեան գաշմը ժողովել:
Սկսուեց մի չափեանուած գաղթ երկիրն ամայա-
ցաւ, աւերուեց և թշուառ ժողովուրդը ոչխարի
պէս քշուելով Երասխի ափին կանգ առաւ: Շահ
Աբբասը փախենալով որ Օսմանցիք կարող են
հասել, հրամայեց անցնել գետով: Գետում ե-
ղած նաւերը բաւ չէին, իսկ պարսիկները ժողո-
վրդին փախեցնում էին պատիժներով՝ ոմանց
գլուխը կարելով ման էին ածում ժողովրդի մէջ,
ոմանց ցցի վրայ սպանեցին: Յուսահատ ժողո-
վուրդը գետը թափուեց, որ լողալով անցնեն.
ժողովրդի կականը երկնքի գութն էր շարժում,
շատերը խեղդուեցին, իսկ անցնողներին 1605 թ.
օդոստոսին քշեցին Պարսկաստան: Շահ Աբբասին
լաւ ընդունեց Զուղա քաղաքը, որի բնակիչները



ՇԱՀ ԱԲԲԱՍԸ ՔՇՈՒՄ Է ՀԱՅԵՐԻՆ

Շահը հայերի հետ շատ լաւ վարուեց, կրօնի
ազատութիւն շնորհեց և հանդիսաւոր տօներին
նոյնիսկ հայոց եկեղեցի էր զնում, հայ հարու-
տների հետ ճաշում, թեթև հարկեր վերցնում և
հայերին զրկող պարսիկներին խստիւ պատժում:
Շահ Աբբասը երկար պատերազմներ մղեց և
1613 թ. միայն հաշուուեց Օսմանցոց հետ, որով
Հայաստանի արևելեան մասը պարսիկներին մնաց:

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍՍԱՏԱՆՈՒՄ

Պարսկաստան գաղթած հայերից շատերը գաղտնի վերադարձած հայրենիք, իսկ նոր Զուղան շուտով առևտրի կեղրոն դարձաւ, Հաղկաստանի հետ յարաքերութեան մէջ մտաւ և նրանց կարաւանները գնում էին թիֆլիս, Քէփէ, Տրապիզոն, Ջմիւնիա, Կ. Պօլիս, իսկ ապրանքները ձենովաւ, վենետիկ, Մարսէլ, Ամստերդամ և այլ տեղեր:



ՊԵՏՐՈՍ ՄԵԾ

այդտեղից անցան Լրիմ: Յետոյ արդէն ԺԶ. գարում այդտեղից առաջ առաջին մոտ կային: ԺԱ—ԺԲ. դարում Կաղանի մօտ գաղութեան ունէին, 1062 թ. հայերը Կրկե՛ իշխանապետին օգնեցին Լէհերի հետ ունեցած պատերազմում: Հայերի գաղթավայրերից գլխաւորը Աստրախանն էր, բայց որովհետեւ այդ նահանգի ժողովուրդը շատ աւագակարոյ էր, ուստի և 1331 թ. հայերն այդտեղից անցան Յրիմ: Յետոյ արդէն ԺԶ. գարում Պարսկաստանցի հայերը Աստրախանի վրայով նույնից հետ առևտուր սկսեցին և 1626 թ. արտօնութիւններ ստացան: 1660 թ. Ռուսաստան գնաց հայ վաճառականների պատգամաւոր Խօջա Զաքար Սարհատեանցը և բազմատեսակ ընծաների հետ նուսաց Սլէքսէյ Միշայլովիչ թագավորին մի թանկագին գար ընծայտարաւ: Խուսաց արքունիքը շատ հաւանեց հայոց

արտադրութիւնները և 1667 թ. նոր Զուղայի վաճառականներին առանձին իրաւունքներ շնորհեց:

Պետրոս ՄԵԾԸ թագաւորելով հայերին 1708 թ. աւելի մեծ արտօնութիւններ տուեց և Տաճկահայերին էլ Պետրոս Աբրօփ միջոցով. հայ վաճառականներն ոչ միայն առևտուր բարձրացրին ուսւական շուկան, այլև մետաքսի առևտուրն առաջին անգամ նրանք սկսեցին Ռուսաստանում, իսկ 1718 թ. պարսկաստանցի Մաքար Բարսեղեանը Թէրեք գետի ափին մետաքսի գործարան բացեց:

Բայց հայերն իրենց անցեալ ՔԱՂԱՔԱԿԱՆ փառքը չէին մոռացել և Սիւնիք ԾՐԱԳԻՒՐԸ կամ Ղարաբաղը մի փոքրիկ տէրութեան էր նմանում բաժանուած հինգ գաւառների, Զրաբերդ, Գիւլիստան, Վարանդա, Խաչէն և Տուզախ, որոնք կառավարում էին հայ մէլիքներով և նրանք երբեմն իշխում էին ինքնազլուխ, իսկ երբեմն էլ Պարսկաստանին հարկ էին տալիս:

Մէլիքները վաղուց ծրագրել էին քրիստոնեայ տէրութեան հովանաւորութեամբ հայկական տէրութիւն հաստատել և Եւրոպայի հետ յարաբերութիւն սկսեցին: Դրանց միջնորդ հանդիսացաւ Խորայէլ Օրի հայն, ԻՄՐԱՅԷԼ ՕՐԻ որ գնալով Ֆրանսիա զինուորական 1698—1711 ծառայութեան մտաւ և հայերի

համար միջնորդեց և որպէսզի մօտից ծանօթանայ, 1699 թ. գնաց Ղարաբաղ Բաւարիոյ կիւրքիւրատի նամակներով և տէսնուեց մէլիք Սափրազի հնտ: Մէլիքները նրան

Մինաս վարդապետի հետ որպէս պատգամաւոր էտ ղըկեցին: Եւրոպացիք նրան մեծ խռոսութաներ տուին և նա 1700 թ. գնաց ներկայացաւ Թետրոս Մեծին և յետոյ գրաւոր զեկուցեց որ եթէ միայն 10—20 հազար զօրք գնայ Հայաստան, հայերը 100,000 զինուոր կհանեն և կաիրեն երկրին: Մինչ մելիքները պատրաստութիւն էին տեսնում, Օրին նորից Եւրոպա անցաւ և իբրև ուսուաց գեսպան շահի անունով նամակներով Սպահան գնաց 1709 թ.: Թէ ինչ արեց Օրին չերևաց, որովհետեւ 1711 թ. նա մեռաւ:

Օրիի սկսած գործը շարունակեց Մինաս վարդապետը, որ վերջը ուսուահյոց առաջնորդ էր: Պետրոս Մեծը 1722 թ. Դերբենդ հասաւ և Շամախի պիտի արշաւէր, բայց յանկարձ ետ նահանջեց, իսկ հայերը յուսացած Գանձասարը կեղրոն դարձրած բանակ էին կազմում, երբ յուսակտուր մնացին: Պարսիկներն իմանտրով հայերի միտքը՝ Երկիրը առջանակի մատնեցին: Պարաբաղը ինքնապաշտպանութեան դիմեց ու 500 կտրիճների զլուխն անցաւ ԴԱՀԻԹ Բէկ Վրաստանից նոր հկած Դաւիթ 1722—1728 բէկը 1722 թ., Նրա հետ միացան Միկիթար ու Տէր-Աւետիք հայրենասէրները, որոնք մի քանի հազար զինուոր ժողովեցին: Արդյունքին դանաւ

Պարսից հետ ունեցած առաջին ընդհարումը շատ յաջող էր, բայց Նախիջևանի մօտ յաղթուեցան և Դաւիթ բէկը Հոլիծորում ամրացաւ: Հայերը

խրախուսուած աւելի մեծ թուով խմբութեցան ազատարարների շուրջը կա 1724 թ., Ատեփան Շահումեան զօրապետը 2000 զինուորով Մեղրի քաղաքի մօտ յաղթեց պարսից զօրքին, իսկ մի մասն էլ թիւզքմէններին ցիր ու ցան արեց:



1727 թ. Օսմանցիք Ղափան մասնելով Դաւիթ բէկին յաղթեցին և Հոլիծորը պաշարեցին 6 օր շարունակ, բայց Տէր Աւետիքն իր 300 քաջերով դըսից, Դաւիթ բէկն էլ ներսից յանկարձ յարձակուեցան և փախցրին նրանց: Դաւիթ բէկը հաշտուեց պարսից հետ, մի քանի քաղաքներին տիրեց ու Ագուլիս մտաւ: Տէղացիք Մէլիք Մուսինից զրգուած նրա ղէմ ելան և նրա պատգամա-

ւոր Մելիք Փարսադանին էլ սպանեցին և Դաւիթը ստիպուած հեռացաւ այստեղից ուշա 1728 թ. մեռաւ:

Դաւիթ բէկից յետոյ Միկթար սպարապետը Օսմանցոց դէմ պատերազմներ մղեց, բայց հայերը Խնձորեաքում սպանեցին նրան 1630 թ. և գլուխը Օսմանցոց փաշային ղրկեցին: Փաշան զայրանալով, որ այդպիսի բաջ մարդ էին սպանել՝ սպանողներին մեռցրեց: Մելիքները շարունակեցին սկսած գործը և 1729 թ. Մելիք Աւանը յայտնեց Ռուսներին, որ հայոց բանակը սպասում է, բայց նոքա մերժեցին և առաջարկեցին գաղթել Ռուսաստան: Այս հրաւէր շատերին խարեց և շատերը գաղթեցին: 1732 թ. Պարսկաստանում թագաւորեց Նատըր շահը, որ 1735 թ. Ախուրեանի հովտում յաղթեց օսմանցոց և դաշն կապեց և այսպիսով Հալաստանը կրկին օսմանցոց ու պարսից մէջ բաժանուեց:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐ

ԺԱ. դարում բազմաթիւ հայեր Ղրիմի վըրայով Եւրոպա անցան և Գալիցիայում ու առհասարակ Լեհաստանում բնակութիւն հաստատեցին: 1280 թ. հայերն այնքան էին բազմացել, որ Գալիցիայի Լև Դանիլովիչ իշխանը հայերին հրաւիրեց օգնել հարեան ցեղերի հետ ունեցած պատերազմին, իսկ 1344 և 1356 թ. Լեհաստանի կազմիր Գ. թագաւորն առանձին արտօնութիւններ տուեց հայերին: Անիի վերջին՝ 1380 թ. կործանումից յետոյ լեհահայոց թիւը 40,000-ի հասաւ, որովհետև դեռ 1374 թ. Լիտովսկի իւրի Կարիատովիչ իշխանն էլ վաճառա-

կանութեան համար մեծ ջնորհներ էր արել հայերին: ԺԵ դարու վերջերում կամենեցի հայերը սեփական վԶՅԹ (կառավարիչ) ունեցան, 6 դատաւոր և 40 մարդուց մի խորհուրդ: Այս հիման վրայ հայերը սեփական դատարաններ բաց արին աշխարհիկ և հոգևոր գործերի համար, շատ անգամ չէին հպատակւում նոյն իսկ լեհական մագիստրատին և 1719 թ. լեհ ուռւական մագիստրատի բուրմիստր Նիկոլայ Պալիչը գանգաւառեց, որ հայերը ճնշում են տեղացիներին, ընդհանուր օրէնքները չեն ընդունում, գաղտնի ժողովներ են անում, որ նոյն իսկ լեհական թագին վտանգ է սպառնում, գործում են առանձնացած ի վեստ լեհերի և չնայած որ միայն Պարսկաստանի ապարանքով առևտուր անելու իրաւունք ունեն՝ ամեն ինչ էլ վաճառում են: Հայերի դէմ հալածանքը վաղուց էր սկսուել շնորհիւ եկեղեցական հարցերի: Էջմիածնի տնարժան Մելիքիսեղէկ կաթողիկոսը Լեհաստան գնաց՝ Լեմբերդ քաղաքը և 1626 թ. տեղացի հայ հարստի որդի 23 տարեկան Նիկոլ Թորոսովիչին եպիսկոպոս ձեռնադրեց: Նիկոլը ջերմեւանդ կաթոլիկ էր և նախ խարդախութեամբ հայ եկեղեցու պաշտպան ձեացաւ, իսկ յետոյ եղուիտների օգնութեամբ ու թագաւորի հովանաւորութեամբ Լեմբերդում իրեն կաթոլիկ յայտարարեց, գնաց Հոռմ և արքեպիսկոպոսութեան պատուով վերադարձաւ: Հայերը չուզեցին ընդունել, սակայննա կաթոլիկ ամբոխի օգնութեամբ

հայոց մայր եկեղեցին մտաւ և լատին ծէսով մաղթանք կատարեց: 1631 թ. հայերը գանգաւառւեցին էջմիածնի Մովսէս կաթողիկոսին և նա Խաչատուր վարդապետին ուղարկեց Նիկոլին աթոռնկեց անելու, սակայն Նիկոլը յայտնեց, որ էջմիածնի ճետոչ մի կապ չունի: Խաչատուրն էլ հրապարակաւ նզովեց նորան և վերադարձաւ: Կաթողիկոսը Վարդիմակ Թ. Թագաւորին գանգաւառեց, բայց Նիկոլը ոչ մի զիջում չարեց, և երբ Փիլիպպաս կաթողիկոսը կ. Պօլումն էր, գնաց նրա մօտ, խարեց և նոր իրաւունքներով ետ գնալով հայոց բոլոր եկեղեցիները գըաւեց 1666 թ., Հայերը ստիպուեցան դադանի ժամացութիւն անել և ծէսեր կատարեց: Նիկոլը բոլոր հայ քահանաներին, ստիպեց կաթողիկանու և ժողովուրդը մնաց անհովիւ: 1681 թ. մերժու Նիկոլը, բայց 1686 թ. կրօնական առնլի՛ մեծ ճնշում եղաւ և հայերը ստիպուած այդ անդից էլ սկսեցին դադթել: 1790 թ. հայոց ինքնավարութիւնը վերջացաւ և հայերն ընդհանուր մարդիստրատին ենթարկուեցին:

Դժգո՞ն հայերը դադթեցին մասամբ Մոլուկա: Դեռ 1671 թ. Օսմանեան-ինական պատերազմի ժամանակ նրանք Արտալում բնակութիւն հաստատեցին, արտօնուեցան և սեփական դատարաններ բաց արին, իսկ 1700 թ. շինեցին Հայապօլիս (Կերլա) քաղաքը: Կարուս Զ. կայսրը նրանց հրովարտակով 12 մարդուց ծերակոյտ գումարելու իրաւունք տուեց և հայ քաղաքպետ նշանակեց և այս քաղաքը մինչեւ այսօր էլ նախկին արտօնութիւններն ունի, թէպէտ բնակիչնե-

րի մեծ մասը ստիպուած կաթողիկացաւ: Քաղաքն ունի 7500 բնակիչ, հայ քաղաքապետով և պաշտօնեանելով և այսաեղ էր հրատարակւում (մինչև 1907 թ.) հունգարերէն Armenia ամսագիրը: Սուչաւա քաղաքի հայերը միայն մնացին իրենց հաւատի վրայ հաստատ մինչէ այսօր:

Լեհահայերից շատերը Եւրոպա գաղթեցին, ուր բազմաթիւ հայեր կային: Դլաւոր կեղուններն էին Վեհափառ, Ճենովա, Միլան, Պադուա, Մարսել, իսկ Հոլանդիոյ Ամստերդամ քաղաքը հայերի առևտուրական կեղունն էր մինչև 1790 թ.: Եւրոպական հայ գաղութը ստուարացաւ Տաճկահայոց կոտորածներից յետոյ: Հայերը մեծ գաղթականական կեղուններ ունին նաև Եղիպտոսում, Ամերիկայում, Բուլղարիայում, Անգլիական մի քանի քաղաքներում, իսկ Թրամսիան ու Շվեյցարիան հայ գտարանգիների բուն են:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵԼ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐ առ Հայերը շատ վաղ ծանօթացան Հնդկաստանին և հայ թագաւորների օրով առևտուրական կարսուաններ էին գնում ու գալիս:

Ժիշ դարում Նոր Ջուղայի հայերը վերակենդանացրին յարաբերութիւնները և Հնդկաց կալկաթա, Բօմբայ, Մադրաս քաղաքներում զաղութներ հաստատեցին, որտեղից անցան Սինգափուր, Ցէլլին, սրտեղ ակնավաճառութեան ձեռք զարկին: Ժիշ-լոդ դարու վերջերը Անգլիացիք Հնդկաստան մտան, շուտով յանկապատեցին երկիրը և սկսուեց չտիսնուած մրցում, որը և հարստացրեց հայերին և նրանք սկսեցին նաւագնացութեամբ զբաղուել:

Այնտեղ հայերը տպարաններ բաց արին,

գրքեր տպեցին, բաց արին դպրոցներ, հիւանդանոցներ, հիւրանոցներ, իսկ 1794 թուին լոյս տեսաւ հայերէն առաջին պարբերականը՝ Մադրասում «Ազգաբար» անունով Յարութիւն քահ. Շմաւոնեանի խմբագրութեամբ։ Հնդկահայերը ընկերութիւններ կազմեցին, որոնցից «Արարատեան» ընկերութիւնը կալվաթայում «Մարդասիրական ծեմարան» ու տպարան բացեց։ Հնդկահայ հարուստներից Սամուէլ Սուրատն և Ռափայէլ Ղաճամանը մեծ գումարներ կտակեցին ազգին, բայց այդ գումարները սխալմամբ Միխիթարեանց ձեռքն ընկան, որոնցով պահւում է Մուրատ Ռափայէլեան վարժարանը Վենետիկում։ Բացի այդ բազմաթիւ կտակներ էին արել նաև ուրիշ հնդկահայեր, որոնց կտակած գումարների մի մասը ստացան Նոր Նախիջևանցիք շնորհիւ Միքայէլ Նալբանդեանի 1861 թ.։

Հնդկահայերը էջմիածնասէր մարդիկ էին և նրանց բոլոր կտակները էջմիածնի անունով էին լինում։ Շուտով Հնդկահայոց գերը այլ կերպարանը ստացաւ Ժ. Դարու վերջը Յակոբ Շամիրեան անունով գերձակը տպարան բացեց և ի թիւս այլոց տպեց և Որովայթ վասուաց անունով մի գիրք, որ ապագայ Հայաստանի ծրագիրն էր։ Այս գրքից մի մի օրինակ դրկուեց ոռուսաց, վրաց արքունիքներին և Յովսէփ Դ. կաթողիկոսին։ Նոյն Շամիրեանը վրաց Հերակլ Բ. թագաւորից կոփ գաւառը ձեռք բերեց իրրե ազգի սեփականութիւն։ Բացի այս Հնդկահայերը մի տեսակ հայկական յեղափոխութիւն ստեղծելու հետամուտ եղան շնորհիւ ինչոր դարաբաղցի Մովսէսի և Սիմէօն կաթողիկոսը ստիպուեց առանձին կոնդակով նախազգուշաց-

նել նրանց, որպէսզի այդպիսով մահմեդականները կոտորած առաջ չըերեն։ Մօտ 1798 թ. մեռաւ Շամիրեանը և առժամանակ գործը կանգ առաւ, բայց շուտով մի ընկերութիւն կազմուեց, որը վճռեց թզաչափով գնել Պարսից Հայաստանը։ Գործի գլուխը կանգնեց հայ հարուստ Յովսէփ Յովհաննէս Ամար-խանը, որ Ներսէս Աշտարակցու հետ գաղտնի ծրագրեց ապագայ Հայաստանի նախագաղափարը։ Ամար-խանը Սմարանգցի էր և անհաջու կարողութեան տէր և 1829 թ. հոկտ. 20-ին գրեց Ներսէսին, որ ինքը համաձայն է գնալ Ռուսաստան, եթէ Նիկողայոս Ա. կայրը համաձայնի Երեանի ու Նախիջևանի նահանգում իր հովանաւորութեամբ հայկական իշխանութիւն հաստատել որի համար ինքն իր հարստութիւնից տարեկան 500,000 ֆրանքի եկամուտ կտայ ոսներին։ Ներսէսն այդ մասին Լազարեանի միջոցով յայտնեց, կայսրը 1830 թ. գեկտեմբերին համաձայնուեց որ Ամար-խանը Ռուսաստան գայ բանակցելու, և նա Շվեդիա գնալով ուղեց վերագարձին գնալ Պետերբուրգը, բայց ճանապարհին մեռաւ, մեռան և նրա ծրագիրները։

ՏԱՇԿԱՇԱՅԵՐ

ՊԱՏՐԻԱՐՔԻՆԵՐ և Պօլսի պատրիարքութիւնը եւ ԱՄԻՒԹԱՆԵՐ և ամիրաները հայ պատմութեան մէջ մեծ տեղ ունին, որովհետեւ պատրիարքները թէ աշխարհական և թէ կրօնական հարցերի վճռողներն էին և նրանց հետ գործում էին և ամիրաները։ Նրանք Օսմաննեան պետութեան մէջ առաջ գնացին, հասան նախարարական պաշտօնների, իսկ սովորաբար արքունի գրամահատներ և սեղանաւորներ էին։ Վերջը նրանք կրօնական հարցերում էլ ե-

բեացին և գորանով էլ կորցրին ժաղովրդի դէպի
իրենց տածած վատահութիւնը:

Տաճկահայոց խաղաղութիւնը վրդովուեց
կաթոլիկների չնորհիւ, որոնք մտան գաւառները
և սկսեցին հայերին կաթոլիկացներ։ Աւետիք
պատրիարքը նրանց դէմ հալածանք հանեց, բայց
չնորհիւ ֆրանսիացոց Դէնէտոս կղզի աքսորուեց,
որաեղից նրան եզումտները փախցրին և 1711
թ. տանջանքներով մեռաւ Բաստիլիայում։

Այս հարցը շուտով խճճուեց, որովհետեւ Օռ-
մանեանք կաթոլիկ հայերի վրայ վատ աչքով
էին նայում որպէս Եւրոպացոց բարեկամների,
իսկ ազգն իրար խառնուեց և ֆրանսիացոց դես-
պանների օգնութեամբ մի քանի պատրիարքներ
պաշտօնանկ եղան։ 1815 թ. պատրիարք ըն-
տրուեց Պողոս Աղքիանուպօլսեցին, որ 1820 թ.
ժողովի կանչեց հայ կաթոլիկներին և տուաջա-
դրեց միանալ, որովհետև պետութիւնը պահան-
ջում էր վերջ տալ այդ բաժանմանը։ Պատրի-
արքը էջմիածնից ոչ մի իրաւասութիւն չունե-
նալով զիջումներով հաշտուեց կաթոլիկների հետ,
որից դժգոհ հայ արհեստաւորները «հայ ենք»
գոռալով յարձակուեցին պատրիարքարանի վրայ,
բայց պատրիարքը փախաւ։ Բ. Դուռը ենիշարի-
ների միջոցով կարգը վերականգնեց և իրու խոռվարարների՝ Սագայեան Գրիգոր ամիրային
գլխատել տուաւ, իսկ Տէլի Պաղտասար և Յակոբ
կեսարեցուն էլ կախել տուաւ։

Շուտով սկիզբ առաւ ոռւս-տաճկական պա-

տերազմը և կաթոլիկները լուր տարածեցին, որ
առաքելական հայերն ինչպէս որ Արարատը ոռու-
աց ձեռքը ցցեցին, ուզում են և Տաճկահայքը
ոռուսաց ձեռքը տալ Պետութիւնն այս մատնու-
թեան վրայ ուշադրութիւն չդարձեց և հայոց
պատրիարքից հայերի համար երաշխաւորութիւն
պահանջեց. պատրիարքն երաշխաւորեց առաքե-
ղական հայերի համար, իսկ կաթոլիկների համար
չհամաձայնուեց և տէրութիւնը 1828 թ. նախ
եւրոպական դեսպաններին արտաքսեց, ապա բո-
լոր կաթոլիկներին աքսորեց։

Ոռւս-տաճկական պատերազմից յետոյ գես-
պանները վերադարձան և Բ. Դուռը 1829 թ.
նրանց ինդըին զիջանելով հայ կաթոլիկներին ա-
ռանձին համայնք ճանաչեց և 1830 թ Անտոն Վ-
նուրիձանն առաջին կաթոլիկ պատրիարք նըշա-
նակուեց։

Այդ ինդըիը նոր էր վերջացած, երբ Պօլիսը
ողողուեց ամերիկացի միսիօնարներով, որոնք
սկսեցին բողոքականութիւն տարածել՝ ձրի ս.
գիրք բաժանելով և 1850 թ ոմն Ստեփան Սե-
րովբեան նրանց ազգապետ նշանակուեց։

Այս անջանաւումների հետ տա-
թԱՆԶԻՄԱԹ ճիկներն էլ աշխատում էին թիւր-
1839 թ. քացնել թուլասիրաններին։ Սուլ-
թան Մէճիդի օրով Թաւուքճեան
Յովակիմ հայը, որ 4 տարի առաջ թիւրքացելէր,
զղջալով նորից քրիստոնեայ գարձաւ, Շուտով
նրան մատնեցին և կալանաւորեցին։ Յովակիմի

ծնողները դիմեցին ուսւաց և արգլիացոց դես-
պաններին և անզլիացոց դեսպանն անմիջապէս
ի. Դուռը դիմեց և խնդրեց պատելնըն, բայց
Դուռը մերժեց և առաջարկեց Յովակիմին նորից
թիւրքանալ. նա չհամաձայնուեց և գլխատուեց:
Անզլիացոց դեսպանը զայրացած դեսպանա-
ժողով գումարեց և յայտնեց Եւրոպացիներին այդ
արարքի մասին: Պետութիւնները պահանջեցին
ի. Դունից կրօնի՝ դաւանութեան ազատութիւն:
Դուռը ստիպուած եղաւ զիջանել, միայն գոր-
ծադրութեան համար եօթնամեայ ժամանակա-
միջոց խնդրեց և 1839 թ. նոյ. 3-ին հրատարա-
րակուեց Հաթլ Շէրիֆ Թանզիմաթը, որով ա.
կայսրութեան բոլոր հպատակների կեանքը, պա-
տիւն ու ստացուածքը ապահովում է. թ. Արո-
շում են միատեսակ տուրքեր բոլոր հպատակ-
ների համար. գ. Տուրքերը ըստ կարողութեան.
գ. Ծովի և ցամաքի բանակի ծախքի որոշումը.
ե. Հրապարակական դատավարութիւն համաձայն
կրօնաքաղաքական օրէնքների. գ. Սեփականու-
թեան իրաւունք. է. Յանցաւորի ժառանգը չէ
զրկում ժառանգութիւնից:

Թանզիմաթը հայոց մէջ նոր
ԱՄԻՐԱՆԵՐ եի խոռովութիւնների տեղիք տուաւ:
ԱՐՃԵՍՏԱԽՈՐ-Առիթը 1838 թ. իւսկիւտարում
ներ

բացուած ճեմարանն էր, որ մի-
ջոցներ չունէր և պատրիարքն առաջարկեց
արհեստաւորներին տուրքի ենթարկել և ըն-
տրել էսնաֆների ներկայացուցիչ - հսկաբար-

ՃՈՒՆԵՐ 24 հոգուց: Ամիրաները հաւանեցին
և շուտով կազմուեց հոգաբարձութիւն: Մի-
ևնոյն ժամանակ պատրիարքարանում էլ եկե-
ղեցական ու աշխարհիկ ներկայացուցիչներից
դատաստանական ժողով հաստատուեց, որը շու-
տով թադերում բաժանմունքներ բաց արաւ. 24
հոգուց մարմինն առաջարկեց որ իրենց ժողով-
ներում ամիրաները 6 ներկայացուցիչ ունենան,
բայց ամիրաները վիրաւորուեցան, որ արհեստա-
ւորներն ուզում են իրենց հետ հաւասարութիւն
միացեալ ժողովը ցրուեց: Յակոբ պատրիարքը
զգուած այս տարածայնութիւնից 1840 թ. հրա-
ժարուեց և ընտրուեց ամիրաների կողմանից
Ստեփան եպիսկոպոսը, որ նրանց հետ ուզում
էր փակել ճեմարանը: Էսնաֆները տեմնելով այս
պահանջեցին ճեմարանի եկամուտն առանձնա-
ցնել միւս հասոյթներից, որպէս զի ճեմարանը
յարատեէ: Ամիրաներն ընդդիմացան, իսկ ժողո-
վուրդը գանգատ տուեց թ. Դուռը խնդրելով
հաստատել 24-ի ժողովը որպէս ազգային գոր-
ծերի զեկավար: թ. Դուռը 1841 թ. յուլիսի 1-ին
հաստատեց. ամիրաներն ամեն ճիգ թափեցին
խանգարել գործը, բայց ժողովուրդը աղմուկով
Դուռը գնաց բողոքելու: Ամիրաները թէպէտ
աքսորել տուին շատերին, բայց դեկտ. 12-ին
27 հոգուց մի վարչութիւն հաստատուեց, որոնք
ամիրաների արարքներին չդիմանալով 1842 թ.
սեպտեմբերի 25-ին հրաժարուեցան:

1844 թ. պատրիարք ընտրուեց
ՄԱՏԹԵՈՍ Մատթէոսը (յետոյ կաթողիկոս),
որ ժողովրդասէր մարդ էր և նա
հաշտեցնելով արհեստաւորներին ու պմիրանե-
րին՝ 16 ամիբայից և 14 արհեստաւորից մի
ժողով կազմեց ու ազգային լուսաւորութեան
դարկ տուեց. նրա չնորհիւ բազմաթիւ դպրոց-
ներ բացուեցան, մամուլը յառաջափմեց, իսկ
ազգային հարցերում նա ժողովրդին կողմնակից
մնաց. Դժգոհ ամիրաները նրա իրաւունքները
կրծատելու ետևից ընկան և 1848 թ. մայիսի
9-ին մի հրովարապակ հանել տուին, որով երկու
ժողով պիտի հաստատուեր, մէկը 20 աշխարհա-
կան անձերից Գերազոյն անունով, որ քաղաքա-
կան էլ կոչուեց և միւսը 14 եկեղեցականներից
չոգենոր՝ կրօնական՝ պատրիարքի նախագահու-
թեամբ: 1848 թ. հոկտ. 1-ին պատրիարքը հրա-
ժարուեց և նորից Յակոբին ընտրեցին: Ազգային
ԺՈՂՈՎՐԴԻ ժողովի գործերը խաղաղ
ՍՍՀՄԱՆՍԴՐՈՒԹԻՒՆ ժողովի գործեամ, միայն
1860 ՄԱՅԻՍԻ 24-ին առաջ էին գնում, միայն
ճնշումների տակ միշտ միեւ-
նոյն անձինք էին ընտրուեմ, որից ժողովուրդը
դժգոհ էր: 1857 թ. Գերազոյն ժողովի անդամ-
ները մի կանոնադրութիւն խմբագրեցին, որ
ազգային ընդհանուր ժողովը էլ հաւանեց և
հետզհետէ մշակուելով 1860 թ. մայիս 24-ին
ազգի կողմից ընդունուեց և կոչուեց Ազգային
Սահմանադրութիւն: Բ. Դուռը հաստատեց այդ
որպէս մի պատգամաւորական ժողով, որ ունի

220 երեսփոխան և 180 էլ անդամակից, սրան-
ցից 160 հոգի Պօլսից, 60 գաւառներից, իսկ
անդամակից են գլխաւորապէս Պօլսոյ հոգեորա-
կանները, բարձր պաշտօնեաները, խմբագիր-
ները, գրագէտները, ուսուցիչները, բժիշկները
և այլն: Կրօնական ժողովը լինում է 14 հոգուց
քաղաքականը՝ 20: Ազգային վարչութիւնն ունի
Ուսումնական, Տնտեսական, Եկամտական և Դա-
տաստանական խորհուրդներ և բացի այս հաս-
տատում են թաղական խորհուրդներ և զաւառ-
ներում էլ ձիւղեր, միայն Պօլսում ազգային
վարչութեան նախագահը պատրիարքն է, իսկ
գաւառում առաջնորդները: Այսպիսով Սահմանա-
դրութիւնը դառնում է ղեկավար տաճկահայոց
բոլոր գործերի:

Նոյն տարուայ օգոստոսի 25-ին առաջին
ժողովը գումարուեց և Սարգիս պատրիարքի օրով
սկսուեց Սահմանադրութեան գործադրութիւնը: Սմիրնաներն այս անգամ աւելի ստոր միջոցների
դիմեցին՝ լուր տարածեցին թէ հայերն ուզում
են թագաւոր նստեցնել: Միևնոյն ժամանակ
վախճանուեց երուսաղեմի պատրիարքը և ազգ.
վարչութիւնն ուզեց որ նորը Սահմանադրութեան
օրէնքով ընտրուի. միաբանութիւնը մերժեց, իսկ
ժողովուրդը երկսի բաժանուեց՝ Սահմանադրա-
կան և հակասահմանադրական, կամ լուսաւորեալ
և խաւարեալ: Այս խորվութիւնն այնքան մեծա-
ցաւ, որ տէրութիւնը միջամտեց և Սահմանա-
դրութեան գործադրութիւնը կանգ առաւ, մինչև

որ 1863 թ. մարտին նոր հրամանով սկսուեց գործադրուել:

Բողոքովին այլ բան էր կատար ԶԵՅԹՈՒՆԻ և ուժ այդ ժամանակ ԶԵՅԹՈՒՆՈՒՄ, ԱՆՑՔԵՐԸ որ վաղուց ուզում էր ապատամբուել: ԶԵՅԹՈՒՆը 10 գիւղերի գանակցութիւն է, որից՝ 6 հայ և 4 թիւրքմէն: Բնակիչների թիւը 25000 հայ և 5000 թիւրքմէն է և կառավարում են ժառանգական իշխաններով: Կոհիւների պատճառը միշտ եղել է հարկեր տալը, որ նրանք չեն սիրում: 1862 թ. յունիսին երկու մահմեդականի մէջ տեղի ունեցած դէպքից օգտուելով Մարալի Ազիզ փաշան 12,000-ի չափ զօրք զրկեց ԶԵՅԹՈՒՆ, որ բանակեց Ալաբաշ հայ գիւղի մօտ, կործանեց շրջակայ գիւղերը և մօտ 200 հայ սպանեց: Ազատուող հայերը ԶԵՅԹՈՒՆ փախան, իսկ փաշան 4000 քրդերով կողոպտեց ԶԵՅԹՈՒՆի մերձակայ վանքը: ԶԵՅԹՈՒՆցիք մի քահանայ և 13 հայ ծերունիներին պատճամաւոր զրկեցին փաշայի մօտ, բայց նա ոչ մի պայման չընդունեց և պաշարեց ԶԵՅԹՈՒՆը, իսկ հեռանալու համար 500,000 դրուշ պահանջեց: ԶԵՅԹՈՒՆցիք 25,000 դրուշ դրամ խոստացան և 103,000-ի էլ ապրանք: թէպէտ փաշան համաձայնուեց, բայց օգոստոսի 2-ին յարձակում գործեց: ԶԵՅԹՈՒՆցիք իրենց 4 իշխաններով գուրս եկան կոուելու և թիւրքերը ետ նահանջեցին, իսկ զօրքի մի մասին հայերը ջարդեցին Աստուածածնայ վանքի մօտ: ԶԵՅԹՈՒՆցիք մօտ 150 հոգի կորց-

ըին, իսկ առանձնապէս զիւղացիք վասուեցին: Ազիզ փաշան պահանջներ արեց ԶԵՅԹՈՒՆից, բայց նրան պաշտօնանակ արին և յաջորդ Աշիր փաշան սկսեց պահանջներ անել ու խարէութեամբ իշխաններից երկսին բանտարկեց: Դժգոհ ԶԵՅԹՈՒՆցիք գաղտնի պատճամաւորներ զրկեցին կ, Պօլիս, երկու աշխարհական ու մի հոգևորական Փարիզ զրկեցին, որոնք ներկայացան նապօլէոն կայսեր, որի միջնորդութեամբ ԶԵՅԹՈՒՆի գէպքերը գաղարեցին: 1865 թ. ԶԵՅԹՈՒՆում թիւրք գայմագամ նշանակուեց:

1877 թ. ոռու-թիւրքական պատերազմից յետոյ թիւրք կառավարութիւնը նորից կալանաւորեց ԶԵՅԹՈՒՆի գլխաւորներին, բայց Պապիկ փաշա կոչուած հայ կտրիճը գերեց թիւրք գայմագամին և ազատեց միայն այն ժամանակ, երբ հայ գլխաւորներն ազատուեցան: Սրանից յետոյ գայմագամի պաշտպան 250 չէրքեզներին Պապիկը հրացանի բռնեց և կենդանի մնացած 5 հոգուն զրկեց Մարաշ եղելութիւնը պատմելու:

Այսուհետեւ մէկ-մէկ էլի ընդհարումներ եղան, որից նշանաւոր էր 1895 թ. ամառուայ մարտը, երբ հայերը գայմագամին 50 սպաններով և 600 զինուորներով գերի բռնեցին իրենց միրալայով, սակայն դեկտեմբերին հայ կանայքը նրանց կացիններով կոտորեցին մի անկարգութեան համար:

Կառավարութիւնը Ռէմզի փաշային 110,000 զօրքով նրանց դէմ զրկեց, բայց տաճիկները պարտութիւն կրեցին և ստիպուած ետ նահան-

ջեցին։ Սուլթանը ստիպուեց դեսպաններին դիմելու, որոնց միջամտութեամբ 45 օր տևող կռիւը դադարեց և 6 պետութեանց հիւպատուները 1896 թ. յունուարի 1-ին ԶԵՄուն մտան ու երկու կողմից չնշին զիջումներով հաշտութիւն կայացաւ։

Մինչև 1873 թ. եղած պատրիարքուն-ՏԱԾ-ՑԱԾԿԱԿ. քների օրով տաճկահայոց դրուգ ՊԱՏԵՐԱԶՄԸ թիւնը կամաց-կամաց ծանրացաւ, որովհետեւ գաւառներում ջարդերն կոտորածները

վերջ չնւնէին։

1874 թ. պատրիարքը ընտրուեց Ներսէս Վարժապետնեանը, որ թէպէտ սկզբում կառավարութեան կողմնակից էր, բայց վերջը իր համայնքի լիրմ պաշտպան հանդիսացաւ։

1875 թ. Բալկանեան երկրի աղյուսակարքութեան, հայերը չմասնակցեցին այս շարժմանը և պատրիարքը մի կոնդակով հաւատարմութեան յորդոր կարդաց հայերին։ Այս կոնդակը կողմից հայերը կայսերի կողմից մինչև Այա-Ստեփանոս հասան, իսկ միւս կողմից տիրեցին Արդահանին, Բայազէթին, Կարսին, Երզրումին։ Սոյն պատերազմի ժամանակ հայերը մեծ վնաս կրեցին, որովհետեւ Ալաշկերտի, Բայազէթի, Վանայ, Քղիի, Մշոյ և Տիգրանակերտի մէջ քրդերը սոսկալի անդժութիւններ արին։ Բ. Դուռը նեղուած՝ բոլոր հպատակ աղքերից զինուուր ուղեց, բայց հայերը մինչև հարցը կըքննէին պատերազմը վերջացաւ և Այա-Ստեփանոյում

1878 թ. մարտի 3-ին դաշնաք կնքեցին և Նիկոլայ Մեծ Դուքսը զիջանելով Ներսէս պատրիարքի աղաչանքին, որ անձամբ գնացել էր նրա մօտ՝ հետևեալ մացրեց 16-րդ յօդուածի մէջ։ Հնկատելով որ ոռւս զօրքերը Հայաստանի մէջ



ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

գերն ապստամբութեան, հայերը չմասնակցեցին այս շարժմանը և պատրիարքը մի կոնդակով հաւատարմութեան յորդոր կարդաց հայերին։ Այս կոնդակը կծու քննադատութեան ենթարկուեց

եւրոպացիներից, բայց երբ գաւառացոց դրութիւնը վատթարացաւ՝ Ազգային ժողովը հայերի կացութեան մասին մի տեղեկագիր կազմեց և Բ. Դուռն ներկայացրեց հաստատելու, Դուռը հչ միայն չհաստատեց այլ և հայոց վրայ սկսեց կասկածանքով նայել։ Բալկանեան հարցի համար Պօլսում գեսպանախորհուրդ գումարուեց, որը ծրագրով պահանջեց կառավարութիւնից բարեփոխել Բալկանեան ազգերի վիճակը։ Վարժապետեանը շատ ջանաց այդ ծրագրի մէջ հայերի մասին էլ յօդուած մտցնել, բայց պատասխաննեցին «Հայոց հարցը չկայ»։ Սուլթանը շընդունեց գեսպանների ծրագիրը և 1877 թ. ապրիլին Ռուսիան պատերազմ հրատարակեց և Ռուսաց զօրքերը շուտով մի կողմից մինչև Այա-Ստեփանոս հասան, իսկ միւս կողմից տիրեցին Արդահանին, Բայազէթին, Կարսին, Երզրումին։ Սոյն պատերազմի ժամանակ հայերը մեծ վնաս կրեցին, որովհետեւ Ալաշկերտի, Բայազէթի, Վանայ, Քղիի, Մշոյ և Տիգրանակերտի մէջ քրդերը սոսկալի անդժութիւններ արին։ Բ. Դուռը նեղուած՝ բոլոր հպատակ աղքերից զինուուր ուղեց, բայց հայերը մինչև հարցը կըքննէին պատերազմը վերջացաւ և Այա-Ստեփանոյում 1878 թ. մարտի 3-ին դաշնաք կնքեցին և Նիկոլայ Մեծ Դուքսը զիջանելով Ներսէս պատրիարքի աղաչանքին, որ անձամբ գնացել էր նրա մօտ՝ հետևեալ մացրեց 16-րդ յօդուածի մէջ։ Հնկատելով որ ոռւս զօրքերը Հայաստանի մէջ

գրաւած, բայց Թիւքքիային վերադարձնելիք տեղերից մեկնելով կարող են բարդութիւններով ու կոխներով խախտուել հրկու տէրութեանց յարաբերութիւնները, Բ. Դուռը պարտաւորուում է Հայերը բնակած գաւառներում առանց այլ ևս յապաղելու գործադրել աեղական պահանջներին կարեոր եղած բարւոքումներն ու բարեկարգութիւնները և երաշխաւորել քիւրդերից ու չէրքեղներից դրանց ապահովութիւնը»։

Երբ Ռուսաց զօրքն սկսեց հեռանալ՝ Ալաշկերտի ու Բայազէթի հայերից շատերը նրանց հետ գաղթեցին, բայց պատրիարքը գաղթի դէմ միջոցներ ձեռք առաւ։

Վարժապետեանը 16-րդ յօդուածով էլ չգոհացաւ և Տաճկահայքում ինքնավարութիւն ձեռքբերելու յուսով Խորէն Նարպէյ եպիսկոպոսին Պետերբուրգի և նախկին պատրիարք Խրիմեան Մկրտիչ եպիսկոպոսին (յետոյ կաթողիկոս) և Մինաս Զերազին Վեննայի, Հոռմի, Փարիզի, Լոնդոնի և Բերլինի արքունիքների մօտ դրկեց բարեխօսելու։ Հայ պատուիրակները հաւաքուցան Բերլին, ուր նրանց հետ միացաւ և Ստեփան Փափազեանը։

Բերլինում 1878 յուլիս 13-ին Բիսմարկի նախագահութեամբ Վեհաժողով բացուեց, որ վերջացաւ յուլիս 18-ին, և ազգային պատուիրակները մի ծրագիր ներկայացրին Հայոց մասին։ Վեհաժողովը յարգեց հայոց խնդիրը և 61-րդ յօդուածով, որ ծրագրել էին թիւրքաց ու ան-

գլիացոց լիազօրները՝ մուծեց դաշինքի մէջ հետևեալը. «Բ. Դուռը յանձն է առնում անյապաղ իրականացնել Հայոց բնակած նահանգներում այն բարւոքումներն ու բարենորոգումները, ինչ որ տեղական պէտքերը կպահանջեն և երաշխաւորել նոցա ապահովութիւնը քիւրդերի ու չերքէցների դէմ։ Բ. Դուռն այս նպատակի համար ձեռք առնուած միջոցների մասին պարբերաբար պիտի հաղորդէ տերութեանց, որոնք պիտի հսկեն նոցա վրայ»։

Այս բոլորից յետոյ պատրիարքը նկատեց որ Երկիրն աւելի է աւերւում և պատճառաբանուած հրաժարական տուեց։ Մեծ եպարքուր չընդունեց հրաժարականը, բայց պատրիարքը յայտնեց. «մինչև որ բարենորոգումները գործ չդրուին Հայաստանում, ես պաշտօնս շարունակել չեմ կարող»։ Ազգային ժողովն էլ մերժեց ընդունել նրա հրաժարականը, բայց Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոսին պատրիարքական փոխանորդ կարգեց։ Պատրիարքը չհանգստացաւ և սկսեց դիմումներ անել, որպէս զի ժողով բերէ գործը, բայց ոչինչ չեղաւ և 1879 թ. սարսափելի սով ընկաւ հայաստանում։

Միենոյն ժամանակ սկսեցին հայերին նեղել և Հայոց հարցն աւելի բարդուեց կոտորածներով և ազգային սահմանադրութեան գործադրութիւնը դադարեց, որպէսզի հայերն հնար չունենան ժողովներ գումարելու և քննութեան առնելու կառավարութեան հասցրած ճնշումները։

1894 թ. դեկտ. 7-ին պատիարք ընտրուեց Մատթէոս արքեպ. Իզմիրեանը, որը առաջինօրից դիմադրող քաղաքականութեան հետեւց, իսկ Թիւրքիան սկսեց հայերի ջարդը և գաղանի հրամաններ տուեց հայերին հայաստանից արտաքսելու։ 1891 թ. Տրավիզոնի ՀԱՅԿԱԿԱՆ հայոց ջարդը մի նշան էր, որ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ արձագանք տուեց Կարինում և անցաւ ուրիշ քաղաքները։ 1894

թ. յուլիսին քրդերը Սասունի վրայ յարձակուեցան և պարտութիւն կրելով բողոքեցին կառավարութեան։ Բիթլիսի վալին յայտաբարեց, որ հայերն ապստամբուել են և մեծ զօրաբանակով յարձակուեց Սասունի վրայ, սոսկալի անզթութիւններ գործեց, մանաւանդ Սուլթանի գահակալութեան տարեղարձին՝ օգոստոսի 30-ին և քրդերը համիդէ զօրքի հետ հիմնովին աւերեցին Շէնիկ, Սէմալ, Տալուրիկ և այլ գիւղերն ու գաւառները։ 1895 թ. յունուարին Մուշ հասան Բուսիոյ, Անգլիոյ և Ֆրանսիոյ ներկայացուցիչները, իրեն յանձնախումբ և պարզուեց որ օգոստոսի 12-ից մինչև սեպտեմբերի 4-ը սոսկալի ջարդեր են եղել։

1895 թ. Կ. Պօլսում սարսափելի կոտորած եղաւ, բայց հայերն այնտեղ համահաւասար կուռմ էին փողոցներում։ 1896 թ. Վանում կոտորած եղաւ, որից յետոյ բազմաթիւ հայեր թողին տունն ու տեղը և գաղթեցին Բուսատան, Ամերիկա, Բուլգարիա, Եգիպտոս և այն։

Կոտորածները նոյն թափով կրկնուեցան նաև 1900—1904 թ. որին յաջորդեց վերջին սովոր Վան առաջացաւ այն բանից, որ աէրութիւնը հրամայեց 20-22 տարուայ հարկերը գանձել, որով արհեստական սով ստեղծեց, որպէսզի հայերը փախչեն հայրենիքից։ Հայոց հարցը դուցէ մի վախճան ստանար, եթէ 1884 թ. չվախճանուէր Ներսէս պատրիարքը, որ մինչև իր մահը առանց երկիւղ կրելու քայլուեց Բ. Դրան հետ։ Մատթէոս արքեպ. Իզմիրլեանը շտապով էր և անհաւասար կոիւ սկրմեց շնորհիւ պետութեանց դեսպանների, որոնց նա հանգիստ չէր տալիս՝ և մինչև որ Մշում քննութիւն էր կատարւում, Անգլիան, Ռուսիան և Ֆրանսիան հայկական վեց նահանգների՝ երկարումի, Բիթլիսի, Վանի, Սվագի, Խարբերդի և Դիաբէքը համար 1895 թ. մայիսի 11-ին բարեկարգութեանց ծրագիր ներկայացրին Բ. Դրան։ Թէպէտ այս ծրագիրը իրականութեան մէջ կար, բայց կային վախեցողներ, որ հայերը կարող են թագաւորութիւն ստեղծել և մայիսեան ծրագրի փոխարէն դեսպանները համաձայնուեցին ընդունել Սուլթանի հոկտ. 15-ին առաջացած ծրագիրը։ Բայց այդ էլ չգործադրուեց որովհետև հայերը մի ցոյց արին Կ. Պօլսում և դեսպանները ետ նահանջեցին իրենց խոստումներից։ Այս գէպքից յետոյ կառավարութիւնը Իզմիրլեան պատրիարքին աքսորեց Երուսաղէմ։

— այսպահան, պարփառութիւն աօքն
Ա 877 և առ վզմանց բառու բային մային

ՈՌԻՍԱՀԱՅԵՐ եւ ԿՈՎԿԱՍՍԱՀԱՅԵՐ

Պետրոս Մեծը շուտով ճանաչեց ՀԱՅԵՐԸ հայերին, տեսաւ որ հայն գործադրութ են ծնական կեանքի ընդունակ ժողովութիւնը. վորդ է և իր վերածնիչ գաղափարներին էլ համապատասխան, ուստի ամեն տեսակ դիւրութիւններ՝ արտօնութիւններ տուեց, որպէս զի աւելի սերտ կերպով կապէ նրանց Ոռուսիոյ հետ։ Ճիշտ որ 1723 թ. սկսած մինչև 1799 թ. Պարսկաստանի հայերը հարուստ թէ չքաւոր շտապում էին դէպի Ոռուսիա, որտեղ նրանք փոքր ժամանակում մեծ ծառայութիւններ մատուցին պետութեան թէ որպէս վաճառականներ, թէ որպէս զինուորականներ և թէ այլ ասպարէզներում։ 1605 թ. հին Զուղայից Ոռուսաստան տեղափոխուեց Մանուկ Լազարեանը, որի որդին Շահ Աբբասի Դրամահատարանի կառավարիչ էր, իսկ թոռը՝ Լազար Լազարեանը նոր Զուղայի փոխարքայ։ Մրանց որդիքը տեղափոխուելով Ոռուսաստան մեծամեծ պաշտօնների հասան և 1816 թ. հիմնեցին Մոսկուայի Լազարեան ձեմարանը, որ բացուեց հայերի համար հայկական ծրագրով։

Այս գաղթի հետ զուգընթաց ՅՈՎՍԻՓ ԱՐՔԵ-էին գնում և քաղաքական յարագիսկող բերութիւնները և էջմիածնի Միմէօն կաթուղիկոսը յարաբերութիւն սկսեց ոռուսաց արքունիքի հետ և 1773 թ.

Յովսէփ արքեալ. Արդութեանին Աստրախանի առաջնորդ նշանակեց։ Յովսէփ արքեալ. բնական խելքով օժտուած հոգեւորական էր և փոքր ժամանակում պատկառելի դիրք ձեռք բերեց։ Գնալով Աստրախան, անմիջապէս ծանօթացաւ տեղոյն գաղութի նիստ ու կացի հետ, անցաւ Ղրիմի և միւս նահանգներում բնակուող հայերին այցելելու ու ըստ այնմ էլ կարգադրեց ամեն ինչ և 1779-80ը հիմնեց Նոր Նախիջևան քաղաքը, որ հայկական կենդրոն դարձաւ. բարձրագոյն հրովարտակով բնակիչները 10 տարի ժամանակով ազատ մնացին հարկերից։ Շուտով հայկական Մագիստրատ բացուեց, առևտուրական արտօնութիւններ արուեցին և 1781 թ. Հայկական դատարան բացուեց, որի ՅՈՎՍԻՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ համար Յովսէփ արքեալ.



126 յօդուածից մի կանոնագրութիւն կազմեց, որ մինչև 1836 թ. գործադրուեց։ 1792 թ. Յովսէփ արքեալ. Բեսարաբիայում Գրիգորիուպոլ քաղաքի հիմքը դրեց, որտեղ բնակութիւն հաստատեցին Թիւրքիայից գաղթած հայերը։ Յովսէփը իր ժողովրդի անտեսական ապահովութեան համար գնաց Պետերբուրգ, որտեղ նրան շատ լաւ ընդունեցին և զիջանելով նրա խնդրին

1799թ. Աստրախանի, Ղզլարի, Մողղոկի, Գրիգորիովի, Ղրիմի, Դերբենդի և Մուսկուրի հայ հասարակութիւններին հրովարտակներով արտօնութիւններ տուին, որով հայերն ազատուելով զանազան հարկերից ու պարտաւորութիւններից իրաւունք ստացան հայկական դատարաններ բանալ և տոհմական կարգերով ղեկավարուիլ:

Բայց Յովսէփ արհիի ծրագիրն այն չէր, որ Հայութիւնը Ռուսաստան գաղթի. նա, ճիշտ է, քաղաքներ հիմնեց, բայց և չմոռացաւ որ հայութիւնն իր երկրում պէտք է ապրի և ունենայ սեփական կեանք. և արհին օգտուելով Եկատերինէ Բ. կայսրուհու դէպի հայերն ունեցած բարի տրամադրութիւնից ուղղակի յայտնեց, որ ուզում է Հայաստանում ինքնավարութիւն ըստեղծել ուսաց հովանու տակ և այդ նպատակով էլ նա ամեն անդամ օգնում էր ուսաց զօրքին, իսկ 1795 թ. մի կոչ-շրջաբերականով հայերին զինեց պարսից դէմ, որպէս զի ուսւները յաջողութեամբ տիրեն կովկասին: Ռուսաց արքունիքը սկսեց յարաբերութիւն արհիի հետ և հետեւեալ հարցերը մէջ ընկան. ա) Հայկական նահանգները ուսաց անմիջական հովանու տակ առանձին թագաւորութիւն են կազմում, բ) Հայերը Ռուսաստանին հարկ պիտի տան, իսկ պատերազմի ժամանակ՝ զօրք, գ) Հայաստանը պիտի կառավարուի տոհմական օրէնքներով, դ) Ռուսաց մի զօրաբաժին պիտի մնայ հայկական

նահանգներում որոշ ժամանակով թէ երկիրը պաշտպանելու և թէ նրա վրայ հսկելու համար, ե) Հայոց թագաւորի ընտրութիւնը պիտի կատարուի կայսրունու կամքով և թագաւորը պիտի ունենայ դեսպան Պետերուրդում, գ.) Մայրաքաղաք՝ Երևան կամ Վաղարշապատ և ազգային դրօշակ երեք գոյնով և է) երկու Երկիրներ առերական դաշինք են կապում և մաքսային օրէնքներ հաստատում:

Այս պայմանների մասին դեռ ևս վերջնական համաձայնութեան չեկած 1796 թ. վախճանուեց հայութեան բարերար Եկատերինէ Բ. կայսրուհին և քաղաքական յարաբերութիւնները խզուեցան առ ժամանակ:

Յովսէփ արհին չինատուեց, ուզեց բուն Հայաստանում կենդրոնանալ: Զնայած որ նրան չէին սիրում էջմիածնի միաբանութիւնն ու կ. Պօլսի հայերը, այնուամենայնիւ 1800 թ. նրան կաթողիկոս ընտրեցին և ուսաց ու օսմանեան արքունիքներից հաստատման հրովարտակներ ստանալով 1801 թ. փետրուարին Թիֆլիս հասաւ էջմիածին գնալու համար, բայց որովհետեւ Վրաստանի Ռուսիոյ հետ միացման տօնն էր կատարուելուն նա հանդիսադիր եղաւ: Այսուհետեւ վրաց Դարէջան թագուհին արհիին իր սեփական բաղնիքը հրաւիրեց, որից յետոյ նա թագուհու մօտ գնաց, որտեղ նրան շարբաթ տուին խմելու: Այդ օրից արհին հիւանդացաւ և մարտի 9-ին վախճանուեց: Նրա մարմինն ե-

բեք ամիս Թիֆլիսում պահելուց յետոյ տարան
ու թաղեցին էջմիածնում:

Յովսէփի մահից յետոյ մեծ խռովութիւն ծագեց
էջմիածնում, որովհետև ազգը և միարանութեան մեծ
մասը կաթողիկոս ընտրեցին Դանիէլ եպիսկոպոսին,
բայց Դաւիթ եպիսկոպոսը, որ դեռ առաջ յայտնի էր
որպէս խոռվարար՝ իր կուսակիցների չորրին Երևանի
սարդարին կաշառելով՝ բռնութեամբ կաթողիկոս օ-
ծուեց 1801 թ., իսկ Դանիէլի կուսակիցները Ռուսա-
ստանի հայոց առաջնորդ Եփրեմի խորհրդով և Կ.
Պօլսի Ռուսաց դեսպանի օգնութեամբ 1802 թ. մայի-
սին Բագրեանդի հւճքիլիսէ վանքում կաթողիկոս օծե-
ցին Դանիէլին: Դաւիթը լսելով այս շատ աշխատեց
խանգարել, բայց չյաջողուեց և վերջը իբր թէ հաշ-
տուեց Դանիէլի հետ և երկուսն էլ ապրում էին էջ-
միածնում: Բայց Դաւիթը Դանիէլին ոռոսասէր հո-
չակելով՝ բանտարկեց:

Միենոյն ժամանակ Ռուսաց ու Պարսից մէջ պա-
տերազմ ծագեց և 1804 թ. Ռուսաց զօրքը Ցիցիանով
զօրապետի առաջնորդութեամբ պաշարեց Երևանը,
բայց Ցիցիանովը և ու նահանջեց: Դաւիթը պարսից
Ֆաթ-Ալի շահի առաջ պատերազմի պատճառ Դանիէ-
լին դուրս բերեց, որի համար նրան աքսորել տուեց
Մարաղա, որտեղի սարդարը բարեկամացաւ նրա հետ
և տեսնելով որ մի անմեղ մարդ է, 1807 թ. յաջողե-
ցրեց Դանիէլին նորից կաթողիկոսացնել: 1809 թ.
վախճանուեց Դանիէլը և որպէս զի Դաւիթը չըսոնա-
նար՝ ընտրեցին Եփրեմ եպիսկոպոսին և հրաւիրեցին
էջմիածնին:

Այս բոլոր անցքերի գլուխն էր կանգնած Ներ-
սէս եղ. Աշտարակցին և կաթողիկոսական բոլոր կար-
գագրութիւնները նա էր անում:

Եփրեմը 1810 թ. նոյեմբ. 8-ին
ՆերՍէս օծուեց կաթողիկոս և փոխանակ
ԱՇՏԱՐԱԿՅԻ իր բարերարներին վարձատրելու
մինչև անգամ դժգոհութիւն յայտնեց, որ Ներ-
սէս եպիսկոպոսը խառնուում է կաթողիկոսական
գործերի մէջ և Ներսէսը դժգոհ Վեհի այդ վար-
ձունքից՝ Թիֆլիսի առաջնորդ նշանակուեց.
Թիֆլիսում Ներսէսը յայտնի եղաւ որպէս գոր-
ծունեայ առաջնորդ և 1823 թ. բացեց «Ներսէ-
սեան» գպրոցը, եկեղեցիները կարգի բերեց,
իսկ փոխարքայի հետ մօտ ծանօթացաւ: Այս
բանը շատ վիասեց Եփրեմին, որովհետև Մայր
Աթոռը պարտքի տակ խեղդուած էր և կաթողի-
կոսը վճարել չկարողանալով փախաւ էջմիածնից
և ստիպուած Ներսէսին ապաւինեց:

Ներսէսը շարունակ աշխատում էր, որ էջմիա-
ծնը մի կերպ դուրս պոկէ պարսիկներից և
աշխատում էր համոզել Ռուսաց արքունիքին
տիրել Երևանեան նահանգին որ և յաջողուեց:

Երևանի սարդար Հասան խանը,
ՌՈՒՍ-ՊԱՐՍ. որ իր Հիւսէին եղօր հետ Այրա-
ՊԱՏԵՐԱԶՄ բատի տէր ու իշխան էր, 1826 թ.
1826—1827 յուլիսին յանկարծ անցաւ Ռուսաց
սահմանը և նրանց ձեռքն եղած գաւառները
ասպատակի մատնեց ու շատ տեղերին տիրեց:
Ռուսները յանկարծակի գալով չկարողացան
անմիջապէս դիմագրել, բայց յետոյ հայազգի
գեներալ Մադաթովը ոռոսական զօրքով սարսա-

փելի կերպով ջարդեց պարսիկներին Շամքորի
մօտ ու Գանձակն առաւ:

Ներսէսը վերջապէս իր ըղձերը կատարած
էր տեսնում և 1826 թ. մի կոչ ուղղեց հայե-
րին, որով ճրաւեիրում էր ամեն կերպ օժանդա-
կել ուստաներին՝ յաջողութեամբ առաջ տանել
աշխարհակալական գործը, ինքն էլ յայտնեց Կով-
կասի կուսակալին, որ ուզում է հայկական զօ-
րագումդ ժողովել հայ կամաւորներից: Նրա
այս առաջարկն ընդունուեց և զօրագումդը
մարտի 30-ին Թիֆլիսում զօրահանգէս կա-
տարեց: Հայոց զօրքը դեռ բոլորովին պատ-
րաստ չէր և Ներսէսը ապրիլին գնաց ուռ-
սաց բանակը, իսկ զօրքին կազմակերպելը յանձ-
նեց կազմուած յանձնաժողովին: Ներսէսը Բեն-
կենդորք զօրավարի հետ ապրիլի 13-ին էջմիա-
ծին մտաւ, իսկ հայոց զօրքի դրօշակը մայիսի
15-ին օծուեց և զինուորներին երդուեցրին: Թիֆլիսի
զինուորական նահանգապետ Սիպեա-
գինը մի կոչով դիմեց հայերին և հայ զօրքի
կազմակերպութեան համար հրահանգներ առւեց:

1827 թ. մայիսի 12-ին պատերազմի դաշտը
ձանալարհուեց զօրավար Պասկեիչը, իսկ մայիսի
17-ին մօտ 2000 հոգուց գունդը ձանալարհ ըն-
կաւ Թիֆլիսից. նա հետզհետէ շատանում էր նո-
րանոր կամաւորներով: Զօրքը թէպէտ փոքրա-
թիւ էր, բայց մեծ ծառայութիւններ մատուցին
ուներին: Պասկեիչը նամներով էջմիածին՝ ուժե-
ղացրեց Երևան պաշարող զօրքը և զլխաւոր բա-

նակի հետ յունիսին տիրեց Նախիջևանին և յու-
լիսի 7-ին էլ առաւ Աբբաս-Աբագը: Շուտով
երեաց և պարսից գլխաւոր բանակը Աբբաս-Մի-
րզայի հրամանատարութեամբ: Երևան պաշարող
զօրքը ճիւանգութիւններ ատարածելու պատճառով
հեռացել էր Բաշ-Աբարան և Աբբաս Միրզան
օգոստոսի 15-ին պաշարեց էջմիածնի վանքը և
սկսեց ամբակոծել: Վանքին օգնութիւն համելու
համար Բաշ-Աբարան եղած զօրքը կրասովսկու-
առաջնորդութեամբ առաջ շարժուեց և էջմիածնի
այգիների մօտ պարսիկների հետ ընդհարուեց,
որտեղ ուռները մեծ կորուստ ունեցան, բայց
կրասովսկին չնայած վիրաւորուել էր՝ հասաւ
մտաւ էջմիածին փառաւոր յաղթութիւնից յետոյ:
Պատկեիչը լսելով այս շտապեց դէպի էջմիածին
և շատ սառը վերաբերուեց դէպի Ներսէսն ու
կրասովսկին, նրանց ոսւս զօրքի կոտորման
պատճառ համարելով:

Պատկեիչը կրասովսկուն ուղարկեց Սարդար-
Աբագը նուածելու, որ և շուտով յաջողուեց, իսկ
ինքը սեպտ. 23-ին Ներսէսի հետ գնաց ու պա-
շարեց Երևանը: Ներսէսը քաղաքի հետ գողտնի
յարաբերութեան մէջ մտաւ և շարունակ ի նպաստ
ուսաց կոչեր էր ուղարկում: Վերջապէս հոկ-
տեմբերի 1-ին Երևանը առնուեց:

1828 թ. փետր. 9-ին կոռուղները թուրք-
մէնչայում հաշտուեցան, որով ա) Երասի և կուր
գետերի մէջ եղած երկիրները մնում են ունե-
րին և բ) պարսից Երկրից Թուսաստան անցող-

ներին՝ գաղթողներին ոչ մի արգելք չդնել։ Սրա հետևանքն այն եղաւ, որ բազմաթիւ հայեր Դարպարոս Լազարեանի առաջնորդութեամբ ոռուաց հողն անցան։

Միևնոյն ժամանակ վերջացել էր և ոռուածածկական պատերազմը և բազմաթիւ գաղթականներ Կարսոյ Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ Ախալցխա էին անցել, որով ոռուածապատակ ժողովրդի թիւը մեծացաւ, իսկ հայ գաւառները դատարկուեցան։

Նոր տիրած նահանգները շուտով վարչական կազմակերպութիւն ստացան և 1828 թ. մարտի 21-ի հրովարտակով «Հայոց աշխարհ» կոչուեցին, իսկ կայսեր տիտղոսներին աւելացան և «թագաւոր հայոց» խօսքերը։ Հայոց աշխարհի համար շուտով ժամանակաւոր կառավարութիւն կազմուեց, որին մասնակցում էր և Ներսէս Աշտարակցին, բայց Ներսէսը դժգոհ էր իսկ Պատկեփին երկար չսպասեց և ըմբոստ Ներսէսին Բեսսարաբիոյ առաջնորդ նշանակել տուեց։

Էջմիածինը ոռուաց ձեռք ընթաց ՀԱՅԱՍՏԱՆԻ կնելուց յետոյ Եփրեմ կաթողիկոսը, որ Տփխիսումն էր, եօթնամեայ տարագրութիւնից յետոյ 1828 թ. էջմիածին գնաց և 1830 թ. հոկ. 8-ին հրաժարուեց կաթողիկոսութիւնից և կոմսի պահանջով կաթողիկոս ընտրուեց 1831 թ. Յովհաննէս Կարբեցի եպիսկոպոսը, մի գիտառակը ու թուլամորթ հոգևորական։ Տաճկահայերը չուզեցին ընդունել

նրան և մինչև անգամ եկեղեցիներում չէին յիշատակում նրա անունը։

Կովկասեան տեղական վարչութիւնը ծանօթանալով հայութեան հետ, մի յանձնաժողով կազմեց, որ երկար աշխատանքից յետոյ պատրաստեց մի կանոնադրութիւն հայոց եկեղեցու համար, որ յայտնի է «Պօլօժենիէ» անունով և որ հաստատուեց 1836 թ. մարտի 11-ին։ Պօլօժենիէն մասամբ յարմարեցրած է հայ եկեղեցու հնաւանդ օրէնքներին, բայց մէջը կան և շատ խորթութիւններ։ Սորս հետ միասին 1837 թ. փետր. 22-ին բացուեց և Սինօդը, որ նոյնպէս հաճելի չէր տաճկահայերին։

1842 թ. մարտի 26-ին վախճանուեց Յովհաննէս կաթողիկոսը։

Յովհաննէս կաթողիկոսի մահից Ներսէս Ե. յետոյ 1843 թ. Ներսէս արքեպ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ընտրուեց կաթողիկոս։ Ներսէսը քիչ ուշ հասաւ էջմիածին և հէնց գալու օրից վանքի գրութիւնը բոլորովին յեղաշրջեց։ Նա իր կաթողիկոսութեան ընթացքում կեանքի մեծ մասը Թիֆլիսում անցրեց, շարունակ շրիւմն ունենալով Կովկասի գոխարքաների հետ, որոնցից իշխ. Վօրօնցովի հետ շատ մտերիմ յարաբերութեան մէջ էր, և իր գերքը կարողացաւ այն աստիճան բարձրացնել, որ աղաներն ու իշխաններն իսկ գողում էին նրա առաջ։ 1857 թ. Փետրուարին Թիֆլիսում յանկարծամահ եղաւ Ներսէս Ե. և թաղուեց էջմիածնում։

Ներսէսից յետոյ կաթողիկոս ըն-
ՄԱՏԹԵՈՍ ԵՒ տրուեց Կ. Պօլսի նախկին պատրիարք
ԳԵՂԻՐԴ ԿԱՅԹՈՒ Մատթէոս (1859—1865 թ.), որ կըր-
շիկուներ թական գործին մեծ զարկ տուեց և
երբէք չկարողացաւ յարմարուել Սինօդին, միանգա-
մայն մերժելով Պօլօժենիէի մի շարք յօդուածները:

Մատթէոսից յետոյ եղած Գէորգ Դ. կաթողիկոսը՝
(1866—1882 թ.) գործունեայ մարդ էր, և 1874 թ.
հիմնեց ճեմարանը: 1876 թ. դեկտեմբերին կովկասի
փոխարքայ Միխայիլ Նիկոլաևիչին թիֆլիսի հայ-
երի կողմից ինը հոգի որպէս պատգամաւորներ
տաճկահայոց համար մի ուղերձ մատուցին կայ-
սեր անունով, բայց Գէորգ Դ. ոչ մի քայլ չա-
րեց, որով և թշնամիներ վաստակեց, իսկ երբ ուռւ-
տաճկական պատերազմից յետոյ Ալաշկերտի ու Բայա-
զէթի գաղթականները հասան էջմիածին, էջմիածինը
շատ վաս ընդունեց նրանց: 1882 թ. դեկտեմբերի 6-ին
վախճանուեց Գէորգ Դ.:

ՆՈՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ

1881 թ. մարտի 1-ին եղեւնա-
ԿՈՎԿԱՍԱՀԱՅՔ բար սպանուեց Ալէքսանդր Ա.
ազատարար թագաւորը և կովկասից հեռացաւ փո-
խարքայ Միխայիլ Նիկոլաևիչը, որին տեղացի-
ները սիրում էին որպէս խաղաղասէր իշխանա-
ւորի: Նրա օրով հայոց կեանք եռում էր, յա-
րաջադիմեց մամուլն ու գրականութիւնը, բա-
ցուեցան դպրոցներ և ընկերութիւններ: Բայց
նրա հեռանալուց յետոյ բոլորը փոխուեց: Երկրի
կառավարչապետ Դօնդուկով—կորսակովի ծրա-
գրի համաձայն 1884 թ. փետր. 16-ին հրատա-
րակուեց հրովարտակ, որով կովկասեան բոյոր հայ

ծխական դպրոցները, որոնք ղեկավարում էին
1874 թ. յուլիսի 19-ին հաստատուած ծրագրով՝
փակուեցին: Հայերը մնալով առանց կաթողիկոսի,
որովհետեւ Գէորգ Դակայ ընտրուած Մելքի-
սեպէլ արքեպութիւն յոյց չըտուին: Միևնույն
ժամանակ կաթողիկոսական երկրորդ ընտրու-
թիւնն եղաւ և 1885 թ. Մակարը հաստատուեց
կաթողիկոս և կառավարութիւնն ի պատիւ նրան
1886 թ. վերաբացեց դպրոցները, բայց սահմա-
նափակ ծրագրով:

1887 թ. յայտարարուեց կովկասեան ազ-
գերին զինուորագրութեան ենթարկելու հրովար-
տակը: Զինուորագրութեան մասին սուտ լուրեր
տարածուեցան և տեղադրէ զինուորակոչի ժա-
մանակ բողոքներ եղան և հայերին ապստամբ
դուրս բերին: 1890 թ. Տրապիզոնում և Կարի-
նում հայկական կոտորածներ տեղի ունեցան և
՚ի հարկէ կովկասի հայերը բողոքեցին, մինչև
անգամ գաղտնի յեղափոխական գնդեր կազմե-
ցին Օսմանեան կառավարութեան դէմ, բայց
կարսի մօտ նրանց բռնեցին:

1893 թ. կաթողիկոս հաստատուեց Մկրտիչ
Ա. Խրիմեանը և 1894 թ. նորից դպրոցների
հարցը մէջ տեղ երևաց:

1896 թ. Մասալովս և իշխ. Ուխտոմսկին որ-
պէս քննիչներ եկան կովկաս էջմիածին, բայց
քննութիւնից երևաց, որ հայերը ոչ մի գաղտնի
միտում չունեն: Բայց և այնպէս 1897 թ. նորից

փակուեցին հայոց դպրոցները, 1898 թ. Մարտի 2-ին գպրոցական կալումածների գրաւման հրահանգներ տրուեցին, իսկ 1898 թ. փակեցին հայոց ընկերութիւններն ու գրադարանները, 1900 թ. հայոց Հրատարակչական ընկերութիւնը:

Այս բոլորից յետոյ՝ 1901 թ. ՏԱՅԿԱՀԱՅՈՑ կովկասեան կառավարութիւնն ավիձԱԿԸ ուաջարկեց տաճկահայերին կամ հեռանալ Ռուսահպատակ և կամ ուռսահպատակ գրուել: Ռուսահպատակ գրուելով նրանք կորցնում էին այն բոլորը, որ թողել էին հայրենիքում, իսկ մտնել Թիւրքիա անկարելի էր, որովհետեւ նրանց առաջ պատկերացած էր մահուան սարսափը և երկրորդ՝ Թիւրքիան չկամեցաւ ընսունել գաղթած հայերին: 1902 թ. օգոստ. 5-ին Թիֆլիսի ոստիկանապետը 10 օրուայ ժամանակամիջոց որոշեց հեռանալու համար: Օգոստոսի 11-ից Թիֆլիսից դուրս եկան խումբ խումբ գաղթականներ և դիմեցին դէպի հայրենիք: Գաղթականները հաւաքուեցան սահմանագլխին գըտնուած գիւղերը, որտեղ նրանց հետ միացան տեղոյն գաղթականները և մօտ 2600 հոգի դիմեցին դէպի ռահմանը, բայց սահմանապահ զօրքը խոչնդու եղաւ նրանց և գաղթականները դիմեցին Պարսից սահմանը, որտեղ յառաջընթաց խումբը հրացանի բռնուեց, իսկ մնացեալներին վարչական եղանակով ետ բերին:

Գաղթողները սեպտ. 10-ին դիմեցին Թիֆլիսի հիւպատոսի միջոցով Ֆրանսիական Հանրա-

պետութեան արտաքին գործոց մինիստրին, որ Սուլթանի առաջ միջնորդէ ընդունել հայ գաղթականներին: Այս էլ զուր անցաւ և նրանցմէկ մասը գաղտնի Պարսկաստան անցան, ոմանք ուսւահպատակ գրուեցին, իսկ ոմանց ուղարկեցին բնակուելու Ռուսիոյ խորքերում:

1903 թ. յունիսի 12-ին հրատաեկեցական բակուեց բարձրագոյն հրովարտակ ԿԱԼՈՒԾՆԵՐ որով կառավարութիւնը նպատակ էր գրել ա) մեծացնել Հայոց եկեղեցու եկամուտները և նպաստել նրա բարգաւաճման, թ) ապահովել չքաւոր հոգեորականներին և գ) ազատել եկեղեցու կալուածներն ապօրինի յափշտակութիւնից: և այս բոլորը գլուխ բերելու համար եկեղեցական կալուածները յարքունիս գրաւուեցն: Այս դէպքից յետոյ՝ յուլիսի 29-ին երբ Մկրտիչ կաթողիկոսը Ալէքսանդրապոլից էջմիածին էր մեկնում, եկեղեցու զանգերի դօդանջիւնով յաջորդարանի մօտ խմբուեցան 5000-ի չափ հայեր, որոնք պահանջեցին կաթողիկոսից բողոքել: Օգոստոսի 16-ին Երևանից ահազին բազմութիւն Սուքիասի արքեպ. Պարզեանի հետ ոտով էջմիածին գնաց, և բողոքեց կաթողիկոսին: Յոյցեր կրկնուեցան Գանձակ, Բագու, Երկուսն էլ արիւնալից: Տիմիսում օգոստոսի 3-ին մեծ ցոյց եղաւ, իսկ շատ տեղերում գրաւման ըուղին ժողովուրդը ընդդիմութեան ցոյցեր արեց, որի հետևանքն եղան աքսորներ և բանտարկութիւն: Կալուածների գրաման դէմ բողոքեց նաև

Օրմանեան պատրիարքը թիւրքահայերի կողմից:

Տաճկահայոց կոտրածը նորից կըրկ-
ՏԱՃԿԱՀԱՅՔԲԸ նուեց և շատ մեծ ծաւալ ստացաւ թիւ-
1904 թ. թիւսի և Մշոյ գաւառներում, տաճիկ-
քիւրդ հրոսակախմբերն ու զօրքերը կո-

տորելով բնակիչներին՝ 17 գիւր հրդեհեցին թիթիսի շըր-
ջանում. շատ տուժեց Սասունը: Այս հարուածների ժամա-
նակ հայերը զէնքի դիմեցին և 1904 թ. մարտի 31-ին մեծ
կուր եղաւ: Սուլթանը տեսնելով որ սուսաց, Փրանսիա-
ցոց և անգլիացոց գետպաններն այդ դէքքերի մասին բա-
ացարութիւն են պահանջում, Օրմանեան պատրիարքի
միջոցով ուզեց բանակցել հայերի հետ և երբ ապրիւի
13-ին նրկու կողմից հաւաքուեցան ժամադրավայր
Գեղաշէն գիւրը, յանկարծ քրդերը թափուեցան գլխա-
ւորներին բռնելու, սակայն հայերը նախազգաց լինե-
լով սկսեցին կուռել, որի ժամանակ Շէնիկ, Սէմալ,
Դաշտակ, Զայ հրոյ ճարտկ դարձան: Ֆէլիպուզանի
կուր թիւրքերի համար շատ կորստաբեր եղաւ և
թիւրքերը փախան: Այս կոուից յետոյ 15,000 զօրք
շըջապատեց Սասունը, այրեցին Քէլի, Բէրդթաղ և
այլ գիւրերը: Հայերը շարունակեցին կոխները՝ մին-
չև անգամ օգոստոսի 4-ին թիթիսի փողոցներում ջարդ
տուին տաճիկ զօրքին: Սրանից յետոյ ընդհարում ե-
ղաւ վանում և ապա էրզումի մօտերքը և թիւրքիան
ստիպուեց մեծ պատրաստութիւններ տեսնել: Այս
պատրաստութեան վրայ հասաւ ձմեռը և հայերը դա-
դարեցին գործողութիւնները:

1905 թ. յունուար ամսին Ռուսաստա-
ՀԱՅ-ԹՈՒՐՔԱՆՈՒՄ մի շարք գործադուներ եղան, ո-
ԿԱՆ ԿՈՏՈՐԱԾ-ը ըստք քաղաքական բնաւորութիւն ու-
ներ նէին և բոլոր ազգութիւններ հաւա-
սարապէս մասնակցում էին: Դա հե-
տեանք էր Ռուսաստանի ազատարար շարժման: Այդ-

պիսի մի գործադուլ էր լինելու նաև փետրուար 18—20
սպասուելիք Բագուի գործադուլը, որ կազմակերպելու
էին բոլոր քաղաքական կուսակցութիւնները, բայց
փետր. 6-ին մի հայի ու մի թուրքի միջև ընդհարում
եղաւ և թուրքը մի քանի անգամ հայոց եկեղեցու մօտ
փորձ արեց սպանել հային, բայց ինքը սպանուեց:
Թուրքերը վերցրին սպանուածին և շըջեցրին քաղաքի
փողոցներում յորդոր կարդալով լուծել վրէժը: Շուտով
լսուեցան զէնքերի շառաչիւններ՝ թուրքերը զիսուած
ընկան փողոցներ և պատահող հային գնդակահարեցին:
Փետրուար 7-ին Բագուն պատերազմի դաշտի փոխուեց,
հայերն սկսեցին արձագանք տալ, բայց շուտով քա-
ղաք մտան շըջակայ գիւրերի թուրքերը, որոնք վեր-
ջին սիստեմի զէնքեր սուանալով սկսեցին մի չտես-
նուած կոտրած, աւեր ու սրածութիւն, սկսուեցան
հրդեհներ, որոնք մի քանի ժամում կուլ տուին միլի-
ոններ և շինութիւնների մէջ շատերը կենդանի այրուե-
ցան: Բագուեցի հայերը բողոքեցին կառավարչապետի
օգնական Մալամային և վերջապէս փետր. 9-ին ճա-
շից յետոյ կոտրածը դատարեց երկու կողմից էլ մի
քանի հարիւր զոհեր տալուց յետոյ: Բագուի հայերը
փախեցած որ ապագայում էլ կարող են նման դէքքերը
կրկնուել սկսեցին փախչել քաղաքից և շատերը բոլո-
րովին գաղթեցին:

Բագուին արձագանք տուեց Երևանը և փետր.
20-ին թուրքերն այստեղ սկսեցին կոտրած, որի ա-
ռաջն առան առաջնորդը, քաղաքագլուխին ու նահան-
գապետը: Սոյն կոտրածներից յետոյ մի քանի չարա-
միտ պարսիկներ, անցնելով Պարսկաստան ուզեցին այն-
տեղ էլ նոյն տեսակ գաղանութիւններ ստեղծել, բայց
Պարսից կառավարութիւն ձեռք առած խիստ միջոց-
ները խանգարեցին միակ փորձը, որ եղաւ մարտի 8-ին
Մէջդ քաղաքում: Բայց կովկասը նորից ալեկոծուեց
և մայիսի 9-ին խիստ կոտրած սկսուեց Նախիջևա-

նում և գիւղերից քաղաքը լցուած թուրքերն սկսեցին կողոպտել հայոց խանութները և 12-ին մայիսի Նախիջևանը բոլորովին արիւնոտուեց: Կոտորածը շուտով տարածուեց նաև շրջակայ գիւղերը՝ Զահովկ, Կարախանը բերելու և այժմ՝ 13-ին դադարեց Նախիջևանի կոտորածը, բայց գիւղերը երկար ժամանակ արեան ծովէին ներկայացնում: Այս կոտորածը որգեսրեց Երևանի թուրքերին և մայիսի 23-ին յանկարծ թուրքերը յարձակուեցան հայերի վրայ, բայց հայերն այնպիսի ընդդմութիւն ցոյց տուին, որ թուրքերը մի քանի օր վախից տներից չէին դուրս գալիս: Կոտորածը դադարեց 25-ին մայիսի թուրքերի պարտութեամբ:

Սարսափելի էր նաև Շուշու կոտորածը օգոստոյին, որտեղ նոյնպէս հայերը յաղթեցին: Առանձնապէս ֆլամուեց Վարանդա, Զանգեզուրը, և երկիրը մատնուեց սովի որ բաւական ժամանակ շարունակուեց:

Նոյեմբերի 18-ից սկսուեց Գանձակի մի քանի օր տեսող սարսափելի կոտորածը, որին հետևեցին լայնածաւալ հըրդեհներ, իսկ նոյեմբերի 22-ին սկսուեց Թիֆլիսի կոտորածը, որ երեք օր տեսեց և վերջացաւ. հայերի յաղթութեամբ: Կոտորածների ու ապագայ բարդութիւնների առաջն առնելու համար Թիֆլիսում հայ թուրքական համագումար եղաւ պետական լիազօրների մասնակցութեամբ և եղբայրառպան կոտորածները դադարեցին:

Ազգի այս ցաւալի ճգնաժամին ՓՈԽԱՐՑԱՆ կաթողիկոսը մի քանի անգամ բորկովկանուի դոքեց Պետերբուրգ կալուածների գրաւման առթիւ՝ բայց ոչ մի հետևանք չերևաց. 1905 թ. փետրուարին Կովկասի փոխարքայ նըշանակուեց կոմս Վորոնցով-Դաշկովը. Կաթողիկոսը շտապեց բողոքել փոխարքային և առանձին

պատգամաւորութիւն զրկեց Պետերբուրգ, որոնք մինիստրների խորհրդի նախագահ Վիտահէին ներկայացրին կաթողիկոսի բողոքը, իսկ մարտի 22-ին ներկայացան փոխարքային և նա խոստացաւ բաւարարութիւն տալ հայութեան բողոքին:

Բացի այս մինչև փոխարքայի Կովկաս գալը Թիֆլիս հաւաքուեցան Կովկասի 24 հայաբնակ կեղրոնների ներկայացուցիչները և առաջնորդաբանում մի շարք ժողովներով կազմեցին մի հանրագիր 20 կէտից բաղկացած, որի մէջ շեշտուածեն հետևեալ հարցերը.

ա) Տեղական ինքնավարութիւն, օրէնքներ քննող գեմստվային ժողով, բ) դատարանների վերակազմութիւն, գ) իրաւահաւասարութիւն, դ) խօսքի, ժողովների, համախմբութների, ստաչկանների և ընկերակցութիւնների ազատութիւն, գրաքննութեան վերացում. ե) լեզուի ազատութիւն, զ) անձի և ընակարանի անձեռմիելութիւն. է) դպրոցներ և պարտադիր ուսում. ը) մայրենի (հայ) լեզուն, գրականութիւնը, կրօնն ու պատմութիւնը դպրոցներում. թ) խղճի ազատութիւն. ժ) հայ եկեղեցու ինքնավարութիւն, ժա) վերադարձ հայ գլուխութերի և կալուածների. ժբ) հայ կաթոլիկ համայնքը Կովկասում. ժկ) հարկերի չափը, ժդ) բանտորական օրաժամ, միութիւններ և ընկերակցութիւններ, ժե) գիւղացի և հող. ժզ) գիւղացական հողերի յետքնաման հարցը. ժէ) գիւղացիք և արքունի հողերը. ժը) ուռաց հպատակ թիւրքանայոց իրաւահաւասարութիւնը. ժթ) հայ զինուորը Կովկասում ծառացի. ի) ամիստիա հայերի վերաբերեալ:

Մայիսի 5-ին Թիֆլիս ժամանեց Կովկասի փոխարքան, որ նոյն օր և եթ այցելեց Վանքի

մայր եկեղեցին։ Փոխարքային դիմաւորեց կաթողիկոսի կողմից առանձին պատգամաւորութիւն, իսկ յունիսին Թիֆլիս հասաւ վեհ։ Կաթողիկոսը և 25-ին յունիսի տեսնուեցաւ փոխարքայի հետ, ու կրկնեց իր ինդիրը կալուածների, դպրոցների և արքայի հարցերի վերաբերեալ։ Փոխարքան խոստացաւ կատարել և 1905 թ. օգոստոսի 1-ին հրովարտակով վերադարձրին եկեղեցական և գպրոցական կալուածները։ Սոյն հրովարտակի հիման վրայ շուտով վերաբացուեցան հայոց եկեղ.-ծբխական դպրոցները 1874 թ. ծրագրով։

Ռուս-Եապօնական պատերազմից յետոյ 1905 հոկտ. 17-ին բարձրագոյն հրովարտակով սահմանափակ սահմանադրութիւն շնորհուեց Ռուսաստանին և հաստատուեց նաև ներկայացուցչական ժողով—Պետական Դումա։

Ռուսաստանի ազատարար շարժկրթական 0-ի ժամանակակից մէկն էլ այն էր, որ կաթողիկոսն ազգային եկեղեցական հաստատութիւնները կարգի բերելու համար նախ մի մասնակիումը կազմել տուեց էջմիածնի միաբաններից ու ճեմարանի ուսուցիչներից, իսկ մայիսի 10-ին տուած առաջին աշխարհաբար կոնդակով՝ հրամայեց օգոստոսի 15-ին հրաւիրել մի ժողով՝ լեղոնական ժողով, որի նպատակն էր լինելու մշակել հաստատուն կանոնադրութիւն թեմակալ առաջնորդների, յաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների ընտրութեանց իրաւունքը։ Յունիսի 7-ին լոյս տեսաւ

երկրորդ աշխարհաբար կոնդակը որպէս հրահանգ, որի մէջ ասուած է որ մօտ 20000 մարդ մի պատգամաւոր է ընտրում, որով կեղրոնական ժողովն ունենալու է 60 պատգամաւոր և լինելու է «սուսահայոց եկեղեցական գործերի կարգագրիչ և տնօրէն, կարող է իր քննութեան ենթարկել և որոշումներ տալ սսւահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմաբ»։ Իսկ առաջին նստաշրջանի համար իբրև անյետաձգելի կարևորութիւն ունեցող խնդիրներ լինելու ևն «գպրոցական, տնտեսական գործերը և թեմական ժողովները կարգաւորելու հարցերը»։

Բնական է որ սոյն երկու կոնդակները թիւրիմացութեան տեղիք կտային, որովհետեւ թէ Ռուսաստանում, թէ Պարակաստանում և թէ Տաճկաստանում, հնում թէ նորում բոլոր եկեղեցական գործերի կարգադրիչ և քննիչ եղել են նոգենրականութիւնն ու աշխարհականները, մինչդեռ սոյն կոնդակները միանգամայն զրկում էին նոգենրականութեան եկեղեցական գործերը քննելու ու կարգադրելու իրաւունքից։ Այս հիման վրայ 1906 թ. յունիսի 15-ին էջմիածնի միաբանութիւնը մի ժողով գումարելով բողոք ներկայացրեց կաթողիկոսին 14 ստորագրութեամբ, որով բաղոքում էին որ եկեղեցական գործերը պիտի կարգադրի զուտ աշխարհական ժողովը և դժուն էին՝ որ կաթողիկոսը չէր խսրդակցել նըանց հետ, այլ միայնակ էր վճռել հարցը։ Յունիսի 30-ին ստուած կոնդակով որոշեց

որ և հոգեորականներն ու կանայքը մասնակցեն ընտրութեան:

Ժողովն առաջին նիստ արեց օգոստ. 15-ին, իսկ 16-ին բացուեց պաշտօնապէս էջմիածնի նորակառոյց հիւանդանոցում կաթողիկոսի ճառով, որ յիշեցրեց «հեռու մնալ չափազանցութենէն, ժամանակը վատ է, հարկաւոր է խոհեմութիւն, որչափ կարելի է այնչափ խօսեցէք յանդուգն գործեր չսկսիք...» Ժողովի նախագահ ընտրուեց Սիմէօն Զաւարեանը:

Կեդրոնական ժողովը հակառակ իրեն տուած հրահանգների իրեն յայտարարեց սահմանադիր և դուրս եկաւ իր իրաւասութեան սահմաններից ուստի և օգոստոսի 30-ին էջմիածնի գաւառապետը փակելով ժողովը համաձայն կովկասի փոխարքայի կարգադրութեան՝ պատգամաւորներից ստորագրութիւն վերցրեց 24 ժամուայ ընթացքում հեռանալ էջմիածնից: Միաժամանակ հետևեց բարձրագոյն նկատողութիւն յանուն կաթողիկոսի այլական ժողով գումարելու համար:

Կեդրոնական ժողովի փակումից յետոյ կառավարութիւնը հայոց գպրոցների ծրագիր մշակելու առաջարկն արեց կաթողիկոսին և ծըրագիր մշակելու համար որոշուեցաւ կազմել մի յանձնաժողով, որին մասնակցէին կառավարութեան կողմից ընտրուած հայ երեք ներկայացրիչները: Կաթողիկոսն իր կողմից երեք ներկայացրիչն նշանակեց, որից երկուսը աշխարհական և մէկը հոգեորական: Շատ չանցած՝ 1907

թ. հոկտեմբերի 29-ին վախճանուեց Մկրտիչ Ա. կաթողիկոսը և տեղապահ նշանակուեց Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը:

Մինչ այս, գպրոցական յանձնաժողովը, որ նիստեր էր անում փոխարքայի դիւանատանը թիֆլիսում, երկվելկուեց և համաձայնութեան չգալով կաթողիկոսի ներկայացուցիչները հեռացան, իսկ յանձնախմբի միւս անդամները մշակեցին մի ծրագիր:

Ուստաստանի ազատարար շարգարանը ՍՍՍՀԱՍՏԱՆ ժումը ազգեց նաև հարկան պետութիւնի թիւրքից թիւնների վրայ և մեծ շարժում սկսուեց Պարսկաստանում, այնպէս որ 1906 թ. Շահը ստիպուեց Մէջլիս գումարել ու սահմանադրութիւն յայտարարել: Սակայն Շահը շուտով գրժեց իր խօսքը և ետ վերցրեց սահմանադրութիւնը, ուստի և շարժումը յունիսին ընդլայնուեց և ժողովուրդը 1909 թ. գահնկեց անելով Մահմէդ Ալի շահին, թագաւոր հրատարակեց նրա 10 տարեկան որդի Ահմէդ Միրզային:

Մեծ շարժում սկսուեց նաև Թիւրքիայում շնորհիւ երիտասարդ թիւրքերի: Դեռ 1876 թ. գեկանեմբերի 11-ին, երբ եւրոպական պետութեանց ներկայացուցիչներն ուզում էին դեսպանաժողովով ճնշուած ազգերի համար բարենորոգումներ մտցնել, Սուլթանը մի սահմանադրութիւն հրատարակեց, որ ծրագրել էր Միդատ փաշան, այն է. Պատասխանատու նախարարա-

կան խորհուրդը, Ընդհանուր ժողով երկու խորհուրդարանից, Ծերակոյտ և պատգամաւորական ժողով, մամուլի, ժողովների և այլ ազատութիւններ, անփոփոխելի դատաւորներ, նախնական կրթութիւնը պարտաւորեցուցիչ և այլն։ Պարլամենտը բացուեց, բայց հակազդեցիկ քաղաքականութիւնը յաղթելով 1877 թ. փետրուարին Միդհատն իր մարդոց ու ծրագիրների հետ անկաման դատապարտուեց։

Երիտասարդ թիւրքերն անցան եւրոպա և այնտեղ կենդրոնացան։

1908 թ. յուլիսին սկսուեց նրանց շարժումը Մակեդոնիայում և դա այնպիսի սպառնական դիրք ընդունեց, որ Սուլթան Համբիլը յուլիսի 11-ին տուած իրադէով սահմանադրութիւն յայտարարեց, բայց որովհետև նորից ուզում էր վերականգնել հին ռէժիմը, երիտասարդ թիւրքիան նրան գահըկեց արեց և թագաւոր հրատարակեց Մահմէտ Ե.-ին։

Այդ բանը շատ նպաստաւոր էր ՀԱՅ կենտրոն հայերի համար, որոնք օգտուեցան ազատութիւնով—բանտարկեալներըն ազատուեցան, մամուլը շունչ քաշեց և որ գլխաւորն է ճանապարհները բացուեցան։ Օրմանեան Մաղաքիա պատրիարքը, որ 12 տարի աշխատել էր հայերին ջարդերից ազատ պահելու համար մասամբ գոնէ համակերպուել նախկին ռէժիմին, հրաժարական տուեց, բայց հայերից մի խմբակ զանազան ցոյցեր կազմակերպեց նրա-

դէմ։ Պատրիարքական տեղապահ ընտրուեց Եղիշէ եպ. Դուրեանը, որ յուլիսի 16-ի Խառն ժողովի նիստի համաձայն շրջաբերական հրատարակեց յուլիսի 19-ին, որով պատուիրում էր երեսփոխանական ժողովի ընտրութեան համար նախապատրաստութիւն տեսնել։ Ժողովը ունենալու է 140 պատգամաւոր, որոնցից 80 հոգի կ. Պօլսից, 20 եկեղեցական և 40 էլ գաւառականներկայացուցիչներ։ Շուտով ժողովը բացուեց։

Շատ չ'անցած կ. Պօլսի եկաւ նախկին պատրիարք Մատթէոս արքեպ. Իզմիրլեանը, որ անմիջապէս կ. Պօլսի պատրիարք ընտրուեց, իսկ 1908 թ. նոյեմբերի 1-ին Էջմիածնի Ազգային ժողովը կաթողիկոսական թեկնածուները ընտրեց Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանին և Եղիշէ եպ. Դուրեանին, որոնցից առաջինը հաստատուեց կաթողիկոս և 1909 յունիսին ժամանեց Էջմիածն։



վելութեա հայութեա մաքնազգական և ի դ
առաջ ա-ծ դիմու ու ուժագործ ու ա է է է է
-ոյժ մաքնազգական պահանձ գույք պարան
զ և նայդասար խց ա-ծ է է դիմու ուժագործ
դաւան մաքնազգ պարտ մաքնազգարան
-աւան պարտ ուժագործ մաքնազգարան
դրան 08 դիմու ու ա մաքնազգարան 04 է է այս
-առաջ ու 04 է է մաքնազգարան 02 դիմու ու
-ընտական պարտ խու ու ուժագործ մաք
-ար մաքնազգ պարտ դիմու ու հայու է առաջ
ու գույքայիշեր պարան ուժեան Ս գույքա
ու ուղարկ զայտարար դիմու ու ա մաքնազգար
-աւ դիմու է մաքնազգարան 04 է է ա մաքնազ
-գա ու ուղարկ զայտարար դիմու ու ա մաքնազգար
-աւ ա մաքնազգարան 04 է է ա մաքնազգարան

Հայաստակի Սգգային գրադարան



NL0422488

1.	Հանգիստում՝ 600 տուն (աղառուած)	.	.	30 կ.
2.	Բառարան հայ կենսագրութեանց պրակ ա.			
	պատկերազարդ	.	.	70 կ.
3.	Խաչատուր Արովեան (պատկերով)	.	.	5 կ.
4.	Հայ վաճառականութիւնը Ռուսիայում	.	.	50 կ.
5.	Նախապատմական կեանք (13 պատկերով)	.	.	15 կ.
6.	Աւբարտու և Հայերի Հայրենիքը (Բարտէզով)	.	.	10 կ.
7.	Միքոյէլ Նալբանդիան (պատկերով)	.	.	10 կ.
8.	Այրենաբան և ընթերցարան	.	.	10 կ.
9.	Երգարան (85 երգ)	.	.	20 կ.
10.	Շամբիրամի Աւլունքը	.	.	5 կ.
11.	Երկու Հեքիաթ	.	.	5 կ.
12.	Համաօտ Հայոց պատմութիւն Գ. տիտ. (պատ.)	.	.	50 կ.

Ա Ա Թ Ի Ա

1. Թուս-Հայ Բառարան
2. Հայուս Բառարան
3. Հայերէնի Բառարան
4. Բառարան Հայ կենսագրութեանց
5. Հայաստանի քարտէզ
6. Կովկասահայ մամուլը (տպւում է «Բանասէրում»):

Հանցիս Տիֆլիսъ, Панасевича ул. д № 1. Айку
Теръ-Аствадатурянцу կոմ Tiflis (Caucase-Rusie) Rue
Panasewitcha № 1 Aik Ter-Astwazatourian. կոմ «Գուտտեն-
րէրդ» գրավաճառանց:

ԱՆ 8, 9, 10, 11 գրքերի պահեստը գտնուում է
Հրատարակչի մօտ և Զ. Գրիգորեանցի գրախանութում: